





ԷՋՄԻԱԾԻՆ

1979
Ե

1946



Լ Ձ
Տ Ա Ր Ի




ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Արմ. ի. ս.


1979



Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ւ

Տ. Տ. Վ Ա Զ Գ Ե Ն Ի Ա Ռ Ա Զ Ն Ո Յ

Ի Ե Լ Ա Փ Ա Ռ Ե Ի Ս Ր Բ Ա Զ Ն Ա Գ Ո Յ Ն Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Ո Մ Ի
Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Ց



Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Խոր հուզումով հաղորդում ենք, թե ս. Հռիփսիմե վանքի պարսպի տակ անցյալ տարի գտնված հնադարյան մատուռ—դամբարանում կատարվող նոր պեղումները հայտնաբերել են գերեզմաններ, անշուններովը գլխատված մարմինների:


Ծատ հավանական է, որ գտնված անշունները սրբոց Հռիփսիմյանց կույսերի խմբից նահատակվածների անշուններն են, որոնք, ըստ մեր պատմիչների, նահատակությունից հետո, ամփոփված էին մի դամբարանում: Իսկ 618 թվականին Կոմիտաս կաթողիկոս կառուցել էր ս. Հռիփսիմեի տաճարը այնտեղ տեղափոխելով Հռիփսիմե կույսի անշունները:

Սույն նորագույն հայտնաբերումը մի նոր նյութական վկայություն է Հայոց քրիստոնեական հավատքի պատմական վավերականության: Պեղումները շարունակվում են հնագետ, ակադեմիկոս Բարկեն Առաքելյանի ղեկավարության ներքո:

Խնդրում ենք սույն բարի լուրը Մայր Աթոռիս անունով ավետել հանրության հայ և օտար մամուլի միջոցով:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Անցյալ տարի ս. Հոփսիմե վանքի հյուսիս-արևելյան պարսպի մոտ կատարվող բարեկարգման աշխատանքների առթիվ հայտնաբերվել էր վաղ քրիստոնեական շրջանի բազիլիկ տիպի փոքր մի եկեղեցի-մատուռ, որը Դ—Ե դարերի կառուցվածք պետք է լինի: Այս տարի նույն մատուռն մեջ կատարվող պեղումները մի ամիս առաջ հայտնաբերեցին նաև մի շարք գերեզմաններ՝ մարմինների աճյուններով:

Առ այսօր պեղված է միայն դամբարանի մի մասը: Հետագայում պեղումները շարունակվելու են, որպեսզի ամբողջապես քացվի հնադարյան հուշարձանը:

Պեղումների հնագիտական եզրակացությունները արդեն իսկ ցույց են տալիս, որ ս. Հոփսիմե տաճարի շուրջը եղել է Գ—Դ դարերի դամբարանադաշտ, որտեղ թաղվել են ս. Հոփսիմեն և իր 32 ուղեկիցները: Ոստի քացված աճյունների թվում պետք է լինեն սուրբ Հոփսիմյանց կույսերի խմբից նահատակվածների աճյունները, որոնք, ըստ մեր պատմիչների և մանավանդ Դ դարի պատմիչ Ագաթանգեղոսի «Հայոց պատմություն» աշխատության վկայության, ամփոփված էին իրար կողքի՝ մի դամբարանի մեջ:

Ինչպես հայտնի է պատմությունից, սուրբ Գրիգոր Լուսավորիչը, Արտաշատի Խորվիրապից դուրս գալուց հետո, հավաքեց Աստուծո վկաների մարմինները, ամփոփեց դրանք նահատակության վայրում և դրանց վրա կառուցեց հանգստարաններ և մատուռներ, գեղեցկադիր և հարմար հիմքերի վրա, մեկը՝ քաղաքի հյուսիս-արևելյան կողմում, որտեղ նահատակվել էր ս. Հոփսիմեն իր ընկերներով, մյուսը՝ քաղաքի հարավային կողմում, որտեղ նահատակվեց ս. Գայանեն իր ընկերներով:

Կույսերի նահատակությունը և վկայարանների շինությունը, ըստ Օր-

մանչյան սրբազանի հաշվումների, կատարվել է 301 թվականի նույնքեր ամսին:

Ս. Գրիգոր Լուսավորիչը մասնավոր հոգածությամբ և Հռիփսիմեի աճյունն ամփոփեց մի դագաղի մեջ, այն կնքեց հայրապետական իր կնիքով և առանձին թաղեց մյուսների կողքին դամբարանում:

Ե դարի սկզբներին և Հռիփսիմեի Լուսավորչաշեն դամբարան-վկայարանը ուզեց նորոգել և Սահակ Պարթև հայրապետը: Նա բանալ տվեց և Կույսի դամբարանը, դուրս հանեց Հռիփսիմեի աճյունն ամփոփող դագաղը, բայց չհամարձակվեց բանալ այն և իր կնիքն ավելացնելով՝ դագաղը նորից զետեղեց դամբարան-վկայարանում:

Յ15 թվականին Կոմիտաս եպիսկոպոսը (այսպես կաթողիկոս), որ լուսարարապետն էր և Հռիփսիմե վանքի, ցանկացավ նույնպես վերանորոգություններ կատարել Սահակաշեն դամբարանի վրա, որը, ըստ ականատես պատմիչ Սեբեոս եպիսկոպոսի վկայության, «զի կարի ցած և մթին էր շինուածն»:

Վերանորոգության ժամանակ և Հռիփսիմեի դագաղը դուրս հանվեց: Կոմիտաս կաթողիկոսը ևս չբացեց և Հռիփսիմեի աճյուններն ամփոփող դագաղը, ինքը ևս ավելացրեց իր կնիքը և այդ աճյունների վրա կառուցեց նոր ու փառավոր մի տաճար, որ տարիների ընթացքում իր սրտի հին բաղձանքն էր եղել: «Ժինեաց եկեղեցին և գերանելին եթող ի բացեայ վասն գիշութեան որմոյն մինչև ի ցամաքել կրոյն», այսինքն, դագաղը դրսում պահեց, մինչև եկեղեցու պատերի չորանալը, այսպես ամփոփեց ներսում:

Նոր տաճարի կառուցումն ավարտվեց Յ18 թվականին, և Կոմիտաս հայրապետը մեծ հանդիսությամբ կատարեց տաճարի նավակատիքը և օծումը:

Կոմիտասաշեն այս տաճարը, ըստ Սեբեոսի վկայության, եղավ «հրաշատես, վայելուչ, նազելի ու պայծառ» մի կառուցվածք, հայ ճարտարապետության գոհար հարսը, որ կանգուն է մինչև այսօր իբրև հայ հավատավոր հոգու աղոթք՝ դեպի երկինք իր խոյանքի մեջ արձանացած:

Մեր օրերին էլ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի նախաձեռնությամբ ամբողջապես վերանորոգվեց և բարեզարդվեց և Հռիփսիմեի տաճարը ու նրա շրջափակը, ստանալով իր հին, հարազատ տեսքը:

Կոմիտաս հայրապետը և Հռիփսիմե տաճարի կառուցման առթիվ գրեց նաև նահատակ կույսերի հիշատակին նվիրված «Անձինք նուիրեայք սիրոյն Քրիստոսի» հուզաթաթալ շարականը:

Նահատակվածների մարմինները թաղված են արևելքից դեպի արևմուտք պատկած դիրքով, ձեռքերը ծալած իրենց կրծքերի վրա, ինչ որ մի ապացույց ևս է, որ թաղվածները քրիստոնյաներ են եղել:

Բացված դամբարանները տարբերվում են նաև հեթանոսական գերեզմաններից, որովհետև թաղված մարմինների կողքին չկա որևէ զարդ կամ այլ առարկա, ինչ որ սովորություն էր հեթանոսների մոտ, թաղմանական արարողությունների ժամանակ:

Ս. Հռիփսիմե վանքում պեղումների աշխատանքները ղեկավարում է հնագետ Ռաֆֆի Թորոսյանը, որպես Էջմիածին քաղաքի հնությունների պահպանության ղեկավար, վերին հսկողության ներքո հնագետ պրոֆ. Բարկեն Առաքելյանի:

Այս սրբազան մասունքների նորագույն հայտնաբերումը հանդիսանում է հայրենի սրբազան հողի վրա ոչ միայն և Հռիփսիմե կույսերի նահատակության պայծառ ապացույցը, այլ նաև «նյութական վկայությունը հայոց

քրիստոնեական հավատքի վավերականությանն», ինչպես արդար կերպով հաստատում է նաև Ամենայն Հայոց Հայրապետը, հայ եկեղեցու նվիրապետական Աթոռներին և մեր բոլոր թեմերին հաղորդած Իր ապրիլ 12 թվակիր պաշտոնական ծանուցման մեջ, մի վկայություն, որը կոչված է միաժամանակ առավել ամրապնդելու մեր ժողովրդի քրիստոնեական դարավոր հավատքը և ստուգությունը հայ եկեղեցու առաքելական ծագման:

Ս. Հոփսիսին վանքում կատարված պեղումները և սուրբ աճյունների հայտնաբերումը հոգևոր ցնծության ու բարեպաշտության վերանորոգման աղբյուր պիտի հանդիսանան համայն մեր ժողովրդի համար, որ ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ

Ս. Էջմիածին,
30 ապրիլի 1979 թ.





ԱՍՏՎԱԾԱԾՆՁԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ*

13. Ա Հ Ա Ր Ո Ն

Երեց եղբայրը Մովսեսի և առաջին քահանայապետը Հին Կտակարանի: Աջակիցը և խոսնակը եղավ Մովսեսին մինչև իր մահը: Այս աջակցությունը խորհրդանշական ձևի տակ ի հայտ կուգա, երբ Մովսես լեռան վրա կադրթե բազկատարած, վարը պատերազմող քանակի հաջողության համար: Ահարոն անոր հոգևոր ձեռքերը վեր բռնողներեն մեկն է (Ելք. Ժ 10—12): Ինք և իր զավակները ժառանգականորեն ստացան քահանայությունը Աստուծոմե, Մովսեսի կողմն հատուկ օրհնությամբ, օծումով և քահանայական զգեստավորմամբ:

Կրավորական է Ահարոնի նկարագիրը: Որքան գործակից է լավ և վեճ նպատակներու, նույնքան հակամետ է գործիք դառնալու չար ույծերու ձեռքը, գրեթե բոլոր քահանաներու պես: Իր մասին չորս գլխավոր միջադեպներ պատմված են ս. Գրքի մեջ. երկուքը դրական և երկուքը ժխտական, որոնք զիրար կհերքեն և մեջտեղ կըմնա չեզոք Ահարոնը, որ կարբանա ոչ այնքան իր անձնական գործերով, որքան ծիսական սրբագործությամբ:

Դրական դրվագներեն առաջինը այն է, որ վեճ եղավ թե ինչո՞ւ Ահարոն պետք է լինի քահանայապետ և ոչ ուրիշ մը: Աստուծո հրամանով Իսրայելի տասներկու ցեղերեն յուրաքանչյուրին անուևով գավազան

մը դրվեցավ անապատի մեջ կառուցված վրանե սրբարանին մեջ, որ կկոչվեր «վկայության խորան»: ասոնց մեջ էր նաև Ահարոնի գավազանը: Որուն գավազանը որ ծաղկեր, ան պիտի ըլլար քահանայապետ: Հաջորդ օրը երբ խորան մտան, տեսան որ «Ահարոնի գավազանը դալարած էր, շառավիղ արձակած, ծաղկած և պտուղ տված էր» (Թիվք. ԺԷ 1—8): Երկրորդ. ժողովորդը ապստամբեցավ Մովսեսի և Ահարոնի դեմ: Աստված գայրացավ և աստակիչ ժանտախտ դրկեց ժողովորդին մեջ: Մովսես անմիջապես հրամայեց Ահարոնին. «Առ բուրվառդ, մեջը կրակ դիր սեղանեն, վրան խունկ լեցուր, և շուտով մտիր ժողովորդին մեջ քավելու համար» անոնց մեղքը: Եվ արդարև. Ահարոն «եկավ ու կեցավ ողջերուն և մեռելներուն միջև և կանգ առավ աստակումը» (Թիվք. ԺԶ 43—48):

Իսկ ժխտականներեն՝ հանրածանոթ է իր տկարությունը, որ չդիմանալով ժողովորդի ճնշումին՝ տեղի տվավ և անոնց համար Ոսկե Հորթը շինեց և երկրպագություն ըրին անոր, այսպես կամակատար գործիք դառնալով Աստվածաշունչի մեջ ներկայացված մեծագույն մեղքերեն մեկին: Երկրորդ՝ միացավ իր քրոջ Մարիամին, որ կնախանձեր Մովսեսի, անոր ժողովորդականությանը և բարձր դիրքին համար ու բամբասեցին Մովսեսը և ուզեցին կոտորել անոր վարկը ժողովորդի աչքին: Երկու պարագային ալ թեթև պատիժներով ազատեցավ Ահարոն, պարզապես չարությանց նախաձեռնողը ինք եղած չըլլալուն, և գրեթե հակամայս

* Ծարուճակված «Էջմիածին» ամսագրի 1977 թվականի № № Է—ԺԱ-ից, 1978 թվականի № № Ա—Գ-ից և 1979 թվականի № № Բ-ից և Դ-ից:

համակերպած լինելուն համար: Արծանի չեղավ Ավետչաց երկիր մտնելու: Մեռավ 130 տարեկանին: Լատինք՝ հուլիս 1-ին կհիշատակեն զայն:

14. ԵՂԻԱԶԱՐ

Որդի և հաջորդը Ահարոնին իբրև երկրորդ քահանայապետը: Իր մասին ակնբախ դրվագներ չկան ս. Գրքին մեջ. հաւարակ քահանայապետն է ան, իր ընթացիկ գործերով գրադված: Սովորական պարտաճանաչ քահանան է որ կքալե իրեն համար սահմանված ճամբայեն առանց աչ կամ ձախ շեղելու: Գործակցեցավ Հեաուին, որուն հետ միասին մտավ Ավետչաց երկիրը, գոր քածնեցին Իսրայելի տասներկու ցեղերուն մեջ: Հույներ կհիշատակեն զայն իր որդիին և հաջորդին՝ Փենեես քահանայապետին հետ սեպտ. 2-ին: Լատինք՝ չունին: Մենք՝ նախահարց հետ:

15. ՀԵՍՈՒ

Գործակիցը և հաջորդը Մովսեսին, իբրև առաջնորդը Իսրայելի: Իր մասին ըսված է. «Մարդ մը որուն մեջ (Աստուծո) Հոգին կա»: Մովսես «իր ձեռքը անոր վրա դրավ» ու իր հաջորդը կարգեց զայն, տալով «իր փառքեն» մաս մը անոր: Հեաու Մովսեսի գորապետն էր անապատներու պատերազմներու ընթացքին: Ինքն է որ առաջնորդեց Իսրայելը խոտաւցյալ երկիրը, գրավեց, զայն, քածնեց երկիրը Իսրայելի տասներկու ցեղերու մեջ և տեղավորեց զանոնք իրենց հողերուն վրա:

Հիսուսին նմանակն էր թե՛ անունով և թե՛ գործով: Հիսուս անունը հունական ձևն է եբրայական ՀԵՍՈՒ կամ ԵՇՈՒ անունին: Ամբողջ գիրք մը հատկացված է Հեաուի գործունեության և հաղթանակներուն Աստվածաշունչին մեջ, և կկրե իր անունը:

Աստվածաշունչի ամենեն առաքինի և կորովի դեմքերեն մեկն է Հեաու: Նման է Հովսեփին, իր կատարելությամբ և Աստուծո հանդեպ ցույց տված անաչալը հավատարմությամբ: Երբ վերջին պատվերները կուտա իր ժողովուրդին և կհորդորե զանոնք մշտապես հավատարիմ մնալ Աստուծո, կեզրակացնե. «Ես և իմ տունս Տեքր պիտի պաշտենք» դուք ինչ ալ ընեք:

Ապրեցավ 110 տարի: Հույնք և լատինք կհիշատակեն զայն սեպտ. 1-ին: Մենք՝ նախահարց հետ:

Գլուխ չորրորդ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

Հեաուի հաջորդները, որոնք կանչվեցան կատարելու Իսրայելի ժողովուրդը, կոչվեցան ԴԱՏԱՎՈՐՆԵՐ. որովհետև իրենց գլխավոր պաշտոնը այդ իսկ էր. լսել և կարգադրել իրենց ժողովուրդի դատերը և ամեն տեսակ խնդիրները: Ասոնց պատմության և գործունեության հատկացված է Աստվածաշունչի յոթներորդ գիրքը, որ կկրե անոնց անունը, ԳԻՐՔ ԴԱՏԱՎՈՐԱՑ: Ասոնցմե հիշված են 15 անուններ, որոնք դատեցին և կատարեցին Իսրայելը 1400—1100 թվականներուն, նախ քան Քրիստոս:

Երբ իսրայելացիք տեղավորվեցան Քանանու երկրին մեջ, բնականորեն սկսան հարաբերություններ մշակել բնիկներու հետ. «Անոնց աղջիկները իրենց կնոջան առին, և իրենց աղջիկները անոնց տղաքներուն տվին. և գործեցին ս. գրական չափանիշներով ծանրագույն մեղքը. «պաշտեցին անոնց աստվածները» (Դատ. Գ 6): Այս հիմարությունը՝ ըրին իսրայելացիներ, որովհետև հեթանոսական կրոնները ավելի դյուրին կիրարկելի էին. բարոյական բարձր պահանջներ չունեին. ընդհակառակը իրենց անբարո սովորություններով ավելի կխոսեին մարդկային մարմնական բնագոյներուն և կենդանական բնության:

Այս շեղումներով իսրայելից բնականաբար քեկանած կլլային պայմանները այն ՌԻՒՏԻՆ, գոր կնքած էին իրենց Աստուծուն հետ: Ու այս իսկ պատճառով Աստուծո բարկությունը կորոքեքեր անոնց այս անհավատարմության վրա և կդադրեք անոնց «Տեք» ըլլալե: Ու առանց Աստուծո Տիրության այս ժողովուրդը դյուրին որս կըլլար դրացի վայրագ ցեղերուն, որոնք համեմատաբար ավելի զորավոր էին իրենցմե, և որոնցմե ոմանք ունեին մինչև իսկ «երկաթե կառքեր», որոնք կհամապատասխանեին այսօրվան «թանք»երուն:

Աստուծմե հեռանալե հետո երբ թշնամիի: ձեռքը կհնցային և կկեղեքվեին, այն ատեն իրենց միտքը կուգար իրենց հզոր Աստվածը. «կաղաղակեին» Անոր. ու Աստված «փրկիչ» մը կհաներ իրենց մեջեն, որուն վրա «Աստուծո Հոգին կխաղար». գրուիք կանցներ իր ժողովուրդին, և պատերազմով կազատարեք իր երկիրը օտար ոտնձգություններեն: Երկիրը որոշ ատեն մը խաղաղություն կվայեր, ու այս ազատարարը «Կդատեր Իսրայելը» մինչև իր մահը: Այս ազատարարներն են «դատավոր» կոչվածները: Ու ԴԱՏԱՎՈՐԱՑ ԳԻՐՔԸ իր

մեջ կրովանդակե այս բարոյական մակընթացություններու և տեղատվություններու պատմությունը:

Դատավորներեն չորսը միայն անցած են տոնացուցի, որոնք արդարև կկազմեն նշանավորագույնները գրքին մեջ հիշված 15 անուններուն: Այս չորսը հիշված են նաև Եբրայեցի թուղթի ԺԱ գլուխին մեջ թըվված հավատքի նշանավոր հերոսներուն մեջ: Մենք առաջ պիտի բերենք զանոնք ոչ թե տոնացուցի՝ այլ Դատավորաց գրքի մեջ հիշված կարգով:

16. ԲԱՐԱԿ ✓

Իրականին մեջ դատավոր մը չէ Բարակ. այլ՝ զորավարը օրվան դատավորին, որ կԻՆ մըն է, ԴԵՔՈՎՐԱ անունով: «Նա կդատեր Իսրայելը այն ժամանակ... և Իսրայելի որդիները անոր կերթային դատաստանի համար» (Դատ. Դ. 4—5): Այս կինը իբրև «մարգարետոհի» և իբրև խորպետ հայրենասեր ու կրոնասեր անձնավորություն մը, ամեն իրավունք ուներ տոնացուցի անցնելու. բայց չէ անցած, հավանաբար այն պարզ պատճառով. որ ցարդ հիշվածները և ասկե հետո հիշվելիքները համախմբված են «ՆԱԽԱՀԱՅՐԵՐ» մակդիրին տակ, որոնց մնա չէր կրնար կազմել ինք բնականաբար, ու եկեղեցին մեզի անձանոք պատճառներով մոռցած է «ՆԱԽԱՀԱՅՐԵՐ» անվան ներքև հիշատակություն մըն ալ տնօրինել իր տոնացուցին մեջ:

Բարակը գործի գլուխը կանչողը, ներշնչողը և առաջնորդողը Դեբովրան է. ու Բարակի պատասխանին մեջ է իր տկարությունը և կախումը այս կնոջմե. «Եթե ինձի հետ պատերազմի գաս, կու գամ. այլապես՝ չեմ գար»: Դեբովրա համաձայնեցավ ընկերանալ Բարակին. «Բայց գիտցած եղի որ կնոջ ձեռքով» պիտի կնքվի պատերազմի ճակատագիրը, ըսավ անոր: Արդարև այդպես ալ եղավ: Երբ Բարակ Թափոր լեռնեն հանկարծ ինկավ իր տասը հազար զորքով թշնամիին վրա, որ ուներ «իննհարյուր երկաթեղեն կառքեր», Աստված «զարհուրեցուց» թշնամին, որուն զորավարը, Միաբաբ, կառքեն իջավ և սկսավ փախչիլ հետիտուն և ապաստանեցավ վրանին ներքև Հայել անուն կնոջ մը, որ զինք սպաննեց վրանի ցիցով...: Դեբովրա, որ զուրկ չէր նաև բանաստեղծական շնորհե, հորինեց հոյակապ երգ մը, ուր պատկերալից կերպով կներկայացվի ազատագրական այս պայքարը (Դատ. Ե գլուխ):

Բարակին գլխավոր առաքինությունը կը

կայանա ընդառաջելուն մեջ Տիրոջ հոգիով լեցված կնոջ մը ձայնի՝ որուն մեջ կրցավ լսել Աստուծո և իր ժողովուրդին ձայնը, և ի պատ դնելե հետո իր մարտական կարողությունը իր ժողովուրդի ազատագրման և Աստուծո փառքին, անշշուկ բաշվեցավ հրապարակե իր անհատական կյանքը շարունակելու համար իբրև սովորական մահկանացու:

17. ԳԵԴԵՈՆ ✓

Տիրական դեմքն է Դատավորաց շրջանին: Իրեն ընծայված են երեք գլուխներ— Զ, Է, Ը—Դատավորաց գրքին:

Այս անգամ Իսրայել ինկած է տիրակալության ներքև մադիամացի կոչված վաշկատուն ժողովուրդի մը, որ մարախի պես կուտե ու կավերե երկիրը: Աստուծո հրեշտակը երբ կերևի Գեդեոնին, անոր հանձնելու համար ազատագրական սուրբ գործը, ան զբաղած է իր արտին մեջ ցորեն ձեծելով, որպեսզի նախ քան մադիամացից գալը գոնե քչիկ մը ուտելիք ապահոված ըլլա իր ընտանիքին: Հրեշտակը կողջուկե գայն. «Տեր ընդ քեզ, հզոր զորությամբ» բանաձևով: Գեդեոնին պատասխանը դառն է և իրապաշտ.

— Եթե Տերը մեզի հետ եղած ըլլար, ուրկե՞ պիտի գային այս չարիքները մեր գլխուն:

— Գնա քու այդ զորությամբդ և իրկե իսրայելացիները մադիամացիներեն. ես եմ որ կղրկեմ քեզ. կհաստատե հրեշտակը:

— Խնդրեմ, Տեր, ես ինչպե՞ս կրնամ փրկել Իսրայելը, երբ իմ գերդաստանս տկարագույնն է Մանասեի ցեղին մեջ, ու ես՝ կրտսերագույնը ընտանիքիս:

— Ես քեզի հետ պիտի ըլլամ, և դուն մադիամացիները պիտի զարնես մեկ մարդու պես, պատասխանեց խոսակիցը:

— Եթե իրապես շնորհ գտա քու առջև պիտի խնդրեմ, որ նշան մը տաս ինձի, թե արդարև Տիրոջ կողմն զրկված ես: Խնդրեմ սպասե արստեղ, մի՞նչն երթամ և իմ ընծաս բերեմ քեզի, ըսավ Գեդեոն:

— Կսպասեմ քեզի, ըսավ հրեշտակը: Երբ Գեդեոն վերադարձավ միսի և բաղարջ հացի իր նվերներով, հրեշտակը ըսավ:

— Դի ի այդ բերածդ սա քարին վրա. ու ձեռքի գավազակով հավալ ընծային, որ կրակ առավ ու այրեցավ: Այդ կնշանակեր որ Աստված ընդունած էր Գեդեոնի նվերը, ու հրեշտակը աներևութացավ:

Գեդեոն տեղվույն վրա Աստուծո սեղան շինեց ու գայն կոչեց «Տիրոջ խաղաղու-

թյունը» որովհետև իր ժամանակին այն գաղափարը կտիրեր, որ եթե մեկը գերբնական էակ մը տեսած ըլլար, անպատճառ պիտի մեռներ. ինք տեսած էր ու չէր մեռած:

Իր փրկարար գործունեությունը սկսավ Գեղեոն նույն գիշերն իսկ: Քանից իր քաղաքի Բահադի սեղանը: Հաջորդ օրը երբ հասկցվեցավ, որ Գեղեոնն էր այդ գործին հեղինակը, քաղաքի բնակիչները հորմեն պահանջեցին Գեղեոնը մեղցնելու համար: Հայրը խորագետ դարձվածքով մը պաշտպանեց իր տղան.

— Չեզի՞ մնացած է Բահադին պաշտպանությունը, եթե Բահադ իրապես աստված է, ու եթե մեկը կործանած է իր քաղաքը, թող ինք առնէ իր վրեժը, թող ինք մեղցնէ իր սեղանին կործանիչը...:

Մարդիկը համոզվեցան:

«Աստուծո Հոգին զորացուց Գեղեոնը»: Հնչեցուց ապստամբության փողը, կոչ ուղեց իր ժողովուրդին, որ հայրենիքի ազատագրության համար կովի ուզողներ իր շուրջը հավաքվին: Երեսներկու հազար հոգի համախմբվեցան իր մոտ:

— Ասոնք շատ են, ըսավ Տերը. հետո պիտի պարծենանք որ ձեր ուժով հաղթանակը տարիք: Ըսէ հավաքված բազմության, ով որ իր արտին մեջ վախ ու մըտքին մեջ հոգ ունի թող հեռանա: Քսաներկու հազար հոգի մեկնեցան:

— Մնացած տասը հազարն ալ շատ է, ըսավ Տերը. ջուր խմելու տար ասոնք, ով որ գետին պառկելով կխմէ ջուրը, տուն դրկէ զանոնք. անզոյւշ և անըջահայաց մարդիկ են անոնք: Իսկ անոնք որ արիվ կխմեն ջուրը, քովը պահէ զանոնք. արթուն մարդիկ են: Այս գտումեն հետո մնացին 200 հոգի միայն: Գեղեոն այս գումարով, գիշեր ատեն, ռազմական խորագիտությամբ սարսափ և շփոթ ձգեց թշնամի բանակին մեջ, որոնք սկսան զիրար կոտորել և ի վերջո խոճապահար փախան: Գործին մնացյալ մասը լրացուցին իր մյուս ցեղակիցները, թշնամիի փախուստի ճամբուն վրա:

Գեղեոնի մեջ ալ տիրող ոգին համեստությունը և խոնարհությունն էր, որ երեսավ նախ իր կոչումի ընթացքին, երբ խստովանեցավ որ ինք հարմարագույն ամեն չէր ազատագրական նոր շարժումին գույխը անցնելու: Երկրորդ Եփրեմի ցեղին հետ ունեցած խնդրո մը առթիվ, երբ այս մերջիները իր դեմ զայրացած էին որ զիրենք չէր կանչած պատերազմի սկիզբը: Գեղեոն չուզեց չափվի խնդրահարուց այս մարդոց հետ, այլ լուռության մատնեց զա-

նոնք իր ըրածը ստորագնահատելով և անոնցինը բարձրացնելով.

— Իմ ըրածս ոչինչ է ձեր վարագործությանց բաղդատմամբ, դուք եք որ սպաննեցիք Մադիամի իշխանները, որոնք արդարև իրենց փախուստի ընթացքին Եփրեմի սահմաններեն ուզած էին խոյս տալ, բայց բռնված և սպաննված էին:

Սակայն իր խոնարհության և Աստուծո հանդեպ ունեցած մեծ վստահության լավագույն փաստը երրորդ պարագայի մը մեջ երևան կուգա: Այս փառավոր հաղթանակեն հետո՝ իսրայելացիներ ի նշան երախտագիտության՝ պատգամավորություն մը դրկեցին Գեղեոնին և ըսին.

— Իշխես մեր վրա դուն և քու սերունդդ հորդվոց որդի:

— Ոչ ես կիշխեմ ձեր վրա և ոչ ալ որդիներս պիտի իշխեն. այլ՝ ՏԵՐԸ ՊԵՏԻ ԻՇԽԵ ձեր վրա, ըսավ Գեղեոն (Դատ. Ը 23): Հույնք սեպտ. 26-ին. լատինք՝ սեպտ. 1-ին: Մենք՝ նախահարց հետ:

✓ 18. Հ Ե Փ Թ Ա Յ Ե

Իր օրով իսրայելացիներ ինկած են լուծին տակ ամսուհացի կոչված ժողովուրդին, նախաբնիկներն էին ներկա Ամման քաղաքին: Անոնց լուծեն ազատագրվելու գործին հրավիրվեցավ Հեփթայե, գոր Աստվածաշունչը կներկայացնէ իբրև «Այր հզոր գործությամբ, և նա որդի կնոջ պոռնկի» (Դատ. ԺԱ 1), այսինքն թեև ուժեղ ռազմիկ մըն էր, բայց միաժամանակ ապօրեն ծնունդ ունեցած էր, որուն մեջ բնականաբար ինք ունէ հանցանք չունէր: Այս պատճառով Հեփթայեի խորթ եղբայրները վատրած էին զայն տունեն և զրկած հորեանկան ժառանգութենէ և ոչ որ պաշտպան կանգնած էր իրեն հանդեպ գործված այս անիրավության դեմ: Հեփթայե լեռ ելած և անիշխանական մը դարձած էր, որուն շուրջ կհավաքվեին ամեն տեսակ մարդեր, որոնցմէ գունդ մը կազմելով դարձած էր նշանավոր ասպատակ և քաջ կովող:

Իսրայելացիներ երբ նեղ դրության մատնվեցան և զորապետի մը պահանջքը զգացին թշնամիին դեմ մարտնչելու համար, իրենց միտքը եկավ Հեփթայե, որուն մարդ դրկեցին ըսելու.

— Եկուր և մեզի գորավար եղիր պատերազմելու համար ամսուհացիներու դեմ: Հեփթայե պատասխանեց.

— Դուք չէի՞ք զիս արհամարհողները և հորս տունեն վտարողները: Հիմա որ նեղության մատնված եք, ինձի՞ կդիմեք:

— Այո, ճիշտ այդ պատճառով քեզ ե-

կանք արդեն. Անդրության մեջ ենք. եկուր մեզի հետ և պատերազմն ամսոնացիներու դեմ. և իշխող եղիր մեր վրա: Ըսել ուզեցին. մենք քու ծագումդ մոռցած ենք և կը-գնահատենք ռազմական կարողություններդ. դուն ալ մոռցիր մեր երբեմնի անտարբերությունը քեզի պաշտպան կանգնելու և լսն ժողովուրդդ ձայնը և մեզի հետ եկուր: Հեփթայե ըսավ.

— Եթե Աստված մատնե ամսոնացիները իմ ձեռքս պիտի ընդունի՞ք զիս իբրև ձեր իշխանը: Մարդիկ երդումով խոստացան ընդունիլ:

Հեփթայե անցավ բանակին գլուխը. բայց իբրև կոնվենտու մեջ եփած մարդ և լավ վարչապետ նախ փորձեց խնդիրը հարթել առանց պատերազմի: Պատգամավորությունն դրկեց ամսոնացիներուն և զանոնք հաշտության և համերաշխության հրավիրեց: Ամսոնացիք մերժեցին: Այն առնել Հեփթայե այս իմաստով արտահայտվեցավ.

— Արյուն ձեր ի գլուխ ձեր. մենք ձեզի վնաս հասցուցած չունինք, բայց դուք մեզի դեմ չարիք գործեցիք և ձեր նպատակն է՝ շարունակել զայն. թող Աստված ըլլա մեր դատավորը:

«Եվ Աստուծո չնոգին Հեփթայեի վրա եկավ». ու ամբողջ ույծով ինկավ ամսոնացիներու վրա. «մեծամեծ հարվածներ տվավ անոնց» ու հալածեց իր երկրին սահմաններէն:

Սակայն այնպես կերևի թե որքան փորձ էր Հեփթայե կոնվենտու մեջ, նույնքան անփորձ էր կրոնքի մեջ, բայց անկեղծ՝ Աստուծո հանդէս:

Պատերազմէն առաջ, Աստուծո մեծագույն շնորհ մը ըրած ըլլալու միտքով, Հեփթայե ուխտած էր, որ եթե պատերազմէն հաղթական վերադառնա, Աստուծո պիտի զոհեր իր տունէն առաջին անգամ իր դեմ ելնողը: Որքան ալ անխոհեմ թվի նման ուխտ մը, մյուս կողմէն սակայն կհայտնաբերե Հեփթայեի այն համոզումը թե հաղթություններ Աստուծո պարգևներն են, ու ինք պատրաստ է ընելու գերագույն զոհողությունը այդ շնորհին արժանանալու համար: Պատերազմէն վերադարձին, իր չար բախտէն, անոր դեմ առաջին անգամ ելլողը եղավ իր մեկ հասիկ դուստրը, որ պարսխումքի մը գլուխ անցած երգով ու թմբուկով իր հայրը դիմավորելու կելլեր: Աստվածաշունչի ամենէն արտաճմլիկ տրամներէն մեկն է սա, որ իր արժանի եղերականությամբ և ժուժկալությամբ ներկայացված է, և զոր դժվար է կարդալ առանց մարդկային խոր հուզումի:

Հեփթայե հարկադրվեցավ հարգել իր

խոստումը. զոհեց իր դուստրը, ու այդ կերպով որքան ալ եղերաբախտ հայր մը եղավ, սակայն մյուս կողմէն հաստատեց իր վճռականությունը և հավատարմությունը կատարելու գերագույն զոհողությունը իր Աստծուն համար:

Մյուս եկեղեցիները չեն հիշատակեր:

✓19. Ս Ա Մ Ս Ո Ն

Առասպելական հերոսը, որ անհավասար պայքարը մղեց, ԱՌԱՆՁԻՆՆ, և տարիներով, իր ժողովուրդի նոր մեկ թշնամիին դեմ:

«Իսրայելացիներ կրկին մեղանչեցին Աստուծո առջև, և Տերը մատնեց զանոնք փղշտացիներուն ձեռքը»: Այս նախաբանով կսկսի Սամսոնի վեպը, որ կարճ պատմըվածքներու գրականության մեջ գլուխգործոց մըն է, իր պարզությամբ, իրապաշտությամբ և գրավչությամբ: Աստվածաշունչին մեջ արդարև կան մեզի ծանոթ գրական գրեթե բոլոր սեռերէն բազմաթիվ էջեր, որոնք իրավամբ անմրցելի կմնան համամարդկային գրականության իրենց համապատասխան սեռերուն մեջ, ըլլան անոնք բանաստեղծություն, իմաստասիրություն, բայց մանավանդ պատմողական գրականություն: Մենք այս մարզին մեջ արդարություն պիտի չկարենանք ընել Սամսոնի վեպին, որ կգրավել Դատավորաց գրքի ԺԳ—ԺԾ գլուխները, քանի որ հարկադրված ենք տալ անոր մասին այնտեղ պատմվածներուն լոկ կմխարը:

Աստվածային խոստումի զավակ է Սամսոն, և մորը որովայնէն կընծայվի Աստուծո: Երբ ծնավ և սկսավ աճիլ, «Աստուծո հոգին ալ սկսավ շրջիլ անոր հետ»:

Իր սխրագործությունները սկսան, երբ սիրահարեցավ փղշտացի աղջկան մը: Ծնողքը բնականաբար համամիտ չեղան այս ամուսնության, որովհետև «Զէին գիտեր թե Տիրոջմէն էր ասիկա, որպէսզի հատուցում պահանջէ փղշտացիներէն» (Դատ. ԺԴ 4): Իրերը ինքնաբերաբար այնպես բերին, որ վրիպի այս ամուսնությունը և առիթ տրվի Սամսոնի բազմաթիվ փղշտացիներ սպաննելու և կրակի տալու անոնց հունձքերը: Արդեն Սամսոն ինք չէ որ կծրագրէ իր սխրագործությունները, այլ դեպքերը այնպես կբերեն, որ ինք հարկին տակ գտնվի փղշտացիներ փճացնելու: Օրինակ երբ փղշտացիք փորձեցին ձերբակալել զինք, իշու ծնոտով մը ավելի քան հազար մարդ սպաննեց: Նման պարագաներուն ս. Գիրքը կկրկնէ. «Եւ յաջողեցաւ ի վերայ նորա Հոգի Տեսնն». այդ Հոգիէն

գործություն առած կգործեր իր նախնիքները:

Ի վերջո ինչպիսի Դալիա կոչված կնոջ մը ծողակին մեջ, որ իրմե կորզեց իր գերբնական ուժին գաղտնիքը: Սամսոն չհիմանալով անոր թախամանքներուն, որոնցմով «հոգնեցուց զինքը մինչև ցմահ», ըսավ ամեն բան. «Ածելի չէ դպած իմ գլուխս. ուրովհետև ես Աստուծո նախընտրեալ մըն եմ իմ մորս որովայնէն»: Ու երբ քնացած պահուն կտրվեցան իր մազերը, «սկսավ թռչնիլ Սամսոն և մեկնեցավ անկէ իր գործությունը»: Երբ արթնցավ՝ զգաց, որ «Տերը հեռացեր էր իրմէ»: Սամսոն, Ավետարանի բացատրությամբ, իր «սրբությունը շունչուն տված էր, և իր մարգարիտները խոզերուն առջև նետած էր»: Փղշտացիները ձերբակալեցին զայն. աչքերը փորեցին և բանտ նետեցին, ուր ցորեն կաղար:

Բանտի մեջ «մազերը սկսան վերստին բուսնիլ»: Ու երբ փղշտացիներ զինք թատրոն բերած էին իրմով զվարճանալու համար, կորսացած Սամսոն ըսավ պատանիին, որ իր ձեռքէն բռնած էր. «Մոտեցուր զիս շենքի գլխավոր սյուններուն»: Եվ ապա «Աղաղակեց Աստուծո և ըսավ. հիշէ զիս, Տեր, և զորացուր զիս վերջին անգամ ըլլալով»: Ու իր վերստացած ուժով խախտեց սյունները և փոլ եկավ շենքը: «Իր մահով շատ ամելի մարդ մտցուց Սամսոն, քան իր կենդանությանը»:

Արդարև հակասությանց մարդը եղավ Սամսոն. ծնավ իբրև «Ռիստավոր Աստուծո» սակայն իր կյանքը անտորք շրջանակներու մեջ անցուց:

Երբ Աստուծո հոգին տիրանար անոր, իսկապես հոգևոր մարդ կդառնար. սակայն միշտ մնաց մարմնի ցանկություններու ներքև:

Գերմարդկային ուժի տեր էր. սակայն չկրցավ փորձությանց հաղթահարել:

Ոչ մեր արդի չափանիշներով և ոչ ալ Ավետարանի լույսին տակ պիտի դատենք Սամսոնը. այլ՝ ժամանակի չափանիշներով է իր «գոյության պատճառով»: Իր ժամանակի աստվածային պատգամներէն մեկն էր. «Սիրեցես զբարեկամս քո, և ստեցես զթշնամիս քո». կամ «Ակն ընդ ական և ստամն ընդ ատաման»: Սամսոն իր կյանքը նվիրած էր այս պատվերներու գործադրության:

Բաց աստի, իր ժամանակին—և բոլոր ժամանակներուն—գերագույն մեղքն է կուսաւաշտությունը, որ պետք չէր թափանցեր գեթ Աստուծո ժողովուրդին մեջ, ի գին ամեն գոհողությանց: Սամսոն «անթլպատ»-

ներուն և կուսաւաշտներուն դեմ կպայքարեր անխնա կերպով:

Սամսոնի «գոյության պատճառը» սա եղած էր. «Նա պիտի սկսի փրկել Իսրայէլը փղշտացիներու ձեռքէն»: Արդարև «ՍԿՍԱՎ» Սամսոն ազատագրական այս տորք գործին. ու եթէ չկրցավ ավարտել զայն, գեթ կոտորեց թափը թշնամիին՝ ամելի թափանցելու իր երկրին ու ժողովուրդին մեջ. գեթ պայքարի ու դիմադրության ոգին վար պահեց իր ժողովուրդին մեջ և օրինակ հանդիսացավ Սավույին և Դավիթին, որոնք ի վերջո հաջողությամբ պատկեցին իր «սկսած» գործը: Սամսոն ոչ միայն ռաֆիկիսան ալ նաև նահատակը եղավ ազատագրական այս պայքարին:

Մյուս եկեղեցիները չեն հիշատակեր:

20. ԴԱՎԻԹ ԹԱԳԱՎՈՐ

Սամսոնով վերջ կգտնէ շարքը մարտական դատավորներու: Ասոնց կհաջորդէ Իսրայէլի թագավորաց շրջանը: Կրնայինք նոր գլուխ բանալ այստեղ «Թագավորներ» վերտառությամբ: Սակայն մեր օրացույցին անցած է լոկ մեկ թագավոր, թեև ս. Գրքին մեջ կային առնվազն երկու երեք շատ բարեպաշտ թագավորներ, որոնք կրնային մեր տոնացույցին ալ անցնիլ ինչպես անցած են մյուս եկեղեցիներու տոնացույցին: Օրինակ Եզեկիա բարեպաշտ թագավորը, որուն մասին ս. Գիրքը բարձրագույն գովեստներով կարտահայտվի ըսելու աստիճան. «Տիրոջ առջև ուղիղ ընթացք ունեցավ, իր նախնիքին Դավիթին պես. և անկէ հետո իր նմանը չունեցավ Հրեաստանի թագավորներուն մեջ, ոչ ալ իրմէ առաջվաններուն մեջ» (Ի Թագ. ԺԸ 3—5): Ուրիշ բարեպաշտ թագավոր մըն է Հովսիա, որուն մասին ևս միևնույն գովեստները կը տրրվին:

Նկատի ունենալով որ Իսրայէլի ամելի լքան 40 երկնյող թագավորներէն լոկ Դավիթ անցած է օրացույցի, ուստի նախ քան ՄԱՐԳԱՐԵՆԵՐՈՒ հաջորդ խումբին անցնիլը կուզենք Հին և Նոր Իսրայէլի ՆԱԽԱՀԱՅՐԵՐՈՒ հատկացված այս գլուխը փակել Դավիթով, որ հարմարագույն օղակն է երկու խումբերուն միջև, որովհետև արդարև թե՛ «ճահապետ» մը և թե՛ «մարգարե» մըն է ան, ինչպես կհաստատէ Դեոբոս առաքյալ (Գործ. Բ 29):

Դավիթ զագաթ մըն է Աստվածաշունչին մեջ և գրեթէ ամենէն բազմաշնորհ անձը Մովսեսի հետ: Վերջինին պես՝ հանգամանորէն տրված է նաև Դավիթի կյանքը և՛ գործը վերոհիշյալ գիրքերուն մեջ, որոնց

գրեթե կեսը հասկացված է իրեն: Այնպես որ մեր ընկերքը պիտի ըլլա փոքր անոթի մը մեջ համադրել անոր ծով կյանքը:

Դավիթի կյանքին վարագույրը կբացվի իր օծումով իբրև թագավորացու Իսրայելի. «Եվ Տիրոջ Հոգին խաղաց Դավիթի վրա այն օրեն սկսյալ» (Ա Թգ. ԺԶ 13): Այդ պահուն իսկ ան կներկայացվի իբրև երիտասարդ մը, «որ գիտն սաղմոս, իմաստուն և պատերազմիկ մարդ մը, հանճարեղ և ճարտարաբան, պայծառ աչքերով և գեղեցիկ տեսքով, և Աստված անոր հետ» (Ա Թգ. ԺԶ 18 Բղդ. ԺԶ 12): Այս քանի մը քառերը մեզի կու տան Դավիթի ֆիզիքական, իմացական և հոգեկան պատկերը: Այս երեք մարզերուն մեջ ալ գերազանց եղած է Դավիթ:

Ամենեն առաջ ան մեզի կներկայանա իբրև ուժեղ, անվախ ու քաջակորով հովիվ մը, որ իր ընտանիքի հոտը պաշտպանելու համար արջերու և առյուծներու դեմ կելլե: Ոչխարներու հանդէպ ցույց տված այս անձնորհիւր հոգածության համար Աստված կանչեց զինքը իր ժողովուրդի հովվության, ըստ ավետարանական սկզբունքին, թե «ով որ պզտիկ գործերուն հավատարիմ է, մեծերուն մեջ ալ հավատարիմ պիտի ըլլա»: Իր քաջության և անվախության կոթողն է ճակատիլը Գողիաթին հետ: Սափուղ թագավոր երբ իր մտահոգությունը կհայտնէ աւս կոնիվին համար, Դավիթ կպատասխանէ. «Ծառադ առյուծ և արջ սատկեցուցած է. այս անթիվատ ալլազգին ալ անոնցմէ մեկին պես պիտի ըլլա»: Ամմահ են իր խոսքերը զորս ուղղեց Գողիաթին, երբ սա արհամարհանքով կըսէր Դավիթին. «Եկուր որ մարմինը կերակուր դարձնեմ երկինքի թռչուններուն»: Դավիթ պատասխանեց.

«Դու իմ վրաս կուգաս սուրով, գեղարդով և ասպարով, իսկ ես քու վրադ կուգամ Ջորությանց Տիրոջ անունով» (Ա Թգ. ԺԷ 45):

Անգերազանցելի գորավար մըն էր Դավիթ: Քաջություն և վստահություն կներշնչէր իր շուրջիններուն, որոնք կապված էին իրեն անձնագոհության և հավատարմության բարձր զգացումներով: Երկրին հզորագույն մարդերը իրեն քաջեց և իր առաջնորդությամբ և օրինակով ավելի կատարելագործվեցան անոնք քաջության մեջ (Տես անոնց ցանկը և սխրագործությունները Բ Թգ. ԻԳ 8—39): Իր բազմաթիվ զինվորական արշավանքները միշտ հաջողությամբ ի գլուխ հանեց:

Մեծագույն թագավորն է Իսրայելի: Երկիրը կառավարեց իմաստությամբ և արդարությամբ. «Դավիթ ի գործ դրավ օրենքը

և արդարությունը ամբողջ իր ժողովուրդին վրա»: Իր վարչական ու ռազմական մեծագործություններն մեկը եղավ գրավումը Երուսաղեմ քաղաքին, որ դեռ բնիկներուն ձեռքը կմնար: Վերածեց զայն մայրաքաղաքի, որ երբեմն կկոչվի նաև Դավիթ քաղաք, որուն շուրջ սկսավ կեդրոնանալ հրեա ժողովուրդի կրոնական ու քաղաքական կյանքը Դավիթեն սկսյալ: Իրեն ենթարկեց շրջակա բոլոր ազգերը, և կերտեց փոքր կայսրություն մը, որ կտարածվէր Սինայի անապատեն մինչև Եփրատ գետ, և որուն մեջ կմտնէին նաև Սյուրիան, բացի ծովեզերյա մասերեն, և այսօրվան Հորդանանի թագավորությունը:

Արվեստագետ մըն է Դավիթ քառին լայնագույն առումով: Նախ քանաստեղծ մըն է, որուն կվերագրվի Սաղմոսաց գիրքը: Եթէ ոչ ամբողջությամբ գեթ անոր կորիզը արդարև Դավիթի կպատկանի: Հորինեց սրտառույց ողբերգ մը Սափուղ թագավորի և իր անմոռանալի բարեկամ Հովնաթանի մահվան վրա (Բ Թգ. Ա 17—27): Իր սաղմուններն առնվազն երկուքը ընդերուված են կենսագրության մեջ (Տես Բ Թգ. ԻԲ և ԻԳ գլուխները): Սաղմոսաց գրքի ամենն ճշանավորներն 23-րդ սաղմոսը, «Տէրը իմ հովիւս է», միայն հովիվ մը կրնար գրել, և այդ սաղմոսը և վերոհիշյալ ողբը միայն բավական են Դավիթը պատկերու իրավ քանաստեղծի տիտղոսով:

Երաժիշտ, երգող, պարող և նվագահար է Դավիթ: Իր սաղմուններուն եղանակներն ալ ինք կհորինէր: Երբ մոլեգնած Սափուղը ամոքելու համար «քնարահար և երգող» մը կվհատեն, ամենքին միտքը կուգա հետեի որդի Բեթլեհեմցի Դավիթը: Տիրոջ Տապանակը Երուսաղեմ փոխադրելու ատեն Դավիթ չի քաշվիր մասնակցելէ ժողովրդային ուրախության արտահայտությանց: Մեկդի դրած իր թագը և արքայական պատմունանը, «Դավիթ տավիղ կգարներ, և ամբողջ եռանդով կպարեր Տիրոջ առջև»:

Դավիթ իր ֆիզիքական և իմացական ձիրքերու կողքին օժտված մըն է առավելաբար հոգևոր շնորհներով, որոնց պատճառով արդարև որակված է «Այդ ըստ սրբտի Աստուծոյ»: Իր կրոնասիրությունը կհայտնվի ոչ միայն իր սաղմուններուն մեջ, այլ նաև ամբողջ կյանքի ընթացքին: Խոնարհ է Դավիթ իր մեծության մեջ ու այս ոգին այնքան գեղեցկորեն արտահայտված է իր աղոթքներն մեկին մեջ, որ կսկսի սա քառերով. «Ով եմ ես, Տեր իմ Տեր, և ով է իմ տունս, որ այսքան բարձրացուցիր զիս» (Բ Թգ. Է 18—29):

Ծատ են Դավիթի վեհանձնության դրը-

վագները: Երիցս ստի՞ կներկայանա սպաններու զինք անիրավաբար հալածող Սալուդը, սակայն կիմայն անոր կլանքին, իբրև իր թագավորը և «Տիրոջ օծյալը»: Իր ապերախտ և փառամոլ գավակը, Արիստոփոս, երբ իր դեմ կապտամքի, և այդ պատճառով ինք կհարկադրվի հեռանալ Երուսաղեմեն, իր գորքերուն կախովիքն չսպաննել զայն պատերազմի մեջ: Ու երբ հակառակ իր հրամանին կսպաննվի ան, Դավիթ կպոռթկա հայրական սիրով. «Աքիստողոմ, որդյակ իմ Արիստոփոս, երանի ես մեռած ըլլայի քու տեղդ»:

Աստվածաշունչի բոլոր տիպարներն ալ առավել կան նվազ չափով կարտահայտեն մարդկային բնության զանազան երեսները, բարի կամ չար, սակայն ոչ ոք կհավասարի այս մարզի մեջ Դավիթի: Կան իր մեջ ամեն ինչ որ մարդկային են, վսեմագույններեն ամենեն նվաստները:

Դավիթին իսկական մեծությունը կկազանա վսեմները աճեցնելուն և կիրարկելուն՝ իսկ նսեմները նվազագույնի վերածելուն մեջ, առանց սակայն խուսափիլ կարենալու մեղքին իր տուրքը վճարելու տկարություններն:

Դավիթի մեծագույն մեղքը եղավ իր շնությունը իր գորավարներեն մեկին կնոջ հետ, ու այդ մեղքը ծածկելու անճարակ փորձը երբ վրիպեցավ, գործեց ավելի ծանր մեղքը, նեղություն մտնելով տալով իր ազնրվական և հուսատարիմ գորավարը, Ուրիա Քետացին: Այս մեղքերուն համար հանդիմանվեցավ Նաթան մարգարեն: Թեև սրբտովին զղջաց բայց հետևանքներեն չկրքցավ ազատիլ, մեռավ մեղքին պտուղը եղող մանուկը, և սուրը և խոտվությունը անպակաս եղան Դավիթի տունեն: Պահ մը զրկվեցավ նաև իր գահեն և նշավակ դարձավ անեծքին և անարգանքին իր թշնամիներուն: Այս բոլորին մեջ սակայն Դավիթ երբեք չխզեց իր կապը և վստահությունը Աստուծմե: Իր ապաշխարանքին գերազանց

արտահայտությունն է «Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմության քում, ըստ բազում գթության քում քառեա՛ զանօրենությունն իմ» սկզբնավորությամբ սաղմուդը: Իսկ իր գլխուն եկած փորձանքները կրեց համբերությամբ և խոնարհ ոգով: Զինք թշնամանողներն ներեց, երբ վերստին իր գահին տիրացավ: Ունեցավ խաղաղ մահ, իր հաջորդը նշանակելն և իր գահը ամուր հիմքերու վրա դնելն հետո:


Դավիթ նշանավորագույն նախահայրն է Քրիստոսի, քիչ անգամ Հիսուս կոչված է «Որդի Հովսեփա». բայց բազմիցս կոչված է «Որդի Դավիթ», իբրև ծանոթ տիտղոսներեն մեկը Մեսիային, որ պիտի գար նորոգելու Դավիթի թագավորությունը, իր հոգևոր և հավիտենական իմաստով, ինչպես ըսավ ավետավոր հրեշտակը Մարիամին. «Ահա պիտի հղանաս և որդի մը պիտի ծնիս... Եվ Տեր Աստված պիտի տա անոր իր Հոր Դավիթի անունը, և պիտի թագավորեն Հակոբի տան վրա, և անոր թագավորությունը վախճան պիտի չունենա» (Ղկ. Ա. 32):

Դավիթի հիշատակը կտոնվի մեր մեջ ս. Ծնունդը կանխող չորս «Ավագ տօներ» են իբրև առաջինը, «Տեսնեղբայր» կոչեցյալ Հակոբոս առաքյալի հետ: Բացստիկ և իմաստալից երևույթ մըն է սա, որ ըստ մարմնո Քրիստոսի «Նախահայրը» և ըստ մարմնո Անոր «եղբայրը», այսինքն ազգականը, միասին կտոնախմբվին, խորհրդանշելու համար Հին և Նոր Ուխտերուն միաձուլմը քրիստոնեական տնտեսության մեջ:

Դավիթ վախճանեցավ 70 տարեկանին: Իշխած է 1055—1015 Ն. Ք.: Հույնք և լատինք ևս մեզի պես կհիշատակեն զայն դեկտ.ի վերջերը:

(Ծարունակելի)

(«Աստվածաշնչական սուրբեր», Իսթանպուլ, 1977, էջ 66—80):



ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ

**ՍՈՒՐԲ ՌԵԹԵՆՈՍ ԱԹԵՆԱՑԻ, ՍՈՒՐԲ ԴԻՈՆԻՍԻՍԻՈՍ
ԱՐԻՍՊԱԳԱՑԻ ԵՎ ՍՈՒՐԲ ՍԵՂԲԵՍՏՐՈՍ
ՀԱՅՐԱՊԵՏ ՀՈՈՄԻ**

Ընդհանրական եկեղեցու «երկոտասան վարդապետաց» խմբում ճիշդում են նաև այս երեք սրբերի անունները: Թեև «անհամար վարդապետք եղեն յեկեղեցի Աստուծոյ յառաջ և զկնի քան զսոսա, ակամաորք սրբութեամբ և քարոզութեամբ Բանին գրաւոր և անգիր, բայց առաւել յառանձին ազգս իրեանց լուսածագեցին», այս երկոտասան վարդապետները, որովհետև նրանք «նախանշանակեալ սուրբ վարդապետք՝ եղեն պայծառացոցիչս Բամօրէն եկեղեցեաց, որ ընդ ամենայն տիեզերս, իրքև աստեղք լուսափայլք»²:

Ընդհանրական եկեղեցու «երկոտասան վարդապետաց» շարքում առաջին տեղն է գրավում սուրբ Ռեթենու Աթենացին, որպէս սուրբ Դիոնիսիոս Արիսպագացու ուսուցիչը:

Ռեթենու Աթենացին և Դիոնիսիոս Արիսպագացին «մեր եկեղեցում տոնվող ընդհանրական եկեղեցվո երկոտասան վարդապետների շարքում ևս առաջին տեղն են բռնում»³:

¹ Օրացոյց, Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1979, էջ 128:

² «Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, որ կան ի ճին տօնացոցի եկեղեցոյ Հայաստանեայց. ի հայր Մկրտիչ վարդապետէ Ազգերեան...», հատոր Է, Վենետիկ, 1818, էջ 61:

³ «Կնիք հաւատոյ», հրատարակություն Կարապետ եպիսկոպոս (Տեր-Մկրտչյանի), ս. Էջմիածին, 1914, էջ XXXII:

ՍՈՒՐԲ ՌԵԹԵՆՈՍ ԱԹԵՆԱՑԻ

Մեկն էր Աթենքի Աշանավոր Արիսպագոսի, այսինքն ժողովրդական դատավորների գերագույն խորհրդի անդամներից:

Նա առաջինը քրիստոնյա դարձավ Աթենքում, ըստ ավանդության ս. Պողոս առաքյալի քարոզության շնորհիվ, նախքան Դիոնիսիոսի դարձը:

Ռեթենու անունը, հունական արտասանությամբ Հերոթենու կամ Յոթենու, Աշանակում է աստուածապարզ:

Ռեթենուը, ըստ ավանդության, քրիստոնյա դառնալուց առաջ Աթենքում հոշակված էր իր գիտությամբ և փիլիսոփայական հմտությամբ. «այր լի հոգւով, յոգնահանձար գիտութեամբ և իմաստազեղ բանիք»⁴:

Մեր միակ ծանոթությունը Ռեթենուի մասին, որպէս իր ուսուցչի, հայտնի է Դիոնիսիոս Արիսպագացու անձնական վկայությունից, նրա մի շարք գրվածքների ակնարկություններից: Ըստ այս վկայության, Ռեթենու Աթենացին քրիստոնյա դառնալուց հետո, ս. Պողոս առաքյալից եպիսկոպոս է ձեռնադրվում Աթենքի նորահաստատ եկեղեցու վրա: Հեթանոսաց մեծավաստակ առաքյալը հանդիսանում է այս իմաստով առաջին ուսուցիչն ու հրահանգիչը թե՛ Ռեթենուի և թե՛ Դիոնիսիոսի քրիստոնեական կրթության:

⁴ «Լիակատար վարք...», նույնը, էջ 62:

Ըստ վկայարանական գրականության, Դիոնիսիոս Արիսպագացուց առաջ Ռեթեոս Աթենացին «սո ժամանակ մի հովուեաց զԱթոռ Աթենացոց..... և այսս զեկեղեցի Սպանիացոց, որպէս աւանդութիւն է առ նոսս վաղեմի»⁵:

Դիոնիսիոս Արիսպագացին Պողոս առաքյալի աշակերտ Տիմոթեոսի և Տիտոսի գրած իր թղթերում⁶ վկայում է, որ Ռեթեոս Աթենացին քրիստոնյա դառնալուց հետո, ուխտի է գնում Երուսաղեմ և ներկա է լինում Աստվածածնի Վերափոխման հանդիսութեանը, «ի սուրբն Սիոն ընդ այլ առաքելաւն և շարժեալ ի Հոգւոյն խօսեցաւ արժանաւոր գովեստ ներբողենի ի վերայ Տիրամօր, դաւանելով զնա Աստուածածին և կոյս»⁷:

Ռեթեոս Աթենացին իր կյանքը կնքում է Աթենքում և կամ Սպանիայում, խաղաղ մահով, «խաղաղական հանգստեամբ ի Քրիստոս», ըստ նրա վարքի:

Դիոնիսիոս Արիսպագացու վկայության համաձայն Ռեթեոս Աթենացին գրել է «Յաղագս տարիման աստուածային սիրոյ» մի ճառ «սո ի աստուածաբանականաց ստիքիրոնաց» (ոտանաւոր, տաղ) (իբր թերթ մի)⁸:

«Սուրբ Յոնեթեոս Աթենացի, ընկեր՝ միանգամայն և վարդապետ Դիոնիսիոսի, յոգնահանճար և հոգիարոյխ քերան, որ յօրինեաց զաստուածաբանական տարրութիւնս, այսինքն, զսկզբունս և հրահանգս և այլ խորհմաստ ճառս և օրհնութիւնս»⁹:

Այս բոլորով հանդերձ, սակայն, Ռեթեոս Աթենացու «պատմականությունը կդասնա կասկածելի, որովհետև ան կներկայանա Դիոնիսիոսի գործերուն մեջ միայն, իբր անոր ուսուցիչն ու առաջնորդը: Այս գիրքերն ղուրս ուրիշ ոչ մեկ տեղ հիշված կգտնենք Ռեթեոս Աթենացի անունով մեծ միտք մը կամ սուրբ մը, որ արժանի եղած ըլլա գլխավորելու եկեղեցիի «երկոտասան վարդապետներու» այլապես պանծալի փառանգը: Հույնք և լատինք կհիշատակեն զայն հոկտեմբերի 4-ին»¹⁰:

⁵ Նույնը, էջ 62—63:
⁶ «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ—ԺԳ), Վեներսիկ, 1889, էջ 382—383:
⁷ «Լիակատար վարք...», նույնը, էջ 63:
⁸ «Մատենադարան...», նույնը, էջ 618:
⁹ «Լիակատար վարք...», նույնը, էջ 59: Տես նաև «Լոյս» շաբաթաթերթ, 1905, Կ. Պոլիս, էջ 1073:
¹⁰ Ծնորդք արքեպիսկոպոս Գալուստյան, Համաքրիստոնեական սուրբեր, Իսթանպուլ, 1978, էջ 31: «Կնիք հաւատոյ», նույնը, էջ XXXIV:

ՍՈՒՐԲ ԴԻՈՆԻՍԻՈՍ ԱՐԻՍՊԱԳԱՑԻ

Ռեթեոս Աթենացու ժամանակակից և նախքան քրիստոնյա դառնալը նաև նրա աշակերտը:

Դիոնիսիոսի պատմական անձնավորություն լինելու մասին ոչ մեկ կասկած կա: Ըստ Գործք Առաքելոց-ի վկայության, նա եղել է Հեթանոսաց մեծ առաքյալ ս. Պողոսի աշակերտը և առաջին էպիսկոպոսը Աթենքի նորահաստատ եկեղեցու, «նախաշար և տիեզերալոյս վարդապետ եկեղեցու և հետևող Պօղոսի, առաքելական հարց, զօրաւոր գրով և բանի, ծանուցեալ զլոյս աստուածաբանութեան յետ Յովհաննոս աստուածաբան Անտարանչի և դասապետ աստուածաբան վարդապետաց եկեղեցոյ»¹¹:

Ս. Պողոս առաքյալը իր քարոզչական շրջագայության ընթացքում Ավետարանը քարոզելուց հետո Անտիոքում, Կիպրոսում, Լուստրալում, Փոյոզիսում և Փոքր Ասիայի մի շարք այլ քաղաքներում, այսս Փիլիպպեում և Թեսալոնիկեում, հասնում է Աթենք¹² և «քաղաքը տեսնելով կուսպաշտության մեջ», նրա «հոգին զայրանում է» և որոշում է քաղաքի ժողովատեղիներում և հրապարակներում համարձակորեն քարոզել նոր կրոնը, թե՛ հրեաներին և թե՛ աստվածապաշտ հեթանոսներին:

Ս. Պողոսի քարոզության նախասիրած վայրը Աթենքի նշանավոր Արիսպագոսի ժողովատեղին էր, «ուր հանդիպում էր նաև էպիկուրյան և ստոյիկյան փիլիսոփաներին և վիճում էր նրանց հետ»¹³:

Արիսպագոսը՝ ուր քարոզում էր ս. Պողոսը, Աթենքի նշանավոր ժողովրդական հավաքավայր բլուրներից մեկն էր և կոչվում էր հունարեն «արիոպագ», այսինքն պատերազմի չաստված Արեսի բլուր կամ գյուղ. «տեղին կոչէր ի լեզու աստիկեցոց «արիոս քաղոս», որ համարեալ էր առաթենաօսի տեղի դատաստանի երկոտասան դիցն»¹⁴:

Դիոնիսիոսը ևս «մի էր ի դատաւորաց աթենացոց, որք նստելին ի մեհեանի դից իբրև ի տուն ատենի արտաքոյ քաղաքին Աթենայ, ի մօտակալ աւանն ուր կայր հո-

¹¹ «Լիակատար վարք...», նույնը, էջ 58—59 և 139:
¹² Նոր Կտակարան, Մայր Աթոռ, 1975, Գործք Առաքելոց, ԺԷ 16—34, էջ 371—372:
¹³ Նույնը, էջ 372: Էպիկուրյանների և ստոյիկյանների մասին տես Ծանախ Պերպերյան, պատմություն իմաստասիրության, Անթիլիաս, 1977, էջ 121—131:
¹⁴ «Լիակատար վարք...», նույնը, էջ 139:

յակապ տաճար և բազին չաստուածոյն պատերազմաց Արեւի»¹⁵:

Արիսպագոսը «Աթենացոցն Արիսպագացի կոչված ատենակալաց հին և պատկանելի ժողովին տեղն էր, ...որուն անդամներն էին լավարարո և ծանրակցաց ավագ մարդիկ, որ իրենց իմաստուն և արդար վճիռներուն համար հոչակված էին Հուսաստանի սահմաններէն դուրս...: Արիսպագոսի քարե սեղանները բաց օդի մեջ էին, գալթին մեջ կկենային էպիկուրյանք, ստոյիկյանք և ուրիշ աղանդներէ փիլիսոփայք: Ասոնց բոլորտիքն էր քաղաքը լի կռապաշտներով և անոնց մեհյաններովը: Լակավ ինչ դեպ արևելք էր հոչակավոր Ակրոպոլիսի բարձրավանդակը, որու տափարակ գագաթան վրա ավելի շատ և հարուստ կռապաշտական շէնքեր կային»¹⁶:

Արիսպագոսում էր գումարվում «հիննէն ի մեր Աթենքի ազնվապետական դատական ժողովը, որուն անդամ էր նաև Դիոնիսիոսը: Այս ժողովը կզբաղվեր նաև կրոնական հարցերով»¹⁷:

Արիսպագոսում Պողոս առաքյալը իր Աթենք այցելութեան հաջորդ օրերին քարոզում էր փիլիսոփաներին և աթենացիներին ընդհանրապէս «Հիսուսի և նրա հարություն» և ի մասնավորի՝ **Անծանօթին Աստուծոյ մասին**, որի պատվին Աթենքում «մի բազին էր կանգնեցված»:

Աթենացիք պաշտում էին «Անծանօթին Աստուծոյն, առանց ճանաչելու այն», իսկ ս. Պողոսը քարոզում էր **Ճշմարիտ Աստուծոյ մասին**, որ «Տերն է երկնքի և երկրի, Նա՛ է ստեղծել այս աշխարհը և այն ամենը որ կա նրա մեջ: Նա ձեռակերտ տաճարներում չի բնակվում, և ոչ էլ մարդկանց ձեռքերով է պաշտվում, որպէս թէ մի բանի կարող լինէր: Նա՛ է տալիս ամեն բանի կտակը և շունչ... մենք նրանով ապրում ենք և շարժվում ենք և կանք... մենք նրա զարմն ենք»:

Ս. Պողոսի այդ քարոզութեան օրը, ներկա եղողներից «մի բանի մարդիկ, հարելով նրան, հավատագին: Նրանց թվում էր նաև Դիոնիսիոս Արիսպագացին և Դամարիս անունով մի կին և սրանց հետ ուրիշներ»¹⁸:

Ըստ ս. Հովհանն Ոսկեբերանի և Արև-

մուտքի Աշանավոր եկեղեցական հայր Ամբրոսիոսի, Դամարիսը համարվում է Դիոնիսիոս Արիսպագացու կինը: Ոսկեբերանը իր «Յաղագս քահանայութեան» ճառում վկայում է, որ «Եւ Արիսպագացին այն՝ որ ի սնտիսպաշտ քաղաքէ անտի (այսինքն Աթենքի), ո՛չ ապաքէն շատենախօսութենէ և էթ, հետևեցաւ Պողոսի, հանդերձ կնամն»: Դիոնիսիոս հունարէն Աշանավոր է աստուածազդեցիկ: Նա քրիստոնէա դառնալուց առաջ Աթենքում անվանի էր իր գիտութեամբ և փիլիսոփայական հմտութեամբ:

Դիոնիսիոսը Պողոս առաքյալից եպիսկոպոս է ձեռնադրվում Աթենքի վրա և ապա «կատարեցաւ հրով, հետ բազում աշխատանաց և ներութեանց»¹⁹:

Արիսպագացու ծննդյան թվականը հայտնի չէ: Նրա հայրը՝ Սոկրատը, համարվում է Աթենքի Աշանավոր անձնավորություններից մեկը: Դիոնիսիոսը, ըստ նրա վարքի, իր ծննդից առաջ, ծնողների ցանկությամբ և ուխտադրությամբ նվիրվում է դիցահայր Դիոսին կամ Արամազդին:

Եվ երբ մանուկ Դիոնիսիոսը դառնում է յթենմայա, նրա ծնողները, կատարելու համար իրենց բարբարոս ուխտը «զենմամբ նորա», տանում են նրան մեհյան, զոհելու «իշխանին դիաց»: Մեհյանին բուրմերը, սակայն, տեսնելով «զվայելչութիւն գեղոյ մանկանն», նրա ծնողներին թելադրում են, որ «լաւագոյն է ձեզ և առաւել հաճոյ դից, զի լինիցի մանուկդ այդ պաշտօնեայ նոցա՝ քան զոհ: Ծնողքն նորա ուրախ եղեն յոյժ և թողին զնա մտադիր ի տաճարն կոռցն»²⁰:

Այնուհետև մեհյանի քրմերը «փոյթ» կալան վաղվադակի կրթել զնա յուսումն... և առաւել իննամով հասուցանել զնա ի կատարումն ամենամեծ իմաստասիրութեանն:

Մանուկ Դիոնիսիոսի հեթանոսական դաստիարակութեան գոռձը հանձնվում է ժամանակի Աթենքի «զլխարտ իմաստասիր» Դիոկրատեսին, որը, ըստ ավանդութեան, հետագայում ս. Պողոսի քարոզութեամբ քրիստոնէա է դառնում և վերանվանվում Ռեթետոս Աթենացի, և որը «ամենամեծ Իօծարութեամբ արտի. պարզեաց զնա յամենամեծ գիտութիւնս, միակն եհաս պատանին ուրբունիս հասակի, և քաջ օտաւ ի հմտութիւն աստղագիտութեան, ըստ ամենամեծ հանգամանաց՝ որոգ տեղեանք Իին իմաստագունքն ի մէջ Աթենացւոս, միանգամայն և խեղամտտ եղև մաս-

¹⁵ Նույնը, էջ 189:
¹⁶ «Բառարան սուրբ Գրոց», Կ. Պոլիս, 1881, էջ 68:
¹⁷ Ծնորդք արքեպիսկոպոս Գալուստյան, Աույնը, էջ 81:
¹⁸ Նոր Կտակարան, Աույնը, էջ 872:

¹⁹ «Բառարան սուրբ Գրոց», Աույնը:
²⁰ «Լիակատար վարք...», Աույնը, էջ 141—142:



նաորաբար ամենայն յուզմանց փիլիսոփայից»²¹:

Ռեթեոս Աթենացին է համարվում ս. Պողոսից հետո Դիոնիսիոսի քրիստոնեական կրթության երկրորդ ուսուցիչը. «Եղև հրահանգիչ նորա ի խորությիւնս աստուածային վարդապետութեան, զի ինքն յստաշագոյն էր հաւատացեալ»²²:

Արիսպագացին էլ ս. Պողոսի ձեռքով եպիսկոպոս ձեռնադրվեց և Աթենքի հալատացալ ժողովրդի ցանկությանը ընտրվեց Աթենքի եպիսկոպոս:

Արիսպագացին քրիստոնյա դառնալուց հետո շուրջ երեք տարի գործակիցը եղալ ս. Պողոսի առաքելական-քարոզչական աշխատանքներին. «Լուսատրեաց զբազումս բանի և գրով և քանչեղի օրինակաւ վարուց իւրոյ, շրջելով առաքելաբար և քարոզելով զԱւետարանն մինչև ի Տրովադայ»: «Դիոնիսիոսը օղակ մըն է ավետարանական սուրբերը և եկեղեցական պատմության սուրբերը իրարու կապող, որովհետև հիշված է Գործք Առաքելոց-ի մեջ, իբրև գլխավոր պտուղը Պողոս առաքյալի Աթենքի մեջ կատարած քարոզության»²³:

Արիսպագացին իր կյանքը կնքել է նահատակությամբ, «կատարեցաւ հրով» վկայում է նրա վարքագիրը:
Մեր եկեղեցին Դիոնիսիոսի հիշատակը կատարում է «երկրորդասան վարդապետաց» տոնին²⁴ և հոկտեմբերի 18-ին, ս. Պողոսի աշակերտներ՝ «առաքելոցն Տիմոթեոսի և Տիտոսի» տոնին²⁵: Հույն եկեղեցին նրա հիշատակը կատարում է հոկտեմբերի 3-ին, իսկ կաթոլիկ եկեղեցին՝ հոկտեմբերի 9-ին:

Ս. ԴԻՈՆԻՍԻՈՍԻ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱՎՈՐ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ըստ վարքագրական տվյալների Դիոնիսիոս Արիսպագացին գրել է բազում թղթեր, «նաև և գիրս աստուածաբանական» խորին տեսութեամբ և ազգի ազգի պիտանությունն (պատգամ, վկայություն), յորոց զբազումս այրեցին և կորուսին աթենացիք»²⁶, մանավանդ «պղծանուն» Հուլիանոս Ուրացողի ժամանակ:

Գործք Առաքելոց-ի վերոհիշյալ վկայու-

²¹ Նույնը, էջ 142:

²² Նույնը, էջ 152:

²³ Ընդորհք արքեպիսկոպոս Գալուստյան, նույնը, էջ 30:

²⁴ Օրացոյց, նույնը, էջ 128:

²⁵ Նույնը, էջ 125:

²⁶ «Լիակատար վարք...», նույնը, էջ 153:

թյունից հետո²⁷, Դիոնիսիոսի մասին եկեղեցական մատենագրության մեջ կա նաև Եվսեբիոս Կեսարացու (263—340) վկայությունը, այն մասին, որ նա ս. Պողոսի աշակերտ է և Աթենքի առաջին եպիսկոպոսը:

Դիոնիսիոս Արիսպագացին իր մատենագրական վաստակով համարվում է «մին յառաքելական հարց, մեծիմաստ և յստականուն աշակերտ սրբոյն Պողոսին»²⁸:

Սուրբ Դիոնիսիոսը բնութագրվում է որպես «առաքելական Հայր, խոսքով և գրքչով զորավոր, և Հովհաննես Ավետարանչեն ետքը աստվածաբաններու գլուխ ճանչրցված է»²⁹:

Դիոնիսիոս Արիսպագացին եղել է նաև նշանավոր «իբրև առաքելական ավանդության գաղափարի և եկեղեցական միության պաշտպան և քարոզիչ», ինչպես նաև հերետիկոսությունների դեմ պայքարում «նշանավոր եպիսկոպոս»³⁰:

Ս. Դիոնիսիոս Արիսպագացու թողած մատենագրական վաստակը, այսօրվա սուրբ գրական բնագիտությունը իր ամբողջության մեջ, չի ընդունում որպես հարազատ. «Դիոնիսիոսի ընծայված մատյանը հարազատ չեն, այլ են գործ անձանոթ մատենագրի մյ չորրորդ և կամ հինգերորդ դարուն»³¹:

Դիոնիսիոսի «ընծայված գրվածոց ոմանք երկբարականք կամ անհարազատ սեպիին: Հայկական թարգմանությունն եղած է հույներորդ դարու ի ձեռն Ստեփանոսի Սյունյաց, ինչպես կազդարարեն հիշատակարանը: Նորագույն թարգմանություն մ'ալ Հոթն և տասանորդին, ի Ստեփանոսե Լեհացվո»³²:

«Իբրև ստուգված և հաստատված մատենագրական ճշմարտություն պետք է համարվի, որ Դիոնիսիոսի անունը կրող գրքվածների հեղինակը կարող է ապրած լինել միայն Ե դարի վերջերում և որ նա վերցրել է ուրեմն յուր վրա Դիոնիսիոս Արիսպագացու անունը՝ յուր երկասիրությունների համար վարկ ստեղծելու նպատակով»: Արիսպագացու գործերը «ընդունելություն և մեծ կարևորություն ստացան Զ դարի երկրորդ քառորդին, ընդհանուր եկեղեց-

²⁷ Նոր Կտակարան, նույնը, էջ 371—372:

²⁸ «Մատենագրարան...», նույնը, էջ 381:

²⁹ «Լոյս» շաբաթաթերթ, նույնը, էջ 1023:

³⁰ Երվանդ վրդ. Տեր-Մինասյանց, Ընդհանուր եկեղեցական պատմություն, ս. Էջմիածին, 1908, էջ 78, 107, 100:

³¹ «Բառարան սուրբ Գրոց», նույնը:

³² «Մատենագրարան հայկական...», նույնը, էջ 381:

վո մեջ մանավանդ է դարձել վերջերին, երբ Միակամայից դեմ 2 կամքի վարդապետության եռանդուն ջատագով Մաքսիմոս Խոստովանողը (+ 662 թ.) պաշտպանեց ճոցա վավերականությունը և գրեց ճոցա մեկնությունը»³³:

Այնուամենայնիվ, մեր եկեղեցական մատենագրության մեջ Դիոնիսիոսին վերագրված «Հարազատ, անհարազատ և ենթադրյալ» գրվածքներ «մեզանում էլ շատ վաղ են մտտ գործել և հեղինակություն ձեռք բերել: ...Դարեր շարունակ Արիստոսիոսին մի կարևոր դասագիրք է եղել Նշեցու դրպրոցում և նորանից ճյուղավորված վարդապետարաններում և նորանոր լուծումը գրել են Գրիգոր Տաթևացին, նորա աշակերտ Գևորգը, Դավիթ և Հակոբ վարդապետները ... այնպես որ մի բարդ գրականություն է հառաջացել կեղծ Դիոնիսիոսի գրվածքների շուրջը»³⁴:

Արիստոսիոսին վերագրված հարազատ կամ կեղծ գործերի «հայերեն ամբողջական թարգմանություն չի եղել, որ Ստեփանոս Սյունեցին Ը դարում կարիք է զգացել ամբողջը թարգմանելու»³⁵:

Ըստ Ստեփանոս արքեպ. Օրբելյանի վկայության³⁶, Սյունեցին «թարգմանել զգեղեցիկ գիրս սրբոյն Դիոնիսիոսի և ինքն դեմ դժուարագոյն և խրթին բանիցն լուծումն բան առ բան»:

Ստեփանոս Սյունեցին է (688—735), որ Կ. Պոլսում իր ուսումնառության շրջանին ս. Գեղարդ վանքի վանահայր Գրիգոր Գզոնի վարդապետի հետ զբաղվում է թարգմանական աշխատանքներով, և այդ առթիվ հայերենի է վերածում նաև Դավիթ հալազգի օհտնականի գործակցությամբ Դիոնիսիոս Արիստոսիոսի **Յաղագս երկնայնոցն քահանայապետութեանց** աշխատությունը և «առանձնապես մեկնողական լուծումը մը կգրե» Դիոնիսիոսի դժվարիմաց նույն գրքի մասին: Սյունեցին Կ. Պոլսում, արքայական մատենադարանում զըստում է «զգիրսն Դիոնիսիոսի Արիստոսիոսի, զոր գրեաց ի թելադրութենէ Պաղոսի առաքելոյ և Յեռեթեոսի տարրական աստուածաբանութեանցն... և նոքա (Գզոնի և Դավիթ հիպատոս) մեծա ցանկութեամբ թարգմանեցին զնա ի լուսնականէն ի հարաբար և զի դժուարիմաց էր բանն գրոցն (սրբոյն Դիոնիսիոսի), սուրբն Ստեփանոս,

ըստ տուեցելոյ նմա իմաստութեանն ի վերուստ, եղ ի վերայ նորա լուծմունս մեկնաւորեմն, որ երկի մինչև ցայսօր»³⁷:

Դիոնիսիոս Արիստոսիոսի «համբավը և եկեղեցիին մեջ անոր վայելած մեծ հեղինակությունը և դիրքը, իբրև վարդապետ եկեղեցվո, կհիմնվի կարգ մը կարևոր գիրքերու վրա, որոնք իրեն վերագրված են և որոնք բարձր հեղինակություն վայելած են միջին դարերում, և մեծապես ազդած են այդ և հաջորդ դարերու աստվածաբաններու մտածողության վրա թե՛ Արևելքի և թե՛ Արևմուտքի մեջ»³⁸:

Դիոնիսիոս Արիստոսիոսի հայերենի թարգմանված կարևոր գործերն են համարվում.

1. Պատճառ Դիոնիսիոսի... վարք Դիոնիսիոսի և լուծումն գրոց նորին.
2. Թուղթ Դիոնիսիոսի Արիստոսիոսի առ Տիտոս վասն Անջմանն Մարեմայ.
3. Դիոնիսիոս Արիստոսիոսի եպիսկոպոսի Աթենացոց, թուղթ զանազանք, առ Գալիոս... և այլն.
4. Յաղագս երկնայնոցն քահանայութեանց (հրեշտակների զանազան դասակարգությունների մասին)³⁹.
5. Յաղագս երկրային քահանայութեան (եկեղեցական միության վերաբերյալ) մասին, որը համարվում է «երկնակը կամ անանկը երկրի վրա» երկնային քահանայապետության.
6. Յաղագս աստուածային Անուանց (Աստուծու ստորագելիների կամ հատկությունների մասին).
7. Միատիկ աստուածաբանություն (քրիստոնեական հոգևոր կյանքի մասին)⁴⁰:

Դիոնիսիոս Արիստոսիոսի «աստվածաբանության տեսակետն շատ կարևոր այս գործեր»⁴¹, որոնք կրում են նաև նոր պատմական մտածողության ազդեցությունը, հանդիսանում են միաժամանակ քրիստոնեական եկեղեցու առաքելական հավատի և վարդապետության հուշարձանները և ո-

³³ «Կնիք հաւատոյ», Աույնը, էջ XXXIII:
³⁴ Նույնը, էջ XXXIV:
³⁵ Նույնը, էջ XXXIII:
³⁶ «Պատմություն Տանն Սիսական», էջ 98: Տես «Կնիք հաւատոյ», Աույնը:

³⁷ «Սիոն» ամսագիր, 1931, էջ 215, Գարեգին արքեպս. Հովսեփյանց, Մխիթար Արիվանեցի, նորագյուտ արձանագրություն: Տես նաև Նորայր եպիս. Պողոսյան, Հայ գրողները... Երուսաղեմ, 1971, էջ 118:
³⁸ Ընդհանր արքեպիսկոպոս Գաղուստյան, Աույնը, էջ 30: Տես նաև Encyclopaedia Americana, IX հատոր, Նյու Յորք, էջ 315:
³⁹ Թարգմանություն, Կ. Պոլիս, 712:
⁴⁰ Ընդհանր արքեպիսկոպոս Գաղուստյան, Աույնը, էջ 30—31: Մեսրոպ վարդապետ Գրիգորյան, Ստեփանոս Սյունեցի, Բելյուր, 1958, էջ 158:
⁴¹ Ընդհանր արքեպիսկոպոս Գաղուստյան, Աույնը:

րոնք խորունկ հետք են թողել հետագայում քրիստոնեական մարդասիրության (humanisme) և միստիկականության վրա⁴², «ապակայն այսօր հաստատված է, որ այս գիրքերը առաջին դարուն ապրող Դիոնիսիոսի գործերը չեն, այլ՝ հինգերորդ դարու վերջերը կամ վեցերորդին սկիզբները ապրող մեծ մտավորականի մը, որ գրած է զանոնք հաևուն Արիստագացիի»⁴³:

Ինչ էլ լինի Դիոնիսիոսի հեղինակած գրքերի մասին գրական քննադատության վերաբերմունքը, մեր եկեղեցական մատենագրության մեջ, հարազատ կամ ոչ, Դիոնիսիոսի աշխատությունների բազում հայերեն թարգմանություններ կան և, ինչպես նշվեց, Ստեփանոս Սյունեցին է համարվում «իր հիշյալ թարգմանություններով Դիոնիսիոս Արիստագացիի գլխավոր թարգմանիչը հայոց մոտ»⁴⁴:

Մեր եկեղեցական մատենագրության մեջ Դիոնիսիոսի գործերի երկրորդ հայ թարգմանիչը հանդիսանում է Մայր Աթոռի միաբան Ստեփանոս վարդապետ Լեհացին (ԺԷ դար), որը Սյունեցու հայերեն մի շարք թարգմանությունները գտնելով «դժուարի մաց և քնարանն ի բազում տեղիս փոփոխեալ և մեկնութիւն առ ի սրբոյն Մաքսիմոս արարեալ կիսակատար թարգմանեալ», ինքն էլ լատիներենից նորից թարգմանում է թե՛ Դիոնիսիոսի գիրքը և թե՛ Մաքսիմոս Խոստովանողի գրած մեկնությունը⁴⁵:

Ըստ ձեռագրական հիշատակարանների վկայության, Լեհացին «տեսեալ զգիրս սրբոյն Դիոնիսիոսի այլափոխեալ, և ի բազում տեղիս ապականեալ, փոյթ յանձն կալալ վերստին թարգմանել ի լատինացոց բարբառոյ ի մեր լեզու, և զայս աշխատութիւնս յանձն առի մանասանդ վասն երից պատճառաց: Նայս զի ընթերցումն գրոց դիրսանոն լիցի ուսումնասիրաց, և մի՛ ինչ անյատ իցէ ՚ի խթնածածուկ բանիցն սրբոյն Դիոնիսիոսի, այլ ամենայն բան և իմացումն պարզ երևեսցի. վասն որոյ ընդարձակ և բովանդակապէս իրաքանչիւր բանից մեկնութիւն առնթեր դրոշմեցի: Երկրորդ՝ հարկեալ զոլով առ ՚ի խնդրոյ քարեմիտ եղբարցն որք են ՚ի սուրբ Աթոռս

Էջմիածին և ՚ի հրահանգս իմաստասիրութեանն կրթեն զանձինս իրեանց, ոչ կարացի անտես առնել. այլ զանց արարեալ զտկարութեամբս իմով յօժարեցայ զայս իրողութիւնս ՚ի յաւարտ հասուցանել. քանզի զայսու ժամանակաւ բազումք էին երևելի վարդապետք, քաջաբանք, բանաստեղծք, աստուածային գրոց քաջք՝ գիտունք և հմուտք. յորոց մի էր և Առաքել վարդապետն փիլասոսն. որ զժամանակագրութիւնըս հայրապետաց և թագաւորաց զեղեցկաւարմար բանիւք դրոշմեալս և իր իշատակ անջնջելի եթող: Երրորդ պատճառ զի մի՛ երևեցայց զքանքարն՝ զոր ՚ի Տեառնէ ընկալայ, ՚ի վարչամակի ծրարեալ և ընդ վատթար ծառային զպատիժն ընդունել. վասն որոյ պատշաճ վարկայ ՚ի սեղանատրս հոգոյ մանկանց եկեղեցոյ բաժանեալ և ՚ի պարտուցս ազատիլ. որպէս և յառաջ քան զայս այլ շարագրութիւնս թարգմանեցի. այսինքն Յովսէփոս պատմագիր, և միս Գերմոսի պատճառաց, և Հարանց վարք որ կոչի Հայելի վարուց, ՚ի լեհաց բարբառոյ ՚ի հայ լեզու փոխարկեցի... Արդ թարգմանութիւն գրոցս եղև ՚ի թուարերութեան տումարիս հայոց ՌԾԺԱ» (1111+551=1662): (Մատենադարան, նույնը, էջ 391—392):

Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանում Արիստագացուն են վերագրվում նրա հետևյալ աշխատությունների հայերեն թարգմանությունները. Պատմութիւն, Լուծմունք, Մատենագրութիւնք (թարգմանութիւն Ստեփանոս Սիւնեցու), Մատենագիտութիւնք (թարգմանութիւն Ստեփանոս Լեհացու), Պատճառք, Մանունք, Եսայեայ համառօտ վերլուծութիւն, Սակս մարդանալոյն Քրիստոսի, Խրատք, Բան Հաւատոյ, թողոթք, Վարք, Յաղագս Աստուածաբանութեան, Յաղագս աստուածային անուանց, Յաղագս դասուց հրեշտակաց, Յաղագս եկեղեցական կարգաց, Յաղագս երկնային քահանայապետութեանց, Մանրանկար, Դայթի և Յակոբայ լուծմունք, սրբոյն Յեռոթեոսի ի տոփականացն օրհնաբանութեանցն մեկնութիւն, Համամ Արևելցոյ բան լուծակ բանից Դիոնիսիոսի... և այլն⁴⁶:

⁴² Encyclopedica... հուլիս, էջ 135, Johannes Quasten, Patrology, vol. I, 1963, էջ 281.

⁴³ Ենորհք արքեպիսկոպոս Գալուստյան, նույնը:

⁴⁴ Մեսրոպ վարդապետ Գրիգորյան, նույնը, էջ 30: Տես նաև «Հայկական հին դպրության պատմություն (Դ—ԺԳ դարեր)», Վենետիկ, 1886, էջ 470—478):

⁴⁵ «Կնիք հաստոյ»... նույնը, էջ XXXII, և Մեսրոպ վարդապետ Գրիգորյան, նույնը, էջ 29—30:

⁴⁶ Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Ա, 1965, էջ 1486, հատոր Բ, 1970, էջ 1304: Տես նաև Լ. Ս. Անաչայան, Հայկական մատենագիտություն, հատոր Ա, 1950, Նորր գրքեր սրբոյն Դիոնիսիոսի, Ե գիրք, էջ XLII, Յարագս երկնային քահանայապետութեանց, վասն եկեղեցոյ քահանայապետութեան, Յաղագս անուանց, Յաղագս խորհրդական աստուածաբանութեան, Թողոթն զանազանք:

Հայերեն թարգմանությամբ մեզ է հասել նաև Արիսպագացու մասին պատմություն կամ մի ինքնակենսագրություն, «Յաղագս ծննդեան, սննդեան և քաղաքավարության և իմաստության, աշակերտին Պողոսի Դիոնիսիոսի Արիսպագացույ»:

Սույն ինքնակենսագրության վերջույն կա հետևյալ հիշատակարանը. «Այս պատմությունն սրբոյն Դիոնիսիոսի ի սուրբ քաղաքն Երուսաղեմ էր թարգմանեալ ի յունականէն ի վիսիականն, իսկ ի մերս թարգմանեաց Յովհաննէս բժիշկ, ՅԻԹ թուականին հայոց» (329—551=880)⁴⁷:

Հայկական ճատընտիրներում նույնպես Արիսպագացուն են վերագրվում երկու ճաներ, «Ի Յարութին Տեառն. «որպէս ասէ Յիսուս» և «Ընդէ՛ր պանծացան ազգք»⁴⁸, ինչպէս նաև մի պատարագամատուոյց:

Արիսպագացու մատենագրական վաստակի հայերեն թարգմանությունների մեջ հիշատակվում են նաև հետևյալները.

1. Պատմությունն սրբոյն Դիոնիսի եպիսկոպոսի, որ է որդի Սոկրատայ գլխատրի Աթենացոց որ կոչի իմաստասիրաց քաղաք. (ինքնակենսագրություն, «պատմեաց յաղագս անձին իւրոյ երանելին Դիոնիսիոս. ես եղբարք, ասէ, իմաստասիրության սիրող»):

2. Պատճառ Դիոնիսիոսի, որ էր որդի Սոկրատայ, յորովայնէ մօրն նուիրեալ իշխանին դիաց:

3. Առ Տիմոթէոս աշակերտ Պողոսի առաքելոյ և եպիսկոպոսի Եփեսացոց, Յաղագս երկնայնոյն քահանայապետության (Առաջին գիրք, ամփոփեալ ի հնգետասան գլուխս):

4. Առ Տիմոթէոս... յաղագս եկեղեցականին քահանայապետության:

5. Առ Տիմոթէոս... յաղագս աստուածայնոցն անուանց (գլուխք երեքտասան):

6. Թուղթ առ Յովհաննէս առաքեալ և անտարանիչ Քրիստոսի:

7. Թուղթ յաղագս մահուան Պետրոսի և Պողոսի առ Տիմոթէոս:

8. Յաղագս խորհրդականի աստուածաբանությանն:

9. Թուղթ զանազանք. առ Գայիոս Ա, Բ, Գ, Դ (Գայիոսը որպէս Պողոս առաքյալի սպասավոր հիշվում է Հովհաննէս ավետարանչի ընդհանրական երրորդ թղթում⁴⁹):

10. Յաղագս անձնիշխան գործոյ և քաղցրության մեկնություն:

11. Տիտոսի քահանայապետի Կրետաց-

ւոյ, խնդրեալ ի նմանէ թէ զի՞նչ է իմաստության տունն, ի՞նչ խառնարանն և ի՞նչ կերակուրք նորս և ըմպելիք:

12. Յաղագս ննջման սրբոյ Աստուածածնին, պատասխանի թղթոյն Տիտոսի ...

13. Թուղթք զանազանք, առ Սուսիպատրոս քահանա, առ Պողիկարպոս (եպիսկոպոս Զմյուռնիայի), առ Տիմոփիղոս, և այլն:

Արիսպագացու կորած մատենագրական վաստակի մեջ հիշվում են նաև՝

Յաղագս նշանական աստուածաբանության, Յաղագս անձին, Յաղագս աստուածային օրհնաբանությանց, Յաղագս աստուածաբանական տպաւորությանց, Յաղագս արդարոյ և աստուածային իրագործության, Յաղագս իմացականացն և զգայեաց⁵⁰:

«Արարատ» ամսագրի 1913 թվականի 586—604 էջերում Կարապետ եպիսկոպոս (Տեր-Մկրտչյանը) հրատարակել է մի արժեքավոր ուսումնասիրություն «Մահմեդական լուծը և նրա բռնության ներքո ծաղկող հայ վարդապետությունները» թեմայի շուրջ, ուր նշվում է մի շարք ձեռագրերի հիշատակարանների հիման վրա, որ միջնադարյան Հայաստանի մեր հոգևոր դրարանցներում ամենայն կարևորությամբ դասավանդվում էին նաև եկեղեցու նշանավոր հայրերի գրվածքներն ու «զուտ աստվածաբանական գրությունք առանձնապես», այդ թվում նաև «մեր եկեղեցում իբրև ընդհանրական եկեղեցվո մեծ վարդապետներից մեկի, Դիոնիսիոս Արիսպագացու գրվածքները»: Այս առթիվ Մայր Աթոռի վաստակաշատ և գիտնական միաբանը, հրատարակել է նաև 600—604 էջերում **Աստուածաբանականը**. «Դիոնիսիոս Արիսպագացույ **Աստուածաբանականը**. Յիշատակարան գրոց»:

Ձեռքի տակ չենք ունեցել Դիոնիսիոս Արիսպագացու հայերենի թարգմանված որևէ աշխատության տպագրությունը:

«Կնիք հաւատոյ» ժողովածուում կան մի քանի հատվածներ Արիսպագացու գործերի /հայերեն թարգմանության տպագրությունից, ըստ հետևյալի.

1. Դիոնիսիոս Արիսպագացույ Աթենացույ՝ առ Գայիոս սարկաւազ (էջ 100—101):

2. Երանելւոյն Դիոնիսեայ... սակս մարդանալոյն Քրիստոսի, ի քանէն որպէս ասէ Յիսուս, որ ամենեցուն առաւելն է (էջ 256—257):

«Կնիք հաւատոյ»-ում կան նաև երկու փոքր հատվածներ Ռեթեոս Աթենացու գոր-

⁴⁷ «Մատենադարան...», նույնը, էջ 382:

⁴⁸ Նույնը, էջ 394:

⁴⁹ Նոր Կտակարան, նույնը, էջ 656—657:

⁵⁰ «Մատենադարան...», նույնը, էջ 381—394:

ծերի հայերեն թարգմանությունների տպագրությունից.

1. Սրբոյն Յտոթէնսի փիլիսոփայի Առ յԱստուածարանականացն Սոփքիրոնացն, որ էր ի հեթանոսականին եղեալ ուսուցիչ Դիոնիսիոսի Արիսպագացոյ, «որ ամենեցուն պատճառն և վերայիակատար Յիսուսի աստուածութիւնն ...» (էջ 99—100):

2. Երանելոյն Յտոթէնսի... յԱստուածարան Սոփքիրոնացն, «և մասն և գրոյրն յինքեան ի միասինն առեալ և առաւելապէս ունելով և նախաբար ունելով» (այսքան միայն, երկու տող, էջ 252):

3. Երանելոյն Յտոթէնսի... յԱստուածարանական Սոփքիրոնացն, «քառեալ ապաւելի ի մէնջ առաւելեացն մտաց և բանի արհմեղով» (էջ 256):

«Կնիք հաւատոյ» ժողովածուում ինչ որ գտնում ենք Յտոթէնս կամ Ռեթէնս փիլիսոփայի անունով, վերցված են նույն Դիոնիսիոսի գրվածներից, որոնց մեջ մի բանի խրթին տեսություններ նա ինքը վերագրել է յուր մտացածին և երբեք գոյություն չունեցած ուսուցչին» (նույնը, էջ XXXIV):

«Էջմիածին» ամսագրի 1978 թվականի նոյեմբերի համարում (էջ 43—48) հրատարակվել է մի հետաքրքիր ուսումնասիրություն, Մայր Աթոռի երիտասարդ միաբան Եզնիկ արեղա Պետրոսյանի կողմից, ուր խոսվում է Մովսես Երզնկացու «Հաւաքումն համառօտ մեկնութեան սրբոյ պատարագին, գոր յառաջագոյն արարեալ է յուսար հարցն», թեմայի շուրջ և ուր նշվում են վերոհիշյալ աշխատության տասը աղբյուրները, որոնց թվում նաև «Դիոնիսիոս» (Արիսպագացու պատարագը, էջ 43): Հրատարակիչը իր ուսումնասիրության մեջ «երկու համեմատություն» առաջ է քերել, առաջինը «Յաղագս երկնային» և երկրորդը՝ «Յաղագս եկեղեցական քահանայապետութեանց» Արիսպագացու աշխատությունից (էջ 45):

Արիսպագացին իր հարազատ և կամ ոչ հարազատ մատենագրական վաստակով, ըստ հայերեն ձեռագրերի հիշատակարանների, բնութագրվում է «աստուածային, երկնապատում... հոգեկեցոյց և յանձնահացուցիչ» հեղինակ և «տիեզերալոյս» վարդապետ եկեղեցու:

ՍՈՒՐԲ ԱՆԴՐԵՍՍՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏ
ՀՈՌՄԻ (315—335)

Ընդհանրական եկեղեցու «երկուսասան վարդապետաց» խմբում երրորդ անունը Հռոմի եպիսկոպոս սուրբ Սեղբեստրոսի

անունն է, որպես Արևմուտքի եկեղեցու հայրապետ:

Մեր եկեղեցական օրացույցում հիշատակվում են Արևմուտքի եկեղեցու հայտնի մի շարք հայրապետների անուններ, որոնց տոնը կատարում է մեր եկեղեցին, և որոնք ապրել և ստեղծագործել են մինչև Քաղկեդոնի ժողովը:

Հայ եկեղեցու տոնացույցը և մեր վկայաբանական գրականության մեջ տեղ գտած Արևմուտքի այդ հայրապետների կամ եպիսկոպոսների մեջ հիշվում են անունները, Բագարատ եպիսկոպոս Սիցիլիայի կղզու Տոմմեն քաղաքի, ըստ ափսոսանքի մշակված աշակերտ ս. Պետրոս առաքյալի, որը «դարձի է քերում Սիցիլիա կղզու քաղաքների և գյուղերի ողջ բնակչությանը... և մկրտում է ավելի քան 40 հազար հոգի»:

Մեր եկեղեցին Բագարատ եպիսկոպոսի տոնը կատարում է Հիսնական առաջին կիրակիի հաջորդ հինգշաբթին, Հռոմի Կղեմես հայրապետի տոնի հետ:

Սուրբ Կղեմես հայրապետը համարվում է ավանդաբար ս. Պետրոս առաքյալից հետո Հռոմի երրորդ կամ չորրորդ հայրապետը, և նույնացվում է Պողոս առաքյալի կողմից հիշված և նրան գործակից Կղեմեսի հետ⁵¹, «որը յառեսարանին նահատակեցան» (տրևեցին, աշխատեցին Ավետարանի բարոգության համար)—ընդ իս Կղեմես հանդերձ:

Կղեմես Հռոմի հայրապետը ըստ մեր Յալամատրքի վկայության հմուտ էր «հելլենական դպրության», թողել է բազմաթիվ աշխատություններ, որոնցից եկեղեցական մատենագրության մեջ հայտնի է նրա՝ 96 թվականին Կորնթոսի եկեղեցուն գրած խմբակը, ինչպես նաև «Մահմանադրություն կանոնաց սրբոց Առաքելոց»-ը:

Կղեմես հայրապետը «փիլիսոփայական սկզբունքներ մտցրեց քրիստոնեական վարդապետության հենց բովանդակության բննադատության մեջ» (Պրոֆ. Ն. Սագարդա, Հույն Արևելքի եկեղեցական աստվածաբանական գիտությունը, ուսերենից թարգմանեց Արտակ վարդապետ Սմբատյան, Վարդաբայան, 1910, էջ 17: Տես նաև Johannes Quasten, Patrology, vol. I, 1966, էջ 42—62):

Առաքելական կանոնների երկրորդ խումբը, որը բաղկանում է 85 կանոններից, և հունարենից հայերենի է թարգմանվել Ե դարում մեր թարգմանիչ վարդապետների

⁵¹ Նոր Կտակարան, Թողթ առ Փիլիպպեցիս, գլուխ Դ 31:

կողմից, կոչվում է «Կանոնք Կղեմայ» կամ «Սահմանադրութիւն Կղեմայ հայրապետի»⁵²:

Արևմտյան եկեղեցու տոնելի սրբերի մեջ հիշվում է նաև Երանոսը կամ Իրենեոսը, որպես «պատկառելի եպիսկոպոս և նահատակ» Լիոնի կամ Լուզդունումի: Ըստ մեր Յայնմատուրք-ի նա համարվում է «մեծ սին աստուածապաշտութեան հաւատոց, աստուածագգեաց հայրապետ և վարդապետ եկեղեցույ, ախոյան ճշմարտութեան և յաղթահարիչ հերետիկոսաց»:

Մեր եկեղեցական մատենագրության մեջ հիշվում է Իրենեոսի «Ցույց առաքելական»-ը կամ «Ապացոյցք առաքելական բարոյութեան» և «Ընդդէմ հերետիկոսաց» աշխատությունները, որոնք հայերենի են թարգմանվել Ե դարում: Իրենեոսի առաջին աշխատությունը փրկվել է լոկ հայերեն թարգմանությամբ և այդ ձևով ծանոթ է գիտական և եկեղեցագիտական շրջանակներին⁵³:

Իրենեոսի հիշատակը կատարվում է Խաչի չորրորդ կիրակիի հաջորդ երկուշաբթի օրը:

Մեր եկեղեցին կատարում է նաև հիշատակը Հոռմի Ստեփանոս հայրապետի, որպես բաշ և գործունյա հայրապետ Արևմուտքի եկեղեցու: Ստեփանոս հայրապետի տոնին կցվել է նաև նրա հետ նահատակվող «քահանաների, սարկավազների և ժողովուրդների տոնը», որոնք նահատակվեցին Հոռմում 257 թվականին⁵⁴:

Մեր եկեղեցին կատարում է նաև «երկոտասան վարդապետաց» խմբում մտած Հոռմի Սեդրեստրոս հայրապետի հիշատակը, տարին երկու անգամ. առաջինը Ծննդյան տոնը կանխող շաբաթ օրը, սուրբ հարսեղ Կեսարացու և ապա հոկտեմբերին՝ «երկոտասան վարդապետաց» տոնին⁵⁵:

Սեդրեստրոս հայրապետը ծնվել է Հոռմում. «էր որդի Հոռուփնոսի և Յուստիայի»: Մանկուց ստացել է քրիստոնեական կրթություն և վաղ հասակից մտնելով հոգևորական ասպարեզի մեջ, «սարկավագության և

քահանայության ատենեն արդեն սկսավ փայլի հոգևորական շնորհներով, այնպես որ հասարակաց զգացման առջև կանուխեն արժանավոր նկատվեցավ Հոռմի հայրապետության ... Աթոռակալեց ավելի քան քսան տարիներ»⁵⁶, և հանդիսացավ «պայծառացուցիչ հաւատոցս քրիստոնէութեան, ի դարձման մեծին Կոնստանդիանոսի»⁵⁷:

«Սեդրեստրոս եղավ այն բախտավոր քահանայապետը, որ ողջունեց քրիստոնեական եկեղեցիի ազատագրումը հալածանքներե, գահակալած ըլլալով Կոնստանդիանոս կաղսեր օրով, 314—335»⁵⁸:

Ընդհանրական եկեղեցու առաջին Տիեզերական ժողովը գումարվում է Սեդրեստրոսի օրով Նիկիայում, 325 թվականին, որին ինքը, սակայն, ներկա չի լինում, այլ երկու ներկայացուցիչներ է ուղարկում:

Սեդրեստրոսի գահակալության շրջանին Հոռմի եկեղեցին բոլորում է հոգևոր շինարարության մի խոստումնալից ժամանակաշրջան:

Սեդրեստրոսը հանդիսանում է «Հոռմեական եկեղեցվո կազմակերպիչներեն մին»⁵⁹, և նրա գահակալության օրերին «սկսված են շինվիլ այն ամենամեծ եկեղեցիները, որոնցմով նշանավոր եղած է Հոռմ. օրինակ, ս. Պետրոսը՝ Վատիկանի մեջ, Լատերանի բազիլիքան, որ Հոռմի Մայր եկեղեցին եղած է իր օրով: ...Եղած է Հոռմեական եկեղեցվո կազմակերպիչներեն ու բարեգարդիչներեն մեկը, ծիսական, վարչական և այլ բոլոր մարզերուն մեջ»⁶⁰:

Ծատ հավանաբար Սեդրեստրոսի անունը մեր եկեղեցական տոնացույցի մեջ է մտել որպես եկեղեցու «երկոտասան վարդապետներից» մեկը, միջին դարերում, երբ Ռուբինյան իշխանության օրով Կիլիկիայում հայ եկեղեցին քաղաքական ակնկալությունների հույսով հարաբերության մեջ էր մտել Հոռմի եկեղեցու հետ:

Ինչպես ծանոթ է, այս առթիվ Կիլիկիայում կաթողիկ եկեղեցին հրապարակ էր հանել «Դաշանց թույթ» անունը կրող կեղծ փաստաթուղթը, ըստ որի իբր թե ս. Գրիգոր Լուսավորիչը Հոռմ է գնացել, «դա-

⁵² «Հայոց եկեղեցական իրավունքք», Ներսես վրդ. Մելիք-Թանգյան, Ա գիրք, Ծուշի, 1908, էջ 85—115: «Կանոնագիրք հայոց», Ա, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, 1964, Երևան, էջ 87—100:

⁵³ «Կնիք հաւատոյ», Առյւնը, էջ XXXIV—XXXV:

⁵⁴ Թորգոմ պատրիարք Գուշակյան, Առյւնը, էջ 150—158: Ծնորհք արքեպիսկոպոս Գալուստյան, Առյւնը, էջ 32—49:

⁵⁵ Թորգոմ պատրիարք Գուշակյան, Առյւնը, էջ 157—158: Ծնորհք արքեպիսկոպոս Գալուստյան, Առյւնը, էջ 49—50: Օրացույց, Առյւնը, էջ 128 և 147:

⁵⁶ Թորգոմ պատրիարք Գուշակյան, Առյւնը, էջ 157:

⁵⁷ «Լիակատար վարք...», Առյւնը, էջ 59: Տես նաև «Լոյս», Առյւնը, էջ 1028:

⁵⁸ Ծնորհք արքեպիսկոպոս Գալուստյան, Առյւնը, էջ 49:

⁵⁹ Թորգոմ պատրիարք Գուշակյան, Առյւնը, էջ 158:

⁶⁰ Ծնորհք արքեպիսկոպոս Գալուստյան, Առյւնը, էջ 49—50:

շինք» կնքելու հայ և կաթոլիկ եկեղեցիների միջև: «Դաշանց թոյթով ս. Սեդրեատրոս կուտա ս. Լուսավորչին ոչ միայն պատրիարքական կամ կաթողիկոսական իշխանություններ, այլ և գերապատրիարքական իրավասություններ, մինչև իսկ Անտիոքս և Աղեքսանդրիո և Երուսաղեմի պատրիարքաց վրա իրավասություն գործածելու իշխանություն»⁶¹:

«Դաշանց թոյթ»-ի քննությամբ չենք զբաղվում այստեղ: Այդ շնորհակալ աշխատանքը վերջին անգամ կատարել է ձեռնհասորեն նաև Օրմանյանը, որը նշում է, թե «Թոյթ» դաշանց ըսվածը Սեդրեատրոսի վավերական գրությունը չէ, այլ խաչակրաց ժամանակներում անվավեր և կեղծյալ մի արտադրություն է»⁶²:

Սեդրեատրոս հայրապետը չի եղել իր մատենագրական վաստակով ընդհանրական եկեղեցու նշանավոր վարդապետներից մեկը:

Այնուամենայնիվ, ըստ մեր ձեռագրերի,

⁶¹ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Աթոռ Հայաստանյայց, Բ տպագրություն, Էջմիածին, 1972, էջ 55:

⁶² Նույնը, էջ 57—71:

թեև անհարազատ, նրան են վերագրվում «Վկայութիւնք յարդազս մարդեղութեան Բանին Աստուծոյ» և «Վասն կիրակեիս» ճաները⁶³ կամ «Եւաք Սեդրեատրոսի Հոովմայ հայրապետին՝ առացեալ վասն կիրակեի»։ Սնհարազատ⁶⁴:

Մեզ հասել է նաև հայերեն թարգմանությամբ «Սոկրատի եկեղեցական պատմության և Սեդրեատրոսի վարքի հայերեն թարգմանության ձեռագիրներ»:


Սեդրեատրոսի վարքի հայերեն թարգմանության (678 թվականին) հարցով զբաղվել են Մայր Աթոռի միաբաններ Մովսես վրդ. Տեր-Մովսիսյանն ու Գալուստ Տեր-Մկրտչյանը (Միաբան)⁶⁵:


Սույն հոդվածով ավարտվում է «Էջմիածին» ամսագրում տպագրված ընդհանրական եկեղեցու «երկոտասան վարդապետաց» նվիրված ուսումնասիրությունների շարքը:

⁶³ Ցուցակ ձեռագրաց..., հատոր Բ, նույնը, էջ 1000:

⁶⁴ «Մատենադարան ...», նույնը, էջ 691:

⁶⁵ Տես այս մասին Մանուկ Աբեղյան, Հայոց մին գրականության պատմություն, գիրք առաջին, Երևան, 1944, էջ 254—258:





Ն. ԹԱՀՄԻՋՅԱՆ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ԵՎ ՀԱՅ ՀԻՆ ՈՒ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵՐԳԱՐՎԵՍԸ

«Հրեշտակ և սպասաոր մեծութեանցն Բրիստոսի յերկրի երկնայինն ցուցեալ այր երկրակնցաղ և լուսաւորիչ խաւարեղոցս, ի վերջին դարուս եղեալ յոյս աննուազ... երկրորդ Սահակ և Մեսրոպ յետ գնալոյ մոցս առ Աստուած»:

ՍԱՀԱԿ ԱՐՄԻՈՒՆԻ

Մովսես Խորենացու նշանավոր «Պատմությունն» իսկ քաղական էր, որ նա արժանի տեղ գրավեք հայ հին երաժշտական մշակույթի տարրեր երեսակներին կապված կարկառուն ներկայացուցիչների փառանգում: Սակայն նրա անունով մեզ հասել են նաև թարգմանական և ինքնուրույն զանազան գործեր, ինչպես և Ծննդյան ու այլ մի շարք հիանալի շարականներ: Դրանց մասնավոր, նպատակամետ քննությունը կարելի էր անտեղծագործական դիմանկարի երաժշտական կողմի լուսաբանության տեսակետով:

Նախապես անհրաժեշտ է անդրադառնալ Մովսես Խորենացու կենսագրությանը վերաբերող այն տվյալներին, որոնք առընչվում են մեր նյութի հետ: Խորենացին Սահակ-Մեսրոպյան կրտսեր աշակերտներից է¹: Այդ նշանակում է, որ նա ժամա-

նակին եղել է հայկական նորաստեղծ դրպրոցների համար հանձնարարված այն տղաների շարքում, որոնք մեր պատմահոր իսկ վկայությամբ, հատկապես ընտրված էին՝ որպես «ուղեղ» (կարի հիշողություն ունեցող), «քաջասուն» (ուշիմ, խելացի, քաջ-ասուն, այն է՝ լավ ասող-երգող), «փափկաձայն» (քաղցր ձայնով) ու «երկարոզի» (երկար շունչ ունեցող, երգելու ընդունակ)²: Տարրական կրթությունը (որ

Բարդ շրջադարձերին: Բավական է հիշեցնել, որ Խորենացու անձի և գործի մասին հայ հին ու միջնադարյան մատենագրության մեջ հաստատված և արդի բանասիրության մեջ էլ սկզբնապես ընդունված պատկերացումները գիտականորեն նորովի հիմնավորելու կողմնակիցների մեջ դեռևս մտտիկ անցյալում կային փայլուն դեմքեր, ինչպես Նորայր Բյուզանդացին և Հ. Հակոբոս Տաշյանը. և թե ու ղեմ ամենատարրեր կարծիքների բախումներից հետո էլ համոզական մեծ ուժով օժտված նույն դիրքերը ավելի ևս ամրապնդեցին այնպիսի հեղինակություններ, ինչպես Հր. Աճառյանը, Մ. Արեղյանն ու Ստ. Մալխասյանը:

² Տես Մեսրոպ Մաշտոցն ու հայոց հոգևոր երգարվեստը, «Բանբեր Մատենադարանի», № 7, Երևան, 1964, էջ 179:

¹ Այժմ մենք ավելորդ ենք համարում նույնիսկ հատուկ անդրադառնալ հայրենական ու եվրոպական խորենացիագիտության ընդհանուր հարցերին, նրա ծագման ու զարգացման հանգամանքներին, արդեն լուծված հանգույցներին և հաղթահարված

Էր՝ գրանաւաշարում, վարժ ընթերցանութիւն ու երգեցողութիւն), Տարունի Խորունք՝ գյուղի դպրոցում լրացնելուց հետո, որպէս հաջողակ աշակերտ ուղարկվում է Վաղարշապատ՝ ուսումը շարունակելու կենտրոնական վարժարանում, ուր դասավանդում էին ոչ այլ ոք, քան Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը:

Վաղարշապատի դպրոցում հինգ-վեց տարի սերտելով լեզուներ (հունարեն, ասորերեն), խորանալով եղյակ գիտությունների կամ արվեստների մեջ (քերականություն, հռետորություն, տրամաբանություն), Խորենացին միաժամանակ շարունակում է գործնական երգեցողության դասերը՝ կապված նույնիսկ ամենօրյա ու կիրակնօրյա սյաշտոներգությունների հետ:

Ու այստեղ էլ աչքի ընկնելով բացառիկ առաջադիմութեամբ, լայագա պատմահայրը իրավունք է ձեռք բերում, մի խումբ շնորհալի այլ երիտասարդների հետ միասին Ալեքսանդրիայում բարձրագույն կրթություն ստանալու, ուր և մեկնում են, հավանաբար, Եփեսոսի ժողովից (431-ից) հետո:

Ի՛նչ են ուսումնասիրում նրանք այդտեղ: Այն ամենը, ինչ անհրաժեշտ էր հայ ազգային մշակույթի կառուցման համար, և ինչ հնարավոր էր Արևելքի և Արևմուտքի այլ խոշոր խառնարանում, նրա նշանավոր ուսուցչապետների ցուցմունքներով ու աշխարհահռչակ Մատենադարանում: Փրիտփայտություն և քերթողություն, լեզուներ և թարգմանական արվեստ, պատմական-գրական հին աղբյուրներ և քառյակ գիտություններ (թվաբանություն, երաժշտություն, երկրաչափություն ու աստղաբաշխություն), այլև քրիստոնեական ծեսը, արարողությունն ու պաշտոներգությունը, որոնց կազմավորման հնագույն օրրաններից էր Ալեքսանդրիան:

Ի դեպ, այս ամենի մասին որոշակի հիշատակություն ունի Սահակ Պարթևի անանուն կենսագիրը, որի գրվածքի մեզ հետաքրքրող հատվածը պիտանել էինք ժամանակին՝: Անհրաժեշտ է ընդգծել, որ ինչպէս ցույց են տալիս հատկապէս Մովսէս Խորենացու հետագա գործունեության հանգամանքները, նա Ալեքսանդրիայում ևս ըստ ամենայնի կարևորել է պաշտոներգու-

թյան, և նույնիսկ ավելի լայն՝ ընդհանրապէս երգ-երաժշտության, հին ու նոր երգերի հարաբերության, ազգային լեզուներին կապված հոգևոր երաժշտության և այլ կենսական երևույթների հետ առնչվող հիմնական հարցերը:

Արտասահմանից Խորենացին իր ընկերակիցների հետ վերադառնում է մոտավորապէս 440 թվականին, և կամ դրանից ոչ շատ ուշ, մի ժամանակ, երբ դեռևս նոր էին վախճանվել ս. Սահակն ու ս. Մաշտոցը: Հայտնի է, որ ինչպէս Խորենացին, այնպէս և նրա ընկերակիցները, Հայաստանում հանդիպում են սառն ու թշնամական վերաբերմունքի: «Հունասիրության» խնդիրը մատի փաթօցը դարձած հետադեմ հոգևորականներն այստեղ փրափորական արհամարհանքի և հետգհետե սաստկացող հալածանքների ենթարկեցին նրանց: Իսկ Խորենացուն նրանք շուրջ երեսուն տարի թախտակակն կշանքի, ամոթալի աղքատության և անլուր գրկանքների դատապարտեցին: Լոկ երջանիկ դիպվածը, Գլուտ կաթողիկոսի գահակալության վերջին տարիներին, իսպառ կործանումից փրկեց Խորենացուն էլ, ու նրա դեռևս չգրված «Պատմությունն» էլ:

Ըստ նյիրական մի ավանդության, որը, ինչպէս իրավացիորեն նշում է Ստ. Մախապյանը՝ «համապատասխանում է» թե՛ Դ. Փարպեցու հաղորդած տեղեկություններին. և թե՛ Խորենացու «Պատմությունից» քիտղ հետևություններին՝, մեր պատմահայրը տարիներ շարունակ նույնիսկ ծպտյալ թաքնվելիս է եղել Վաղարշապատի գյուղերից մեկում, մինչև որ, ի վերջո, ճանաչել են նրան, այն էլ մի չըքնաղ մեղեդի երգելիս: Գրվածքում, որ ունի «Յաղագս սրբոց վարդապետացն հայոց Մովսէսի և Դարթի» խորագիրը, ընդհանրապէս պատմվում է երկու հեղինակների մասին, որոնք «Աթենականք» են անվանվում: Տեղ-տեղ, սակայն, շարադրանքն անհրաժեշտաբար մասնավորվում է մեկի կամ մյուսի շուրջ: Առաջ քերենք մեր նյութին վերաբերող հատվածը:

«Դարթի յայտնի կացեալ յաշխարհին Հայոց, և Մովսէս ծածկէր զինքն կարկատուն զգետտով և գծոմ կերպարանօք զնացեալ ի գեղ մի ի Քաղաքաղաշտին և կացեալ անդ որպէս մուրացիկ և ոչ ոք էր որ ճանաչէր զնա. իսկ Դարթի և Մամբրէ, և Պողոս և Աքրահամ, ընկերք Մովսէսին կացին յերևանի: Եւ էր ի ժամանակին

³ Հմմտ.՝ Մովսէս Խորենացի, Հայոց պատմություն (թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ ակադ. Ստ. Մախապյանի), Երևան, 1961, էջ 9 (ներածություն):

⁴ Տես Ս. Սահակ Պարթևը և հայ եկեղեցական երգարվեստը, «Էջմիածին», 1973, Ը, էջ 13:

⁵ Մովսէս Խորենացի, Հայոց պատմություն, նշվ. հրատ., էջ 18 (ներածություն):

յայնմիկ կաթողիկոս Հայոց Տ. Գիտ աշակերտակից Մովսէսի: Արդ ոչ գրովանդակ գվարսն ասացաք, այլ գրագումս թողով գվարսն ճգնութեան անցա: Եւ արարին խընդիր Մովսէսի ընդ ամենայն աշխարհն Հայոց և ոչ գտին զնա. և կաթողիկոսն և եպիսկոպոսունքն և իշխանքն առ հասարակ ունէին սուգս ոչ սակաւ վասն ոչ գտանելով զնա: Իսկ հայրապետն Գիտ ելեալ հաստատեր զկարգս եկեղեցոյ աշխարհին Հայոց. և հաստատեաց զաթոռ իր ի Դփին քաղաքի: Իսկ ի շրջելն իրում եկեալ ի գեղըն յայն՝ յոր էր թագուցեալ անթագչելի գանձն և անթօն, ամանն լուսոյ՝ Մովսէս, և ելեալ ընդ առաջ նորա առ հասարակ ծեր և տղայ, և բերեալ իջուցին զհայրապետն ի տեղի պատուական, և արարին ուրախութիւն մեծ զօրն զայն. և ի գինարբոս սկըսեալ իշխանքն և քահանայքն առաջի հայրապետին, նստեալ էր և Մովսէս ի քազմականին, և ոչ ոք ճանաչէր զնա՝ բաց յաշակերտէն. և սկսան ուրախ լինել. և մի առ մի յարուցեալ երգելին երգ առաջի հայրապետին: Եւ մի ոմն ասէ ցնա. Ո՛վ պատուական ծեր, ասա բան ինչ շնորհաց հայրապետիս: Իսկ նա արտասուեալ և ասէ. Օտարական եմ. և նա համբորէր զայիս նորա: Եւ յիշեաց Մովսէս զբան Փրկչին, թէ ոչ կարէ ոք լուցանել զճրագ և դնել զմահճօք, այլ ի վերայ աշտանակի զի լոյս տացէ: Եւ յարուցեալ եկաց առաջի հայրապետին, և սկսեալ բանս երածշտականս այսպէս. «Ո՛վ Արքայակերպ, Տէր, Քահանայապետ, Սուրբ, և Հովուապետ բարի, որ երկնայնոց նմանեալ... և որ ի կարգին ասացեալ երիս տունս: Իսկ հայրապետն և բազմականքն ճիսցեալ և սկսան քննել զնա. և աշակերտ նորին յառաջ անցեալ և ասէ. «Ո՛վ սուրբ հայրապետ, այս է կորուսեալն ի ձեզ Աթենացին Մովսէս՝ աշակերտ սուրբ հարցն Սահակայ և Մեսրոպայ»⁶:

Գրավոր մեզ հասած այս ավանդության մեջ կան և առանձին քննելի կետեր: Դրանք, սակայն, չեն վերաբերում մեր նյութի հետ ուղղակի կապված հարցերին: Մեզ համար կարևոր է, որ նրանից մենք տեղեկանում ենք Խորենացու երածշտական բացառիկ կարևոր մի ստեղծագործության մասին (որին, քարտեախտաբար, հանդիպել ենք խազավոր հին ձեռագրերում էլ, ինչպես կտեսնենք), և մի ընդհանուր գաղափար ենք կազմում պատմահոր երգիչկատարող ու ընդհանրապես՝ նաև երա-

ծիշտ լինելու վերաբերյալ: Դա երևում է Խորենացու ողջ կենսագրությունից էլ, ու, ինչպես նշեցինք, նույնիսկ նրա «Պատմությունից»:⁷ Խոսքը մասնավորելով վերջինիս շուրջ պետք է նկատել, որ այն՝ հայ հնագույն առասպելների, ժողովրդական երգերի, դիցաբանական պատումների ու վիպական բանահյուսության վերաբերող մեր գիտանքի գլխավորագույն աղբյուրն է: Այնտեղից էլ, որ մենք գեթ ընդհանուր առմամբ տեղեկանում ենք հայոց երածշտաբանաստեղծական հնագույն ձևերից մեկին՝ ասմունքելով ու մեջընդմեջ երգելով պատմըված յուրատեսակ պոեմին, որն իր զարգացման մեջ առատորեն նյութեր է քաղել հայերի սկզբնական պատմության և ավելի շատ՝ սկզբնական կրոնի (դիցաբանության) հետ կապված գրույցներից ու առասպելներից: Այդ ձևին վերաբերող ստեղծագործություններից հինգը՝ Հայկի և Բելի, Արամի, Արա Գեղեցիկի ու Ծամիրամի, Վահագն Վրշապաբարի և Տորք Անգեղի մասին առասպելները սիրով մեջբերում կամ վերապատմում է Խորենացին, դրանք անվանելով մերթ «գրույց», մերթ «երգ» ու «առասպել» և մերթ էլ «գուսանական»⁷: Խորենացու ժամանակներում այդ առասպելները կատարել են նաև գուսանները: Սակայն, ընդհանրապես ասած, դրանք սկզբնապես երգել է ժողովուրդը, մոտավորապես՝ հին ցեղապետ-հերոսների աստվածացման շրջանում, այնպես որ մ. թ. ա. VI—IV դարերում դրանք արդեն իսկ ներկայացրել են հայկական կազմավորվող ավանդական բանահյուսության մասը: Նըշված ժամանակահատվածի վերջերից ձևավորվում են հայկական էպոսի հնագույն այն շերտերը ևս, որոնք վերաբերվելով մ. թ. ա. VI դարի դեպքերին՝ հայոց ու մարերի փոխհարաբերություններին, քիչ ավելի ուշ հարակցվում են վիպական երգերի ավելի մեծ շարքերին: Հանդես են գալիս ժողովրդա-պրոֆեսիոնալ տիպի բանաստեղծերածիշտ-կատարողները՝ վիպասանները, գուսաններն⁸ ու վարձակները (կին գուսան-

⁷ Մովսիսի Խորենացու Պատմություն հայոց, Տիփլիս, 1913, էջ (համապատասխանաբար), 32—37, 42—48, 48—49, 85—86, 114—115:

⁸ Թե՛ վիպասան և թե՛ գուսան խոսքերը բավական ազատ է օգտագործում Խորենացին, և սակայն, ուշադիր ընթերցումը ցույց է տալիս, որ պատմահայրը ընդհանուր առմամբ գիտե, թե վիպասանը ավելի հին երևույթ է հայոց կյանքում (և խոսքն էլ ավելի հին ու տոմսիկ է): Միանշետ գուսանը, որ ունի ժանրային տեսակետով ավելի հարուստ երգացանկ, համեմատաբար նոր երևույթ է

⁶ Գարեգին վրդ. Մովսէսեանց, Հնոց և նորոց, Կ. Պոլիս, 1874, էջ 79—88:

ները), որոնք ժողովրդական քանահյուսության համեմատությամբ զարգացման մի նոր ու նշանակալի աստիճանի են քարձրացնում հաշվական ծիսական, առասպելական, պատմական (փիլակական) և այլ երգերը: Հատկապես զարգանում են «վէպ» «փիլասանք», «երգ փիլասանաց» ու «թունելեացն երգք» կոչված փիլերգերը, որոնցից՝ Սանատրուկի, Երվանդի, Արտաշէս Ա-ի, Արտավազդ Ա-ի, Տիգրան Բ-ի, Արտավազդ Բ-ի և այլոց վերաբերողները մեջբերում կամ վերապատմում է դարձյալ՝ Խորենացին⁹, տեղ-տեղ ակնարկելով, որ նման տիպի աստղծագործություններն ևս կատարվելիս են եղել հնագույն սիմկրետիկ արվեստի բոլոր միջոցներով՝ ասմունքելով ու մեջբնդմեջ երգելով, պարի, դիմաշարծության և լարային կամիթալոր «փանդիո» կոչվող գործիքի նվագակցությամբ. «ի նուսագ վանդոնան և յերգս ցցոց և պարոց»¹⁰: Եվ Խորենացին է, որ մեզ տեղեկություններ է տալիս նաև հեթանոս Հայաստանի հար-

(և ինչը խոսքն էլ փոխառություն է պահպանելից): Նկատարժան պարագա է, որ ոչ միայն, ասենք, Ագաթանգեղոսը, այլև նույնիսկ Լազար Փարսեցին չունեն գուսան, այնինչ օգտագործում են «վէպ» և «փիլասանեք»: Բուզանդը դարձյալ օգտագործում է երկու խոսքերն էլ: Բայց նկատելի է, որ երբ ակնարկում է պատմական հիմ երգերը, առավելապես կիրառում է վէպ, փիլասանություն երկերը:

⁹ Մովսիսի Խորենացու Պատմութիւն հայոց, նշվ. հրատ.-ը, էջ (համապատասխանաբար) 159—161, 161—168, 168—171, 191—192, 71—83 (Տիգրան Բ-ի մասին՝ առասպելախառն, հարակցումներով և իհաս անաբբունիզմներով) և 137—138 (Արտավազդ Բ-ի մասին՝ սրա քարձր կերպարն աղավաղով հարակցումներով):

¹⁰ Նույն տեղում, էջ 27 (նաև 75, 84, 86 և այլուր): Գծրախոսարար, Խորենացու մի քանի անգամ հիշատակած ու «քամիտն», «քանդիտն» կամ (և ամելի ճաշտ) «փանդիոն» կոչված նվագարանի, նրա կիրառման եղանակի, լարվածքի և այնի վերաբերյալ մասնավոր տեղեկություններ պահպանված չեն: Մեր պրպտումները մեզ բերին հավանական ենթադրության, որի համաձայն՝ «փանդիոն»-ը եղել է չորս կամ, համննայն դեպ, երեք լարանի գործիք (տես մեր հոդվածը՝ Ներդաշնակության նենքի ուսմունքը միջնադարյան Հայաստանում, V—VI դարերում, «Պատմա-քանափրական հանդես», Երևան, 1966, № 1, էջ 82—84): Ինչ վերաբերում է Խորենացու օգտագործած՝ «երգք ցցոց և պարոց» արտանայտության, ապա այն՝ Մ. Արեղյանը մեկնաբանել է որպես քնարական կարճ տներով սյարերգի տեսակներ (տես «Արարատ», 1901, էջ 250):

սանեկան ու թաղման ծեսերի¹¹ և ռազմական պղնձյա փողերի կիրառման մասին¹², վարձակների երգաստեղծական գործունեության ու նրանց հորինած երգերի տեսակներից մեկի վերաբերյալ¹³:

Աստիճանաբար մոտենալով Հայաստանում քրիստոնեության հաստատման ժամանակներին, Խորենացին բացառիկ արժեքավոր տեղեկություն է հաշտնում այն մասին, թե ինչ նպատակներով ասորի քրիստոնյա նշանավոր գիտնական և մեծ քանաստեղծ-երածիշտ Բարսամանը III դարի սկզբներում այցելել է Հայաստան¹⁴, և թե ինչպես այստեղ IV դարում «յունականան վարելին եկեղեցույ կարգք»¹⁵: Վերջապես դժվար է գերազանահատել Խորենացու խոսքերը Մեսրոպ Մաշտոցի գործունեության վերաբերյալ, որտեղից պարզ երևում է, թե ինչ տեղ ու ինչպիսի նշանակություն է ունեցել երգ-երածիշտությունը հաշվական նորաստեղծ դպրոցներում. «Ընդ այն ժամանակս եկեալ Մեսրոպայ, և բերեալ զնշանագիր մերոյ լեզուիս, և հրամանա Վուսմշապհոյ և մեծին Սահակայ ժողովեալ մանկունս ընտրեալս, ուղեղս և քաջասունս, փարկիւնայնս և երկարոգիս, և դպրոցս կարգեաց յամենայն գաւառս և ուտոց»¹⁶: Իսկ Սահակ Պարթևի մասին խոսելիս պատմահայրը հաղորդում է, որ նա տակավին գրերի գյուտից առաջ աշակերտ-

¹¹ Նույն տեղում, էջ 179 (Արտաշես Ա-ի հարսանիքի մասին. «տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշեսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեանն Սաթիկական» երգը): Եվ էջ 191 (նույն միակտի հուղարկավորության նկարագրությունը. «և տաօթի պղնձիս հարկանելով փողս, և զկնի կուսանք ձայնարկուք սևագեատք և աշխարող կանայք, և զկեսո՝ բազմութիւն ոսմկին»):

¹² Նույն տեղում, էջ 171:

¹³ Նույն տեղում, էջ 278 (Արշակ Բ-ի մասին. «Հանապազ ի զհնարրուս և յերգս վարձակաց, քաջ և արի երեսալ քան զԱքիլլես», որտեղից երևում է, որ վարձակները փաստորեն ներթողներ էին ձոնում արքային):

¹⁴ Նույն տեղում, էջ 201 (Մինչև Խորենացու ժամանակներում իսկ հարատևած կարծիքի համաձայն, Բարդսամանը Հայաստան այցելել է գիտական նպատակներով, որ և նշում է պատմահայրը: Սակայն, չափազանց դժվար է չտարվել այն մտքով, որ Բարդսամանը Հայաստան եկավ գլխավորապես քարոզչական նպատակներով, կամ այցելելու համար այստեղ գոյացած քրիստոնեական գաղտնի համայնքները, որը և հնուց ի վեր ենթակա չի եղել հրապարակման ու պոպուլյար էլ մնացել է:

¹⁵ Նույն տեղում, էջ 301:

¹⁶ Նույն տեղում, էջ 328:

ներ է ունեցել, թվով 80, որոնց հետ միասին ժամանակի մեծ մասը հատկացրել է պաշտոններգությանը. «Քանզի ստացաւ աշակերտս վաթսում ըստ նմանութեան մայրաքաղաքացն սպուդէից, արք կրօնաորք, խարազնագգեստք, երկաթապատք, բոկազնացք, որք յար ընդ նմա շրջէին. որովք մշտընջեմաւոր պաշտմամբ կատարէր ըզկանոնն, որպէս զայն որք յանապատսն էին, և հոգայր զաշխարհս, որպէս զայն որք յաշխարհի են»¹⁷: Խորենացին փաստորեն առաջ է քաշում Սահակի կյանքին ու գործին նվիրված առանձին աշխատության ահրաժեշտությունը ևս, ու նույնիսկ խոստանում է՝ «այլում տեղոյ և ժամանակի»՝ «հրաշափառագունի անցանել քանի, ըստ արժանի սրբոյ հօրն դրուատից»¹⁸, սակայն, ըստ եղած տվյալների, ցավոք, չի հասցընում կատարել¹⁹:

Նախընթացի լույսի տակ միանգամայն խոսուն են դառնում Խորենացու երաժշտա-բանաստեղծական գործունեությանը վերաբերող ու մեզ հասած այն փաստերը, որոնց դասակարգումով և ուսումնասիրությանը նուրբագծվում է մի հարուստ պատկեր՝ հռետորական կենդանի շնչով տոգորված ճառերից ու ներբողներից մինչև ծաղկուն երգարվեստի վիպա-քնարական անկրկնելի կոթողները: Այն, որ Խորենացին մեծապես հմտացած է եղել ճարտասանական կամ հռետորական արվեստի մեջ, երևում է ոչ միայն թարգմանական «Պիտոյից գրքից», այլև նրա «Պատմությունից» (առանձնապես՝ եզրափակիչ նշանավոր «Որբքից»), ինչպես և նրա այլպես կոչված «մանր» գրվածքներից. Հոգվոց վանքի պատկերի պատմությունից, Հոփսիմաններին նվիրված ներբողից ու Վարդավաթի ճառից²⁰: Դա գիտակցել են հին ու միջնադարյան հալ մատենագիրները և նույնիսկ որպես «մեծ հռետոր» են ճանա-

չել Խորենացուն²¹: Իսկ հռետորության, բանաստեղծության ու երաժշտության միջև հնուն եղած ամենասերտ կապերի մասին փոքրիշատե գիտենք արդեն²²: Ըստ «Օրհնութիւնաբեր ցուցակի», Խորենացին է թարգմանել ու բերել Գրիգոր Աստվածաբանի «Սերմնօրհնէքը» (կալի և հնձանի), և մինչ այդ ու հետագայում ևս հավաքված այլ նյութեր կարգի է դրել²³: Ձեռագիր աղթագրքերում և ժողովածու տիպի մատյաններում ոչ հազվադեպ պատահում է Խորենացու տարածված աղոթքներից մեկը՝ «Աղաչեմ զքեզ Տէր, թող ինձ զմեղս իմ, որպէս կամիս» սկզբնաբառերով, «Աղօթք Մովսէսի Քերթողի սուրբ հօրն», կամ «Մովսէս Քերթողի ասացեալ»²⁴ ու նման խորագրերի տակ:

Ըստ «Յաղագս սրբոց վարդապետացն հայոց Մովսէսի և Դարթի» գրվածքի, Խորենացին երգել է «Ով Արքայակերպ, Տէր, քահանայապետ» սկզբնառատներն ունեցող մեղեդին: Մեր Մատենադարանում պահվող ընտիր զանաարաններից մեկում հանդիպել ենք Խորենացու անունով պահպանված երկու մեղեդիի: Մեկն է քննարկվող ստեղծագործությունը՝ նվիրված Գրիգոր Լուսավորչին, հետևյալ խորագրի տակ՝ «Մեղեդի Սուրբ Լուսավորչին Մովսէսի Քերթողի ասացեալ»²⁵: Մյուսը նվիրված է Տրդատ Գ-ին. «Մեղեդի Տրդատայ թագաւորին ի Մովսէս Քերթողէ»²⁶:

Ինչպես երևում է առաջ քերված ձեռագրական էջերից, երկու մեղեդիներն էլ բավական բարդ խազավորում ունեն և իրենց երաժշտանշանագրային հյուսվածքով իրոք շատ մոտիկ են այն ստեղծագործություններին, որոնք զանաարանային կանոններում տեղադրված են լինում օանձներից ու տառերից հետո և կոչվում են «մեղեդի»: Վերջիններս, ինչպես տաղերը, ընդհանրապես ասած, մեծ ծաղկում են ապրում հատկապես զարգացած ավատատիրության շրջանում: Սակայն դրանց առաջին նմուշ-

¹⁷ Նույն տեղում, էջ 320 (Խորենացու վերջին խոսքերը՝ աշխարհականների հոգևոր կարիքները ևս հոգալու մասին, փաստորեն վկայում են, որ ս. Սահակն իր 80 աշակերտներով մինչև գրերի գյուտը զբաղվել է նաև բանավոր թարգմանություններով, զանգվածներին սովորեցնելով հայերենի վերածված սատմաներ, աղոթքներ, բացատրելով դրանց իմաստը և այլն):

¹⁸ Նույն տեղում, էջ 355—358:

¹⁹ Այլապես մենք կունենայինք նաև «Վարք Սահակի Պարթևի» և կամ նման խորագրով մի աշխատություն, ի լրումն Կորյունի «Վարք Մաշտոցի» հոյակապ գրքի:

²⁰ Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1865, էջ 272—388:

²¹ Լ. Գ. Զարպհանայան, Հայկական հին դպրություն, Վենետիկ, 1897, էջ 384:

²² Հմմտ. մեր հողվածը՝ Անանիա Նարեկացու և Նարեկա վանքի երաժշտական ավանդությունների մասին, «Էջմիածին», 1976, № 8—9, էջ 32—33:

²³ Լ. Գ. Զարպհանայան, նշվ. աշխ.-ը, էջ 385—386:


²⁴ Լ. Լ. Տաշյան, Յուրակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 474 և 824:

²⁵ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 3503, էջ 274բ:

²⁶ Անդ, էջ 70ա:

ներն ստեղծված են շատ ավելի վաղ ժամանակներում: Մի քանի տարի առաջ մեր հոդվածներից մեկում առաջ էինք բերել Ստեփանոս Սյունեցի Բ-ի անունով, այն է՝

վորումով հանդիպում է հայկական միջնադարյան գրչագիր վերոհիշյալ արժեքավոր ու վստահելի նույն զանձարանում²⁷), ի լրացումն մեծ երախտավորի երաժշտական



Պատկեր Ա.

(Մատենադարան, ձեռ. 3503, էջ 274բ)

VII—VIII դարերից պահպանված Խաչի երկու տաղ²⁷: Ու հիմա ևս ներկայացնում ենք՝ Սահակ Պարթևի անունով պահպանված Ծննդյան մի տաղ՝ «Պարագրի անպարագրելի բանն» (որ դարձյալ ճոխ խազա-

գործունեությանն ու ժառանգությանը նվիրված մեր հոդվածի²⁸):

Այս բոլորը ցույց են տալիս, որ տաղերի


²⁷ Տես «Էջմիածին», 1973, № 2, էջ 32—33 (Սյունեցի համանուն երկու երաժիշտներ և Հարության ավագ օրհնությունները):

²⁸ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 3503, էջ 48ա—բ (տե՛ս նաև ձեռ. № 5521, էջ 10բ—«Մեղեդի անոջ ի Սահակայ Պարթևէ»):

²⁹ Տես Սահակ Պարթևը և հայ եկեղեցական երգարվեստը, 1973, № 8:

ու մեղեդիների առանձին նմուշների հորինումը V—VIII դարերում օրինաչափ երկվոյթ էր (չնայած ընդհանրացած չէր), և որ Խորենացու երաժշտա-բանաստեղծական ժառանգությանը վերաբերող ձեռա-

Պատմագիրներից Կիրակոս Գանձակեցին՝ Սահակ Պարթևի, Մեսրոպ Մաշտոցի և Արքանց ավագ ու կրտսեր աշակերտների երաժշտական արժանիքներն ու վաստակը դրվատելիս, բնականաբար, հիշատակում




Պատկեր Բ

(Մատենադարան, ձեռ. 8508, էջ 70ա)

գրական ցուցմունքներն ու պատմագրական տեղեկությունները, ստուգման-ճշգրտման կարող լինելով հանդերձ՝ առհասարակ արժեքավոր, վաստակություն ներշնչող տրվյալներ են: Դրանց մեծագույն մասը վերաբերում է Խորենացու ստեղծած կցուրդ տիպի հոգևոր երգերին կամ շարականներին:

Է Մովսես Խորենացուն ևս (խորին ակնածանքով «Քերթողահայր» անվանելով Արքան) ու ավելացնելով, որ «արարին և երգրս շարականաց քաղցր և գեղեցիկ եղանակաւ և մեծ խորհրդով», թվարկումն սկսում է «Մենդեան Քրիստոսի» շարական-

Ներքից³⁰: Մտուպորապետ նույն ժամանակներից (XIII դարի կեսերից) մեզ հասել է նաև Վարդան Արևելցու (Մեծն)՝ «Անթուան ծաղիկ» շարականի մեկնությունը, որ նշանավոր մատենագիրն ու երաժիշտ-բա-



Պատկեր Գ

(Մատենադարան, ձև. 3503, էջ 48ա—բ)

նաստեղծը գրում է. «Զի թէ մեր թարգմանիչն և հոգեշարժ վարդապետն Մովսես Խորենացին ասացեալ է զԾննդեան և զՅարութեան երգս շարականաց, և թէ մեծն և հանդիսաւոր ճգնաւորն Բարսեղ, մականուամբ Ծոնն կոչեցեալ, որ և ստուգեն թէ էօթն անգամ ետես զՔրիստոս, և խօսեցաւ իբր թէ ընդ բուն բարեկամի, ապա չէ պարտ պակաս հայել ի խորհրդաւոր բանքս յաչս քան յառաքելական առանդութիւնս. քանզի ի նոցանէ և ի նոյն հոգւոյ խօ-

³⁰ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց. աշխատութեամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 28—29:

սեցեալ եղև հաւասարապէս՝ որ ասէ Անթուան ծաղիկ»³¹:

Մենք արդեն ստի՞ ունեցել ենք նշելու, որ հատկապէս Բարսեղ Ծոնի երաժշտաբանաստեղծական վաստակի մասին Արեւելցոյ հաղորկած սույն տեղեկությունը թեև այրուտ հայտնի չէ մեզ, և սակայն ուշագրբաւ է: Կարելիութեան սահմաններում հիմնավորել ենք, որ ամենայն հավանականութեամբ Բարսեղ Ծոնի հեղինակությունն են «Մեծացուցէք Յարութեան» կոչվող ան-դկ յորահատուկ կարգի շարականների մեծ մասը. շարականներ, որոնք անմիջաբար կապված են թէ՛ Ծննդեան և թէ՛ Հարութեան երգաշարքերի հետ³²: Այնպէս որ, ուղղելի են ձեռագրական հատ ու կենտ այն ցուցումներն ևս, որոնք «Մեծացուցէք Յարութեան» կարգը վերագրում են Մովսես Խորենացուն³³: Խորենացին հորինել է եկեղեցական տարբեր տոների նվիրված բազմաթիվ շարականներ, այդ թվում և Հարութեան առանձին երգեր, ինչպէս կտեսնենք: Սակայն, Հարութեան ան-դկ ծավալուն շարքերը գոյացնող շարականների մեծամասնությունը, ըստ մի ամբողջ շարք ձեռագրական տվյալների, պատկանում է Ան-

³¹ Տեսութիւն Անթուան ծաղիկի արարեալ Վարդանայ մեծ վարդապետի, Երուսաղէմ, 1834, էջ 6: Ի դեպ, չգիտենք, թե միջին դարերում ովքեր են «պակաս հայել» Արևելցոյ հաղորդած հատկապէս ո՞ր տեղեկություններին: Սակայն, ինչ վերաբերում է մասնավորապէս Խորենացոյ երաժշտա-բանաստեղծական գործունեութեանը կապված փաստերին, հայտնի է, որ դրանք թեական և կամ նույնիսկ կապակմանի համարվեցին արդի հայագիտութեան մեջ, նրա զարգացման որոշակի մի շրջանում: Չենք ուզում կանգ առնել այդ կապակմանի վրա այժմ, երբ ողջ հայագիտութեան չափացույցերով հաջողապէս հաղթահարվել են տակալին մտաւոր անցալին հատուկ մի շարք ժխտական դիրքորոշումներ, և երբ ըստ արժանվույզ գնահատվելով հրապարակ են քերվել արդեն այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են, ասենք, շարականների հեղինակների միջնադարյան ցուցակները (տես Լ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ա, Երևան, 1959, էջ LXV—LXXIV):

³² Տես մեր հոդվածը՝ Բարսեղ Ծոնը և մասնագիտացված երգաստեղծութեան ծաղկումը Հայաստանում VII դարում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1972, № 1:

³³ Հմմտ. Լ. Յ. Տաշեան, Յուցակ հայերէն Ձեռագրաց Մատենադարանին ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 523:

նիա Օհրակացու գրչին³¹: Ուստի, Արևել-
ցուց մեջբերված խոսքերում Խորենացուն
վերաբերող կարևորագույն կետը՝ Ծանդյան
երգերն հորինած լինելու փաստն է: Եվ ի-
րոք, շարականաստեղծության բնագավա-
րում պատմահոր հիմնական վաստակը
կազմում է Ծանդյան ութ օրերի կանոնները
բաղկացող երգերի ստվար մեծամասնու-
թյունը, որ նույնպես հաստատվում է ձե-
նագրական տվյալներով, մասնավորապես՝
շարականների հեղինակների միջնադար-
յան ցուցակների համեմատական քննու-
թյամբ: Այդ ցուցակներից առաջինը կազ-


մել է դեռևս Արևելցու ուսուցիչը՝ Վանա-
կան վարդապետը, որ բացվում է ճիշտ
Խորենացուն վերաբերող նշումով. «զԾանդ-
եանն Մովսէս Քերթողն»³⁵: Նույնը հաստա-
տագրված է նաև հաջորդ՝ Սարգիս Երեցի
(XIII—XIV դդ.) կազմած ցուցակում, որ
շատ ավելի ընդարձակ է և ունի խորագրում
արտահայտված հատուկ նպատակադրում.
«Տաղագս որոյ, թէ հին և նոր շարականք
և երգերն յումմէ ասացան»³⁶:

(Ծարունակելի)


³⁵ Նորայր եպս. Պողարյան, Մայր Յուցակ Ձե-
նագրաց Սրբոց Յակոբեանց, հատ. չորրորդ, Երու-
սաղեմ, 1969, էջ 485:

³⁶ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2092,
էջ 229ր:

³¹ Տես մեր աշխատությունը՝ Ներսես Ծնորհալին
երգահան և երածիշտ, Երևան, 1978, էջ 19 (53-րդ
ծանոթագրությունը):



[Faint, illegible handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.]



ՄԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հայ արվեստի ու ճարտարապետության նկատմամբ առանձնակի հետաքրքրություն առաջացավ 19-րդ դ. վերջում: Ուսումնասիրության նյութը հիմնականում ճարտարապետական ու մանրանկարչական առանձին հուշարձաններն էին: Օտարների հետաքրքրությունը խթան հանդիսացավ հայ մշակույթի նկատմամբ որոշակի կարծիք ստեղծելուն, սակայն նրանց ուսումնասիրությունները կտրված էին հայ ժողովրդի կյանքի ընդհանուր զարգացման էությունից: Առաջին հետազոտողը, որը հայկական արվեստը գնահատեց նրա պատմական ու ազգային մտածողության հիմքի վրա՝ Գարեգին արքեպս. Հովսեփյանն էր:

Հարուստ և բազմակողմանի կյանք է ունեցել Գարեգին արքեպս. Հովսեփյանը:

Սերում էր գյուղացու ընտանիքից: Հայրը՝ Կարապետը, Մարաղա գյուղից էր (Սալմաստ), զբաղվում էր հողագործությանը Զիվանջիր գավառի Մաղալուզ (Չարդախլու) գյուղում: Այստեղ էլ 1867 թ. ծնվեց նրա Գարեգին որդին:

Հայրը ցանկանում էր, որպեսզի ուշիմ ու հետաքրքրասեր որդին կրթություն ստանա: Ուղարկեց Ամարասի դպրեվանքը (1876), որտեղ սովորած ուսերեն լեզուն և թվաբանությունը հիմք են դառնում Գարեգինին Ծուշիի հայոց թեմական հոգևոր դպրոցի նախապատրաստական դասարանն ընդունվելու համար (1878):

Այստեղ սովորում էր Ղազարոս Աղայա-

նի և Սեդրակ Մանդինյանի մոտ: Փոխադրվելով Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1882), Գ. Հովսեփյանը կրթություն է ստանում այնպիսի հայագետների մոտ, որպիսիք էին Մաղաքիա եպիսկոպոս Օրմանյանը, Սեդրակ Մանդինյանը և բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը: Ծեմարանի լսարանական բաժինը Գ. Հովսեփյանն ավարտում է «գովելի», «հույժ գովելի» գնահատականներով (1888), ձեռնադրվում է սարկավագ, դառնում ս. Էջմիածնի միաբան: Սակայն այս ամենը բավարար չէր Գ. Հովսեփյանի խառնվածքի տեր անձնավորության համար: Մաղաքիա եպիսկոպոս Օրմանյանի ակտիվ միջնորդությամբ, Հայոց բարեգործական միության ծախսերով, նա մեկնում է Գերմանիա, սովորում Հայլե-Վիտենբերգի, Բեռլինի, ապա՝ Լայպցիգի համալսարաններում, ուսումնասիրում է աստվածաբանություն, փիլիսոփայություն, հնագիտություն և ավարտում ուսման դասընթացը փիլիսոփայության դոկտորի աստիճանով (1897), պաշտպանության ներկայացնելով «Մի կամքի վարդապետության ծագումը հայ և հույն աղբյուրների քննադատությամբ» մեկագրությունը (լույս տեսավ 1897 թ., Լայպցիգում):

Սկսվում է Գարեգին վարդապետ Հովսեփյանի ստեղծագործական կյանքը:

Իժվար է պատկերացնել Էջմիածնի վանական կյանքը 20-րդ դ. առաջին կեսում, առանց Գ. Հովսեփյանի ակտիվ մասնակ-

ցության: Գերմանիայից վերադառնալով, նա ձեռնադրվում է արեղա, նշանակվում Գևորգյան ճեմարանի հայ մատենագրության և աստվածաբանության ուսուցիչ (1897), Էջմիածնի վանքի մատենագրարանատ (1897—1906), ապա՝ Թիֆլիսի առաջնորդական փոխանորդ (1900), Երեվանի թեմական դպրոցի վերատեսուչ (1901—1905), Գևորգյան ճեմարանի վերատեսուչ (1905), «Արարատ» ամսագրի խմբագիր (1901—1907, ընդմիջումներով), ս. Հոփսիսի մեծ վանքի վանահայր (1907), Գևորգյան ճեմարանի վերատեսուչ (1914—1917), ձեռնադրվում է եպիսկոպոս (1917), ընտրվում է վանքի գերագույն խորհրդի անդամ, միաբանական ժողովի նախագահ (1924), Ռուսաստանի, Ղրիմի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ (1927—1934), Ամերիկայի հայոց թեմի առաջնորդ (1938), Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս (1943): Սրան պետք է ավելացնել, որ քարոզներ էր կարդում և կրոնական թեմաներով հոդվածներ գրում, որպես նվիրակ մեկնում էր Եվրոպա, Մերձավոր Արևելք, Ամերիկա (1915—1918), անձամբ խնամում էր Արևմտյան Հայաստանից գաղթած հայ որբերին՝ լինելով «Եղբայրական օգնության» հանձնաժողովի ղեկավար (այդ մասին հետագայում կգրի. «Իբրև... ժողովրդի գավակ, ես ապրել ու զգացել եմ իմ ժողովրդի ցավն ու հուսահատությունը իր ամբողջ խորությամբ»): Սրան պետք է ավելացնել, որ գեներ ձեռքին մասնակցել է Սարդարապատի (1918) և Կարսի ճակատամարտերին (1920):

Հայրենական մեծ պատերազմի օրերին հատկապես բացահայտվեց Գարեգին արքեպ. Հովսեփյանի հայրենասիրական մրդումների իսկական էությունը: Նա ի նպաստ կարմիր բանակի և «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան սիյունքում խոշոր գումար է հավաքում: Մեծ է նրա դերը նաև սիյունքահայության ներգաղթը կազմակերպելու հարցում: Ականատեսները պատմում են, որ 1946 թ. հունիսի 23-ին, երբ «Տրանսիլվանիա» ջերմանավը հայրենադարձ հայերին բերում էր Սովետական Միություն, Գարեգին կաթողիկոս Հովսեփյանն օրհնում է հայրենիք ներգաղթողներին:

Այս ակտիվ, ժամանակաժախ մանկավարժական ու վարչական գործունեությունը Գարեգին արքեպ. Հովսեփյանի կյանքի մեկ կողմն էր: Մյուսը՝ պատմա-հնագիտական, մատենագիտական, բանասիրական ու արվեստաբանական բեղմնավոր գործունեությունն էր, որը նրա անունը դասեց հա-

յազեռ-երախտավորների առաջին շարքը: Գարեգին արքեպ. Հովսեփյանի գիտական ժառանգությունը կարելի է դասակարգել մի քանի կարևոր խմբերի. կրոնական էություն, պատմա-հնագիտական, մատենա-բանասիրական և մշակութային, որոնց ֆոնի վրա հանդես է գալիս նվիրյալ հոգևորականը, հմուտ պատմաբանը, հնագետը, մատենագիրը, բանասերն ու արվեստաբանը:

Գարեգին Հովսեփյանն իր գիտական կյանքը սկսեց որպես ժողովրդական բանահյուսությունը հավաքագրող և ուսումնասիրող¹:


«Պատմությունը ազգի քաղաքակրթության աստիճանաբար զարգացումն է նկարագրում, իսկ առանց ժողովրդի ծանոթության անկարող ենք իմանալ, թե ի՞նչ առաջադիմություն է արել քաղաքակրթությունը ամբողջության մեջ, որի հիմքը հասարակ ժողովուրդն է: Ծանոթանալով ժողովրդի ստորյա կյանքի, նիստուկացի, սովորությունների, կրոնա-քարոզական գաղափարների և այլ հայացքների հետ՝ ընդունակ կլինենք որոշելու ժողովրդի հոգեկան զարգացման աստիճանը»—գրել է Գարեգին վարդապետ Հովսեփյանը²:

Ծագումով գյուղացի Գ. Հովսեփյանն իր սաներին տանում էր գյուղերը, հաղորդակից դարձնում ժողովրդի կյանքին ու կենցաղին: Դա թելադրված էր նաև այն նախասիրությունից, որն ընկալեց իրենից կրտսեր, բայց իր դաստու Մանուկ Արեղյանից: Վերջինիս հետ նա շրջում է Արագածոտն գավառում (1890), լինում Սպարանի գյուղերում, Չամբուում, Ափնայում, Ղազանֆարում և գրի առնում «Սասնա ծոերը» մշո բարբառով, իսկ Էջմիածնում, պանդուխտ մոկացիներից՝ ժողովրդական վեպի նոր տարբերակներ, ու հրատարակում³: Այս աշխատանքը համարելու եկավ նախորդների՝ Գարեգին եպիսկոպոս Սըր-

¹ Գ. Հովսեփյանի գործունեության այս բնագավառին հատուկ հոդված-ուսումնասիրություն է նվիրել Ս. Բ. Հարությունյանը. «Գարեգին Հովսեփյանը որպես բանագետ» (Ճննդյան 100-ամյակի առթիվ): «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 1, էջ 147—154: Անդրադարձել է նաև Ս. Բոլանջյանը իր մեծածավալ «Հայ ձեռագրագիտության մեծանուն վաստակավորը» հոդվածում: «Էջմիածին», 1982, № 6, 7, 8:

² Սասնայ ծոեր: Սասունցի Դավիթ: Թիֆլիս, 1892, էջ 6:

³ Սասնայ ծոեր, Սասունցի Դավիթ ժողովրդական վեպի երկու նոր վարիանտներ, գրի առավ Գարեգին Սարկավագ: Թիֆլիս, 1892:



ՄԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հայ արվեստի ու ճարտարապետության նկատմամբ առանձնակի հետաքրքրություն առաջացավ 19-րդ դ. վերջում: Ուսումնասիրության նյութը հիմնականում ճարտարապետական ու մանրանկարչական առանձին հուշարձաններն էին: Օտարների հետաքրքրությունը խթան հանդիսացավ հայ մշակույթի նկատմամբ որոշակի կարծիք ստեղծելուն, սակայն նրանց ուսումնասիրությունները կտրված էին հայ ժողովրդի կյանքի ընդհանուր զարգացման էությունից: Առաջին հետազոտողը, որը հայկական արվեստը գնահատեց նրա պատմական ու ազգային մտածողության հիմքի վրա՝ Գարեգին արքեպս. Հովսեփյանն էր:

Հարուստ և բազմակողմանի կյանք է ունեցել Գարեգին արքեպս. Հովսեփյանը:

Սերում էր գյուղացու ընտանիքից: Հայրը՝ Կարապետը, Մարտիա գյուղից էր (Սալմաստ), զբաղվում էր հողագործությամբ Ջիվանջիի գավառի Մաղափուզ (Չարդախլու) գյուղում: Այստեղ էլ 1867 թ. ծնվեց նրա Գարեգին որդին:

Հայրը ցանկանում էր, որպեսզի ուշիմ ու հետաքրքրասեր որդին կրթություն ստանա: Ուղարկեց Ամարասի դպրեվանքը (1876), որտեղ սովորած ուսերեն լեզուն և թվաբանությունը հիմք են դառնում Գարեգինին Շուշիի հայոց թեմական հոգևոր դպրոցի նախապատրաստական դասարանն ընդունվելու համար (1878):

Այստեղ սովորում էր Ղազարոս Աղայա-

նի և Սեդրակ Մանդինյանի մոտ: Փոխադրվելով Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1882), Գ. Հովսեփյանը կրթություն է ստանում այնպիսի հայագետների մոտ, որպիսիք էին Մաղաքիա եպիսկոպոս Օրմանյանը, Սեդրակ Մանդինյանը և բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը: Ճեմարանի լսարանական բաժինը Գ. Հովսեփյանն ավարտում է «գովելի», «հույժ գովելի» գնահատականներով (1888), ձեռնադրվում է սարկավազ, դառնում ս. Էջմիածնի միաբան: Սակայն այս ամենը բավարար չէր Գ. Հովսեփյանի խառնվածքի տեր անձնավորության համար: Մաղաքիա եպիսկոպոս Օրմանյանի ակտիվ միջնորդությամբ, Հայոց բարեգործական միության ծախսերով, նա մեկնում է Գերմանիա, սովորում Հայլե-Վիտենբերգի, Բեռլինի, ապա՝ Լայպցիգի համալսարաններում, ուսումնասիրում է աստվածաբանություն, փիլիսոփայություն, հնագիտություն և ավարտում ուսման դասընթացը փիլիսոփայության դոկտորի աստիճանով (1897), պաշտպանության ներկայացնելով «Մի կամքի վարդապետության ծագումը հայ և հույն աղբյուրների քննադատությամբ» մեկնագրությունը (լույս տեսավ 1897 թ., Լայպցիգում):

Սկսվում է Գարեգին վարդապետ Հովսեփյանի ստեղծագործական կյանքը:

Դժվար է պատկերացնել Էջմիածնի վանական կյանքը 20-րդ դ. առաջին կեսում, առանց Գ. Հովսեփյանի ակտիվ մասնակ-

ցության: Գերմանիայից վերադառնալով, նա ձեռնադրվում է արեղա, նշանակվում Գևորգյան ճեմարանի հայ մատենագրության և աստվածաբանության ուսուցիչ (1897), Էջմիածնի վանքի մատենագրարանատեղ (1897—1906), ապա՝ Թիֆլիսի առաջնորդական փոխանորդ (1900), Երեւանի թեմական դպրոցի վերատեսուչ (1901—1905), Գևորգյան ճեմարանի վերատեսուչ (1905), «Արարատ» ամսագրի խմբագիր (1901—1907, ընդմիջումներով), ս. Հոհիսիսների վանքի վանահայր (1907), Գևորգյան ճեմարանի վերատեսուչ (1914—1917), ձեռնադրվում է եպիսկոպոս (1917), ընտրվում է վանքի գերագույն խորհրդի անդամ, միաբանական ժողովի նախագահ (1924), Ռուսաստանի, Ղրիմի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդ (1927—1934), Ամերիկայի հայոց թեմի առաջնորդ (1938), Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս (1943): Սրան պետք է ավելացնել, որ քարոզներ էր կարդում և կրոնական թեմաներով հոդվածներ գրում, որպես նվիրակ մեկնում էր Եվրոպա, Մերձավոր Արևելք, Ամերիկա (1915—1918), անձամբ խնամում էր Արևմտյան Հայաստանից գաղթած հայ որբերին՝ լինելով «Եղբայրական օգնության» հանձնաժողովի ղեկավար (այդ մասին հետագայում կգրի. «Իբրև... ժողովրդի գավակ, ես ապրել ու զգացել եմ իմ ժողովրդի ցավն ու հուսահատությունը իր ամբողջ խորությամբ»): Սրան պետք է ավելացնել, որ գեներ ձեռքին մասնակցել է Սարդարապատի (1918) և Կարսի ճակատամարտերին (1920):

Հայրենական մեծ պատերազմի օրերին հատկապես բացահայտվեց Գարեգին արքեպ. Հովսեփյանի հայրենասիրական մրդումների իսկական էությունը: Նա ի նպաստ կարմիր բանակի և «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան սիյունքում խոշոր գումար է հավաքում: Մեծ է նրա դերը նաև սիյունքահայության ներգաղթը կազմակերպելու հարցում: Ականատեսները պատմում են, որ 1946 թ. հունիսի 23-ին, երբ «Տրանսիլվանիա» ջերմանավը հայրենադարձ հայերին բերում էր Սովետական Միություն, Գարեգին կաթողիկոս Հովսեփյանն օրհնում է հայրենիք ներգաղթողներին:

Այս ակտիվ, ժամանակաժախս մանկավարժական ու վարչական գործունեությունը Գարեգին արքեպ. Հովսեփյանի կյանքի մեկ կողմն էր: Մյուսը՝ պատմա-հնագիտական, մատենագիտական, բանասիրական ու արվեստաբանական քննմանավոր գործունեությունն էր, որը նրա անունը դասեց հա-

յագետ-երախտավորների առաջին շարքը: Գարեգին արքեպ. Հովսեփյանի գիտական ժառանգությունը կարելի է դասակարգել մի քանի կարևոր խմբերի. կրոնա-եկեղեցական, պատմա-հնագիտական, մատենա-բանասիրական և մշակութային, որոնց ֆոնի վրա հանդես է գալիս նվիրյալ հոգևորականը, հմուտ պատմաբանը, հնագետը, մատենագիրը, բանասերն ու արվեստաբանը:

Գարեգին Հովսեփյանն իր գիտական կյանքը սկսեց որպես ժողովրդական բանահյուսությունը հավաքագրող և ուսումնասիրող¹:

«Պատմությունը ազգի քաղաքակրթության աստիճանաբար զարգացումն է նկարագրում, իսկ առանց ժողովրդի ծանոթության անկարող ենք իմանալ, թե ի՞նչ առաջադիմություն է արել քաղաքակրթությունը ամբողջության մեջ, որի հիմքը հասարակ ժողովուրդն է: Ծանոթանալով ժողովրդի ստորյա կյանքի, նիստուկացի, սովորությունների, կրոնա-քարոզական գաղափարների և այլ հայացքների հետ՝ ընդունակ կլինենք որոշելու ժողովրդի հոգեկան զարգացման աստիճանը»—գրել է Գարեգին վարդապետ Հովսեփյանը²:

Ծագումով գյուղացի Գ. Հովսեփյանն իր սաներին տանում էր գյուղերը, հաղորդակից դարձնում ժողովրդի կյանքին ու կենցաղին: Դա թելադրված էր նաև այն նախասիրությունից, որն ընկալեց իրենից կրտսեր, բայց իր դասատու Մանուկ Աբեղյանից: Վերջինիս հետ նա շրջում է Արագածոտն գավառում (1890), լինում Սպարանի գյուղերում, Չամբուում, Ափնայում, Ղազանֆարում և գրի առնում «Սասնա ծոերը» մշո բարբառով, իսկ Էջմիածնում, պանդուխտ մոկացիներից՝ ժողովրդական վեպի նոր տարբերակներ, ու հրատարակում³: Այս աշխատանքը համալրելու եկավ նախորդների՝ Գարեգին եպիսկոպոս Սըր-

¹ Գ. Հովսեփյանի գործունեության այս բնագավառին հատուկ հոդված-ուսումնասիրություն է նվիրել Ս. Բ. Հարությունյանը. «Գարեգին Հովսեփյանը որպես բանագետ» (Ճննդյան 100-ամյակի առթիվ): «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 1, էջ 147—154: Անդրադարձել է նաև Ս. Բոլանջյանը իր մեծածավալ «Հայ ձեռագրագիտության մեծանուն վաստակավորը» հոդվածում: «Էջմիածին», 1982, № 8, 7, 8:

² Սասնայ ծոեր: Սասունցի Դավիթ: Թիֆլիս, 1892, էջ 6:

³ Սասնայ ծոեր, Սասունցի Դավիթ ժողովրդական վեպի երկու նոր վարիանտներ, գրի առավ Գարեգին Սարկավազ: Թիֆլիս, 1892:

վանձոյանի և Մանուկ Արեղյանի մեծագույն գործը ժողովրդական բանահյուսության ուսումնասիրման բնագավառում: Միաժամանակ, Գ. Հովսեփյանը Ապարանից ու Թալինից գրի առավ բանահյուսական ու ազգագրական նյութեր (հեքիաթներ, հաներուկներ, ավանդույթներ, հմայական աղոթքներ, անեծքներ, օրհնանքներ, սիրո երգեր, այլ թվում՝ «Ալան աղա» և Նարեկացուն նվիրված վիպական երգերը), որոնք լույս տեսան «Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից» խորագրով⁴: Բանասիրական այլ ուսումնասիրությունների շարքում⁵ հատուկ ուշադրության է արժանի Գ. Հովսեփյանի գրած «Ռոտամ Զալը» (Մոքսի Նորավանց գյուղացի Ուտենց Յեովանից): Գրի առնելը ուսումնասիրության մեկ կողմն էր: Գ. Հովսեփյանը նաև բազմակողմանի վերլուծության է ենթարկում հայտնաբերածը, այն դիտում նույնատիպ երկերի համեմատության մեջ (սովյալ դեպքում՝ Ֆիրդուսու «Ծահ-Նամեի հետ») և անդրադառնում նրա գեղարվեստա-բանասիրական առանձնահատկություններին: Գ. Հովսեփյանի որոնումները թելադրված էին Մովսես Խորենացու «Պատմություն հայոց»-ում տեղ գտած Բյուրասայ Ածրահակի առասպելից, որը մինչև Ֆիրդուսին արդեն տարածված էր հայերի մեջ: Նշանակում է այն պետք է պահպանված լինի ժողովրդի մեջ: Գ. Հովսեփյանը հայ-իրանական ժողովրդական վեպը դիտեց որպես հին արիական ընդհանուր բանահյուսությունից անջատված և հայ իրականության մեջ տեղական ժողովրդական պարզ կերպովորում ստացած երևույթ: Այս ուսումնասիրությունը խոշոր ներդրում էր հայ-իրանական գրական առնչություններում:

Գարեգին Հովսեփյանը գիտության բնագավառը մուտք գործեց որպես բանասեր, բայց անսահմանափակ էին նրա համար բանասիրության սահմանները: Նա գիտեր, սիրում էր գիրքը՝ Ձեռագիրը, որը հաճախ գրում էր մեծատառով: Եվ նրա գիտական վաստակի զգալի մասը խարսխված է հենց ձեռագրերից թելադրված ուսումնասիրությունների վրա: «Մենք պարծենալ կարող ենք ամենաքաղաքակիրթ ազգերի կողքին մեր 20.000 տուփ կամ հատոր ձեռագիրներով, ուր պահված են հայ մտքի և անցյալի

ամբողջ արտադրությունը, մեր ազգային ամենամեծ հարստությունը»⁶:

Կարևորագույն բնագավառ էր ձեռագրերի հիշատակարանների ուսումնասիրությունը, որը դարձավ մի շարք հիմնական աշխատությունների հիմքը: Տասնյակ տարիների աշխատանքի արդյունքը հանդիսացավ «Յիշատակարանք Ձեռագրաց» քառահատոր ուսումնասիրությունը (Ե—ԺԸ դարեր, լույս տեսավ Ա. հատորը, Անթիլիաս, 1951): Գ. Հովսեփյանը կատարելագործեց ձեռագրերի նկարագրման սխեման՝ զգալի տեղ հատկացնելով հիշատակարանին, որի մասին նա գրում է, որ դրանք «...իրենց բազմատեսակ մանր տեղեկություններով մոզաիկ գույնզգույն քարեր են, որոնցից արվեստագետը ի մի բերելով և օգտագործելով հարկավորը իր նպատակի համար» կարող է մեծ ընդհանրացումներ անել⁷:

Ձեռագրերի ուսումնասիրությունը Գ. Հովսեփյանը չէր սահմանափակում միայն Էջմիածնի վանքում եղած օրինակներով: Նա շրջում էր Հայաստանում (Արցախ, Կարս, Արագածոտն, Գանձակ, Լոռի, Զիանշիքի, գավառի մի մասը և այլուր) և ձեռագրեր էր հավաքում⁸: Հավաքում էր նաև կաֆաներ, հայերին վերաբերող պարսկական ու թուրքական ֆերմաններ: Ձեռագրեր էր ուսումնասիրում Բեռլինի ազգային Մատենադարանում, Կ. Պոլսում՝ Օրթագյուղի Անտոնյան միաբանության և Ղալաթիոս և Լուսավորիչ ազգային Մատենադարաններում, Երուսաղեմի սբ. Հակոբյանց վանքի Մատենադարանում և այլուր: 1914 թ., Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի հանձնարարությամբ (Ն. Մառի միջնորդության հիման վրա), Գ. Հովսեփյանը մեկնում է Փոքր Ասիայի հայաշատ քաղաքները՝ հայ մանրանկարչությանն առնչվող նյութեր հավաքելու: Ձեռագիրը, ինչպես ինքն էր բնորոշում «... իմ կյանքի մի

⁴ Թիֆլիս, 1892:
⁵ Օր. «Ժողովրդական բանահյուսության հետքերը միջնադարյան տաղարաններում», «Արարատ», 1898, էջ 544—551, 1899, էջ 44—47:

⁶ Գարեգին կաթողիկոս Հովսեփյան, Դեպի լույս և կյանք: Անթիլիաս, 1947, էջ 235:
⁷ Գարեգին կաթողիկոս Հովսեփյան, Յիշատակարանք Ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ ԺԴ:
⁸ 1920-ական թթ., իր մոտ պահպանվող 50 անուն ձեռագրերը (զանձարան, գավազանագիրք, ճաշոց, ձառքնոտիք, կանոնագիրք, հացմավորք, քարոզգիրք, շարակնոց և այլն), Գ. Հովսեփյանը հանձնել է Մատենադարանին: Այդ մասին տես՝ Օ. Եզանյան, Գարեգին եպ. Հովսեփյանի հայերեն ձեռագրերի հավաքածուն: «Էջմիածին», 1973, № 8, էջ 35—36:

մասն է, իմ հոգու հետ կապված, իմ էությունը»:

Ձեռագիրն այն անսպառ աղբյուրն էր, որը հնարավորություն էր տալիս նրան գիտա-հետազոտական ուսումնասիրություն կատարել միջնադարյան մշակույթի կարեվոր հուշարձանների գրչության նյութի (պատկերու, մագաղաթ, թանաք, գրիչ և այլն), գրելաձևի, գրչության կենտրոնների, գրչության արվեստի, մանրանկարչության, կազմի և բազմաթիվ այլ հարցերի շուրջը: «Մեր ազգային ամենամեծ հարստությունը, որ ժառանգություն ենք ստացել մեր հայրերից, ձեռագրերի ժողովածուներն են: Ուրախ ենք, որ այդ հարստության ամենամեծ մասը գտնվում է մեր հայրենիքում»,—գրել է Գ. Հովսեփյանը (Մատենադարանի տպավորությունների մատյան, 1945 թ. 18 օգոստոսի, Երևան): Դեռևս դարասկզբին նա հասարակության ուշադրությունը հրավիրեց Էջմիածնի վանքի Մատենադարանի վրա (1901), ձեռնարկեց նրան գիտական տեսք տալու աշխատանքը, ուսումնասիրության նյութ դարձնելով նաև հին հայկական Մատենադարանները (Տաթև, Արգինա, Կիլիկիա, Հաղբատ, Սանահին, Գլաձոր և այլն)⁹:

Գ. Հովսեփյանի հետաքրքրությունների մեջ առանձնակի տեղ են գրավում ճարտարապետությունն ու հնագիտությունը: Նա մասնակցել է Գառնու ավերակներն ուսումնասիրող Նիկողայոս Մառի հնագիտական արշավախմբին, Անիի պեղումներին, հայտնաբերել է այժմ արդեն հանրահայտ դարձած Տրդատի հուճարեն վիմագիր արձանագրությունը, Բրդաձորի խաչքարի արձանագրությունը, Եղեգիսի հրեական արձանագրությանը դամբանաքարը: Հավաքած նյութի հիման վրա նա կազմեց վիմական արձանագրությունների ժողովածու (անտիպ, Անթիլիաս, Գ. Հովսեփյանի արխիվ): Գ. Հովսեփյանն առաջինն էր, որ հատուկ ուշադրություն նվիրեց Բաշ-Ապարանի բազիլիկ եկեղեցու վրա, ուսումնասիրեց Պրտըղին, Երերուքը, Հավուց թաղը, Վայոց Ձորի հուշարձանները: Նյութն ընդգրկեց բազմաթիվ աշխատություններում, բայց նշանակալից մենագրական ուսումնասիրություններ շարադրեց նվիրված հայ տաճարների գմբեթավորմանը՝ «Պողեպանքը և

գմբեթավորումը նախնական հայ տաճարներում» խորագրով:

Հարցադրումն ինքնին նորություն էր հայ իրականության մեջ, իսկ ընդգրկված նյութը, նրա բազմակողմանի ուսումնասիրությունն ու ընդհանրացումները մի նոր աստիճանի բարձրացրին հայ ճարտարապետության պատմության գնահատությունը: Այդ առթիվ, Սիրարփի Տեր-Ներսեսյանը հետագայում գրեց. «Պողեպի եկեղեցին ուսումնասիրված չէր, ոչ հայ մասնագետ Թորոս Թորամանյանի և ոչ ավստրիացի գիտնական Սորչիկովսկիին կողմն: Իր «Պրտըպանքը և գմբեթավորումը նախնական հայ տաճարներում» ուսումնասիրության մեջ՝ Գարեգին Վեհափառը կցայտեցնե ամբողջ կարևորությունը այս շենքին՝ հայկական ճարտարապետության համար: Ելտեղով հիմնադրին իրեն անձնավորությունը և գտնելով թվականը, ուր սարած է անկյա, ցույց կուտա, թե Ջ դարու այս եկեղեցին Հայաստանի մեջ պահված ամենեն հին գմբեթավոր եկեղեցիի նմուշն է, և կուտա նաև ուրիշ փաստեր ճարտարապետության այս ձևի գործածության»¹¹:

Գ. Հովսեփյանի բոլոր ուսումնասիրություններում պատմությունը, ձեռագրագիտությունը, ճարտարապետությունը, հնագիտությունը և արվեստի բազմապիսի նյութերը հանդես են գալիս միասնական շաղկապվածությամբ, որը նորություն էր հայագիտության մեջ: Դրա լավագույն օրինակն է Գ. Հովսեփյանի հիմնական աշխատություններից մեկը՝ «Խաղբակյանք կամ Պոռչյանք հայոց պատմության մեջ» պատմագիտական ուսումնասիրությունը, որը արժանացավ «Թարգմանչաց-Դուրյան» գրական մրցանակի (Երուսաղեմ) և որը Ն. Ադոնցը գնահատեց որպես «Հայ մշակույթի պատմության մի խոշոր նպաստ»¹²:

Աշխատանքը բաղկացած է երեք հատորից, որոնցում տոհմի պատմությունը սկսվում է 12-րդ դ. երկրորդ կեսից և հասնում մինչև 18-րդ դ.: Իսրայել Օրին՝ «Պոռչյանք այս վերջին շառավիղը, որով փակվում է նրանց նվիրված այս աշխատության պատ-

⁹ Կերենիկ Կախկոպոս, Հուշեր Գարեգին կաթողիկոսին, օրագրի էջեր: Անթիլիաս, 1855, էջ 43:

¹⁰ Գարեգին արքեպ. Հովսեփյան, Մատենադարանները հին հայոց մեջ: «Պայքար», Նոր տարվա բացառիկ, Բոստոն, 1946:

¹¹ Ս. Տեր-Ներսեսյան, Այնարկ մը Գարեգին Հայրապետի գիտական աշխատություններում վրա: «Հասկ», Անթիլիաս, 1952, էջ 270—274:

¹² Գարեգին արքեպ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պոռչյանք հայոց պատմության մեջ: Պատմագիտական ուսումնասիրություն: Մասն առաջին, Վաղարշապատ, 1928, Մասն երկրորդ, Երուսաղեմ, 1942, հատոր Գ., Նյու-Յորք, 1942—43, վերահրատարակվել է նաև մեկ գրքով Լիբանանում (Անթիլիաս) 1969 թ.:

մական մասը, իր զգալի հետքն է թողել հայ-ռուսական հարաբերությունների պատմության մեջ, մեր երկրի և ժողովրդի բաղդը կապելով ռուս մեծ ժողովրդի հետ»,— գրում է հեղինակը¹³: Հետագա հատորները նվիրելով Պողոսյանների շինարարական ու մշակութային գործունեությանը, Գ. Հովսեփյանը փաստորեն ուսումնասիրության նյութ է դարձնում նրանց տոհմական տարածքի վրա կառուցված հուշարձանները (Կեչառիս, Գեղարդավանք, ս. Ստեփանոս, Թանահատի վանք), կրթության օջախները (Գյաձորի համալսարանը և այլն), նրանց հիմնողների գործունեությունը (Նչեցի), ժամանակի ձեռագրերը (հիշատակարաններ, մանրանկարներ), անդրադառնում գերեզմանական կոթողներին ու մանր արվեստներին:

«Ես ավերակների մեջ կյանք և ոգի եմ գտնում, լեզու, երգ, բանաստեղծություն եմ գտնում»—գրում էր նա և, իրոք յուրովի սեր, հարգանք ու նվիրվածություն կա Գ. Հովսեփյանի ուսումնասիրություններում: Միաժամանակ, նրա աշխատանքներում անհանգստություն կա հայ մշակույթի հուշարձանների կորստյան նկատմամբ, նրանց մոռացության մատնելու նկատմամբ, որտեղ նա առաջնորդվում էր այն գիտակցությամբ, թե «այն ազգը», որ պատմություն չունի, իր անցյալի մասին լուսավոր և պայծառ գիտակցություն, ապագա ունենալ կարող չէ» և անհանգստացած կոչ արեց. «Անհետ կորչում են» (1912)¹⁴: Որպեսզի չկորչեն, ձեռնարկեց նաև հայ ազգագրական թանգարանի ստեղծմանը:

1917 թ. սկսեց հավաքագրել հայ գաղթականների միջոցով Էջմիածին հասած կենցաղային իրերը, որի մասին Ն. Մառիս գրում էր. «Նկատելով, որ ներկա գաղթականության հետ մեր ժողովրդի տարազն ու նիստուկացը, զարդն ու զարդարանքը, արվեստը, բանահյուսությունը, քարքանդակները պտանգի են ենթարկված, հաջողեցրի մի փոքրիկ գումար ձեռք բերել և Շեմարանի կարող ուսուցիչներից մի հանձնաժողով կազմել այդ խնդիրներով զբաղվելու: Մի տարվա ընթացքում մի չնչին գումարով (600 ռ.) հաջողվել է մեզ արդեն պատկանելի մի ժողովածու կազմել, որ դրսում տասնյակ հազարներով ձեռք բերել կարելի չէ: Այժմ տրամադրելի է ինձ ավելի մեծ գումար, և հույս ունեմ, թե կարճ ժամանա-

կից հետո հնարավորություն պիտի ունենամ մի փոքրիկ ազգագրական թանգարան կազմելու չափ նյութ ունենալ»¹⁵ (հետագայում նույնը ձեռնարկեց Անթիլիասում՝ 1947 թ.):

Եվ պատահական չէ, որ Գ. Հովսեփյանն ընտրվել է Մոսկվայի կայսերական հնագիտական ընկերության կովկասյան բաժանմունքի իսկական անդամ (1902), Պետերբուրգի կայսերական հնագիտական ընկերության անդամ (1912): Նա հայկական ազգագրական հանձնաժողովի նախագահն էր (1917), Հայաստանի հնությունների և գեղարվեստի պահպանման կոմիտեի անդամ (1921), Էջմիածնի գիտության ինստիտուտի գիտաշխատող (1921), Երևանի համալսարանի Արվեստի պատմության դոցենտ, ապա՝ պրոֆեսոր (1921), Հայաստանի կերպարվեստի աշխատողների ընկերության վարչության անդամ (1924) և այլն:

Գ. Հովսեփյանը հայ իրականության մեջ արվեստի առաջին պրոպագանդիստներից էր, ոչ միայն որպես գիտնական, այլև՝ հրապարակախոս: Դասախոսություններ էր կարդում հայկական մանրանկարչության, գրչության արվեստի և գրի զարգացման նյութի շուրջը. Բաքվում (1911), Բեռլինի հայ-գերմանական ընկերության բացման հանդեսին (1914), Պետերբուրգի գեղեցիկ արվեստների հայկական ընկերության կազմակերպած երեկոյին (1914), Թիֆլիսի ժողովարանում (1914), Քամոյան եկեղեցում (1926), Փարիզի միջազգային բյուզանդագիտական կոնգրեսում (1948) և այլն: Վերջին տարիներին ապրելով Հայրենիքից հեռու, նա պրոպագանդում էր Սովետական Հայաստանի հաջողությունները: Ավելին: Սփյուռքահայությունը երբեք այդքան համախմբված չէր եղել Սովետական հայրենիքի շուրջը, քան այն տարիներին, երբ այնտեղ ակտիվ գործունեություն էր ծավալել Գարեգին Հովսեփյանը, շատ հաճախ, հանդիպելով դժվարությունների:

Ասորիճակ ակտիվ կյանքի կարևորագույն մասն են կազմել նաև նրա գիտական ուսումնասիրությունները, որոնք օժտված են բնորոշ մի առանձնահատկությամբ. Գ. Հովսեփյանը յուրաքանչյուր երևույթ դիտում է պատմա-համեմատական տեսանկյունից՝ օգտագործելով թեմային վերաբերվող բոլոր հիմնական ու հարակից տվյալները: Սա հասկանալի է ու արդարացված, եթե նկատի ունենանք, որ Գ. Հովսեփյանը շատ հա-

¹³ Նույնը: Մասն առաջին, Վաղարշապատ, 1928, էջ 200:

¹⁴ «Հովիտ», շաբաթաթերթ, Թիֆլիս, 1912, № 43, էջ 679—680:

¹⁵ Մատենադարան, Գ. Հովսեփյանի ֆոնդ, թղթ. 96, վավ. 76:

ճախ առաջինն էր ուսումնասիրության նյութ դարձնում հայ մշակույթի այս կամ այն երևույթը և, քննական է, ձգտում էր համոզել, հաստատել իր հարցադրումները: Այսօրինակ սինթետիկ ուսումնասիրության արդյունք էր «Գրչության արվեստը հին հայոց մեջ» մեծածավալ աշխատությունը¹⁶, որը Հ. Աճառյանը դասեց Ղ. Ալիշանի ու Հ. Տաշյանի աշխատությունների շարքը, գրելով. «Հայ հնագրության պատմությունն ուսումնասիրելու համար ամեն տեսակի մտուզների լավագույն հավաքածուն կազմել է Գարեգին վարդապետ Հովսեփյանը»¹⁷: Ընդգրկելով Երուսաղեմի Ձիթենյաց լեռան խճանկարի արձանագրությունից (Զ—Է դարեր) մինչև ԺԸ դարը ստեղծված որմնանկարների, ձեռագրերի, մետաղի ու քարի վրա եղած արձանագրությունները, Գ. Հովսեփյանը ուսումնասիրությունների նոր հնարավորություններ ստեղծեց պատմաբանների, գրականագետների ու լեզվաբանների համար: Բարձր գնահատելով աշխատանքի լրջությունը, նրա գիտական արժանիքները, Հ. Աճառյանը գրում է, որ «կարող ենք համարձակ կերպով հեղինակին կոչել հայ հնագրության մեծ վարպետ»¹⁸: Գ. Հովսեփյանի գիտական վաստակը հարստացնելու են գալիս այնպիսի կարևոր աշխատություններ, ինչպիսիք են «Մխիթար Սասնեցի (Կերմանցի) (Վաղարշապատ, 1899), «Հովասափ Սեբաստացի» («Արարատ» ամսագիր, 1918, էջ 226—261), «Խոսրովիկ թարգմանիչ և երկասիրությունը նորին» (Վաղարշապատ, 1903), «Թովմա Մեծոփեցու կյանքը» (1914, Վաղարշապատ), «Մխիթար Այրիվանեցի» (Երուսաղեմ, 1931) և այլ գործեր:

Գարեգին Հովսեփյանի նախասիրություններում առանձնակի տեղ է գրավում նաև կերպարվեստը:

Ձեռագրերի ուսումնասիրությունը նրա մոտ անսահման մի հետաքրքրությունն առաջացրեց դեպի մանրանկարչությունը, էջմիածնի Մատենադարանի արխիվային վավերագրերը հիմք հանդիսացան անդրադառնալու Հովնաթանյանների արվեստին: Երուսաղեմի սբ. Հակոբյանց վանքում կա-

տարած պրպտումները հատուկ վերաբերմունք առաջացրին դեպի Հովհաննես պատկերաբանի նկարները: Նրա հետաքրքրության շրջանակներն ընդգրկել են գերեզմանական հին կոթողները, խաչքարերը, դրամագիտությունը, ինչպես նաև մանր արվեստները. ասեղնագործություն, ոսկերչություն, փայտի գեղարվեստական փորագրություն և այլն:

Մանրանկարչության ուսումնասիրությունը նրա կյանքի գործն էր: Նրա նպատակն էր «հայ մանրանկարչության արվեստի նյութերի և ուսումնասիրությունների կարգավորյալ աշխատությամբ... նույնչափ հետաքրքրություն գարթեցնել և գնահատելի դարձնել, որչափ հայ ճարտարապետությունը»¹⁹:

Մանրանկարչության ուսումնասիրությունը Գ. Հովսեփյանը սկսեց առանձին հուշարձանների նվիրված աշխատանքով: Առաջինը Եղրոթի Աշանավոր Ավետարանին նվիրված փոքր հոդվածն էր²⁰, որով գալիս էր հաստատելու, որ հայ մանրանկարչության արվեստը ոչ թե 10-րդ դ. ծնունդ է, այլ ունի առավել հին սկզբնավորություն: Աստիճանաբար, ուսումնասիրությունների և նոր նյութերի հայտնաբերման շնորհիվ, Գ. Հովսեփյանը ոչ միայն հաստատում է իր ենթադրությունները, այլև հարևան ժողովուրդների արվեստների համեմատության մեթոդով անդրադառնում հայ մանրանկարչության ծագման, զարգացման ու ինքնատիպության հարցերին: Հետագայում դրանց ավելանում են մանրանկարների պատկերագրությունը, նրանց ոճական ու գեղարվեստական առանձնահատկությունների բացահայտումը: Առանձին ձեռագրային հուշարձաններից²¹ Գ. Հովսեփյանը գնում է դեպի ընդհանրացնող մեծագրությունների ստեղծումը: Նա առաջինը գիտական ու հետևողական ուսումնասիրության նյութ դարձրեց միջնադարյան հայ կերպարվեստի առաջնակարգ քննազատներից մեկը, որի արդյունքը հանդիսացավ «Քարտեզ հայ մանրանկարչության» մեծածավալ աշխատությունը (120 գումավոր և 3.000 միագույն ներդիրներով: Անտիպ,

¹⁶ Լույս է տեսել մեկ հատորը միայն՝ Մասն Գ, Քարտեզ հայ հնագրության (հայ գրի գյուտի 1500 ամյակի առթիվ), Վաղարշապատ, 1918. Ա և Բ հատորները պահպանվում են Գ. Հովսեփյանի արխիվում (Անթիլիաս):
¹⁷ Հ. Աճառյան, Գարեգին կաթողիկոս Հովսեփյանն իբրև հայ հնագրության մեծ վարպետ: «Էջմիածին», 1952, № 1, էջ 31—33:
¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Դեպի լույս և կյանք: Անթիլիաս, 1974, էջ 294.
²⁰ «Արարատ», 1898, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 519:
²¹ Մի ձեռագիր Ավետարան: «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության», Բ պրակ, Նյու-Յորք, 1948, էջ 45—59. Համառոտ տեղեկություններ էջմիածնի մի քանի մանրանկարների մասին: «Անահիտ», Փարիզ, 1911, № 5—6, էջ 97—115:

պահպանվում է Գ. Հովսեփյանի արխիվում, Անթիլիաս):

Գ. Հովսեփյանը հայ մանրանկարչության արվեստի պատմությունը բաժանում էր երեք հատվածի՝

ա) Հայ մանրանկարչությունը Մեծ Հայքում, մինչև Բագրատունյաց անկումը, (ԺԲ դարի կեսերը):

բ) Կիլիկյան շրջանը, որ հայ գրչության և մանրանկարչության ոսկե դար էր համարում:

գ) ԺԳ—ԺԷ դարերի մանրանկարչությունը, որն ավարտվում է եվրոպական արվեստի ազդեցություններով ստեղծված ձեռագրերի նկարներով²²:

Գիտնականի երկար տարիների աշխատանքը հնարավորություն տվեց նրան որոշակի դպրոցներ տեսնել հայկական մանրանկարչական արվեստի պատմության մեջ, դասակարգել գրքի գեղանկարչությունը ոչ միայն ըստ նրա պատմական տվյալների, այլև՝ գեղարվեստական ստանձնահատկությունների: Տարիների փորձը նրան հնարավորություն տվեց ստանձին մի աշխատություն գրել մանրանկարչական մեկ դպրոցի մասին՝ «Երզնկայի մանրանկարչական դպրոցը» խորագրով (անավարտ, պահպանվում է Անթիլիասում, Գ. Հովսեփյանի արխիվ), որի մասին զեկուցում հղեց Փարիզի բյուզանդագիտական համաժողովին (1948, հուլիս):

Գ. Հովսեփյանը առաջինը հրատարակեց հայ մանրանկարչության տասնյակ հուշարձաններ, բազմաթիվ նոր նյութեր, շրջանառության մեջ դրեց մանրանկարիչների, ծաղկողների ու գրիչների բազմաթիվ նոր անուններ²³: Հայ մանրանկարչությունը նա դիտում էր ազգային մշակույթի ընդհանուր զարգացման մեջ: Ուշագրավ է, որ առաջինը Գ. Հովսեփյանն անդրադարձավ քանդակների ձևավորման ու նկարագրողման արվեստին, որպես մանրանկարչության շրջանի դրսևորման:

Էջմիածնի վանքի արխիվներում Սիմեոն և Ղուկաս կաթողիկոսների ժամանակներից պահպանվող վավերագրերը, Գ. Հովսեփյանի նախասիրությունների մեջ ներգրավեցին նաև 17—18-րդ դդ. հայ կերպարվեստի հարցերը: Առաջին անգամ Գ. Հովսեփյանն անդրադարձավ Էջմիածնի տաճարի նկարագրումանը, նրա պատմա-գեղարվեստա-

կան արժեքավորման հետ շրջանառության մեջ դրեց Հովնաթանյան տոհմի տաղանդավոր նկարիչներից մեկի՝ Հովնաթան Հովնաթանյանի անունը (1730-ական թթ.—1801)²⁴: Վավերագրերից («Պատմութիւն ինչ գլխաւոր բանից հարկաւորաց ի ժամանակս տեսուն Ղուկասու կաթողիկոսի եպիսկոպոսի», «Արարատ», 1901 և «Ա. Էջմիածնա տաճարի պատկերագրությունը Սիմեոն կաթողիկոսի ժամանակ», «Անահիտ», 1911) մինչև նկարագրողունների պատմական, բանասիրական ու գեղարվեստական վերլուծություններ («Էջմիածնի տաճարի նկարագրողունն ու ծաղկագարդունը ԺԷ—ԺԸ դարերում», Անթիլիաս, 1951)—այսպիսին է Գ. Հովսեփյանի հետևողական հետաքրքրությունը դեպի Էջմիածնի տաճարի նկարագրողունը: Նրա աշխատությունները խթան հանդիսացան, որպեսզի նույն այդ ժամանակներում դրան անդրադարձան նաև Ն. Ակիճյանն ու Ա. Չոպանյանը:

Գ. Հովսեփյանը զգում էր 17—18-րդ դդ. հայ կերպարվեստի պատմա-գեղարվեստական արժեքը: Զգում էր, որ այն նոր երկվույթ և գեղագիտական նոր որակ է հայ արվեստի պատմության մեջ: Եվ երբ 1911 թ. Մ. Օրմանյանի խորհրդով մեկնեց Երուսաղեմ՝ ձեռագրեր ուսումնասիրելու²⁵, ծայրահեղ ծանրաբեռնված օրերում ժամանակ էր գտնում նկարագրելու, արձանագրություններ արտագրելու և ուսումնասիրելու սր. Հակոբյանց վանքի պատերի վերին հատվածներում տեղադրված տերունական նկարները: Գ. Հովսեփյանը հայ արվեստի պատմության համար հայտնագործեց ոչ միայն նկարները, այլև նրանց

²⁴ Վախտանգ որդի Ումեկայ և նորա տոհմը: «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության», պրակ Ա, 1935, Երուսաղեմ, էջ 1—14, Իզմատիոս մանրանկարիչ և շոտթկաց տոհմը: «Սիմեոն» ամսագիր, 1933, հունիս-հոկտեմբեր, «Հաղրաստի դպրոցի մի գլուխ-գործոց»: «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության», պրակ Ա, 1935, Երուսաղեմ, էջ 41—75: «Մոսկով Սարկավագ» (գրիչ, նկարիչ և արձանագործ—1297—1332). «Նախիթ» ամսագիր (Հայկա), 1947, № 4, էջ 115—121. Թևոդորոս գրիչ և նկարիչ. «Կյանք և գիր» տարեգիրք, Գաֆիթ, 1948, էջ Ա—2, Գագիկ Կարսեցու ընտանեկան պատկեր. «Հասկ» տարեգիրք, Անթիլիաս—Լիբանան, 1957, էջ 22—24, և այլն:

²⁵ Арх. Гарегин Овсепян, Поездка в Иерусалим летом 1911 года. «Христианский восток», СПб., 1912, т. I, вып. I, стр. 37—40.

²² Համատու զեկուցում հայ մանրանկարչության նվիրված մեր աշխատանքի մասին: «Անի» ամսագիր (Բեյրութ), 1948, № 12, էջ 618—625:

²³ Մանրանկարչության արվեստը հայոց մեջ, «Լուսն», Թիֆլիս, 1902:

հեղինակին՝ տիրացու, պատկերահան Հովհաննեսին, որն ապրել ու ստեղծագործել է 18-րդ դ. առաջին կեսում²⁶: (Երուսաղեմում Գ. Հովսեփյանի ուշադրությունը գրավեց նաև միջնադարյան վրաց դասական գրականության խոշորագույն դեմքերից մեկի՝ Ծոթա Ռուսթավելու նկարը, որի մասին նա գրում է դեռևս 1912 թ. երուսաղեմյան ճանապարհորդության հաշվետվության մեջ)²⁷: Նամակներից մեկում արդեն յոթանասունամյա Գ. Հովսեփյանը հույս է հայտնում, որ կուզենա գնալ Պարսկաստան, որպեսզի «Սպահանի հայոց ժէ դարի գեղարվեստական մեծ շարժման պատմությունն ամբողջացնել, ձեռագրական մանրանկարչության շատ մեծ նյութ ունիմ այր շրջանի հետ կապված»²⁸:

Գ. Հովսեփյանին հետաքրքրել է նաև նոր ժամանակների արվեստը: Մտերիմ էր մի շարք արվեստագետների հետ, Վ. Սուրենյանցի (Գ. Հովսեփյանի համար մանրանկարներ է ընդօրինակել), Ա. Ֆեթվաճյանի (նկարել է Անիի տարազները), Փ. Թերլեմեզյանի (ընդօրինակել է Աղթամարի բարձրաքանդակները), Հմ. Արծաթյանյանի (կատարել է Նոր Նախիջևանի ձեռագրերի մանրանկարների ընդօրինակություններ), Ե. Թադևոսյանի (Կ. Պոլսում և Երուսաղեմում ընդօրինակել է մանրանկարներ ուղեկցելով Գ. Հովսեփյանին ճանապարհորդության ժամանակ), բարեկամական հարաբերությունների մեջ էր նաև Հ. Գյուրջյանի, Վ. Ախիկյանի, Ս. Խաչատրյանի²⁹, Է. Ծահինի, Ռ. Ծիշմանյանի, Մ. Սեռայլյանի³⁰ և սիյուրբահայ բազմաթիվ ար-

վեստագետների հետ: Հ. Գյուրջյանը Փարիզում քանդակել է Գ. Հովսեփյանի դիմաքանդակը (Հայաստանի պետական պատկերասրահ): Լսելով նրա մահվան լուրը (1948), Գ. Հովսեփյանը գրում էր Ա. Չոպանյանին. «թերթերի մեջ կարդացի արձանագործ Գյուրջյանի մահը մեծ ախտասնքով. դեռ երիտասարդ էր և կարող էր նոր գործեր ունենալ»³¹: Մտերիմ էր Մ. Սարյանի հետ, որը բուն ցանկություն ուներ մասնակցելու Գ. Հովսեփյանի նախաձեռնությամբ ստեղծվող «Գաղթածության թանգարանի» ստեղծմանը³²: Այդ գործում գիտնականի օգնականները դարձան Վ. Սուրենյանցն ու Լ. Հազարապետյանը:

Գ. Հովսեփյանը հատկապես բարեկամական ջերմ հարաբերությունների մեջ էր Ե. Թադևոսյանի հետ (1870—1936):

Ծանոթությունը կարող էր տեղի ունենալ 1891—92 թթ., երբ Գ. Հովսեփյանը միաբան էր, դասավանդում էր Գևորգյան ճեմարանում, որտեղ որպես նկարչության ուսուցիչ էր հրավիրված Ե. Թադևոսյանը: Ծանոթությունը վերածվեց մտերմության, երբ Գ. Հովսեփյանն առաջարկեց Ե. Թադևոսյանին մեկնել Պաղեստին՝ Երուսաղեմ: Կ. Պոլսում հետաքրքիր օրեր անցկացրին Բերայի Լալե փողոցի պանսիոնում, որտեղ նրանց երեկոները շուք էին ստանում Կոմիտասի ու նկարիչ Փանոս Թերլեմեզյանի այցելություններից: Ե. Թադևոսյանը Գ. Հովսեփյանի համար ընդօրինակեց բոլոր առհրաժեշտ մանրանկարները և միաժամանակ, Էտյուդների մի ամբողջ շարք ստեղծեց, որոնց մասին նամակներ էր գրում իր ռուս բարեկամին՝ Վ. Դ. Պոլինովին: Հավանաբար, Ե. Թադևոսյանը Գ. Հովսեփյանին ծանոթացրել է Վ. Պոլինովի հետ, քանի որ նամակներում ակնարկներ կան այդ մասին: Ե. Թադևոսյանի միջնորդությամբ Վ. Պոլինովը կազմեց Էջմիածնում Գ. Հովսեփյանի կողմից հիմնադրվող թանգարանի նախագիծը: Այդ առթիվ Ե. Թադևոսյանը գրում էր. «Մեզ համար մեծ պատիվ է, որ Պոլինովի պես մարդն առանց վարձատրության խոստանում է ծրագիր տալ»³³: Եվ երբ Գ. Հովսեփյանը հող-

²⁶ Տիրացու Հովհաննես տաղանդավոր նկարիչ ժէ դարու առաջին քառորդում: «Գեղարվեստ» (Թիֆլիս) 1917, № 6: «Հասկ» հայագիտական տարեգիրք (Անթիլիաս-Լիբանան):

²⁷ Арх. Гарегия Овсепян, Поездка в Иерусалим летом 1911 года. «Христианский восток», СПб., 1912, т. I, вып. I.

²⁸ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Գ. Հովսեփյանի ֆոնդ, 28 հունիսի 1947 թ.:

²⁹ Նկարիչ Սարգիս Խաչատրյան: «Հասկ» հանդես (Անթիլիաս-Լիբանան), 1947, ապրիլ, էջ 98—100:

³⁰ Նրան հողված է նվիրել՝ «Նկարիչ Մ. Սեռայլյան, անորոր խաղաղության և հեռանկարի երգիչը», «Հայաստանյազ եկեղեցի», Կյու-Յորք, 1940, 1 հունվարի, № 7, էջ 84—87: Հողվածի առթիվ նկարիչը Ֆլորիդայից նամակ է հղել Գ. Հովսեփյանին, շնորհակալություն հայտնելով պատկերավոր և հոգուց թինդ տողերի համար: Նույն տեղում, 11 մայիսի, էջ 80—81:

³¹ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ա. Չոպանյանի ֆոնդ, № 8781, 5 ապրիլի 1949:

³² Մ. Սարյանի նամակը Գ. Հովսեփյանին: 28 մարտի 1916 թ., «Էջմիածին», 1972, № 5, էջ 17—18:

³³ Մատենադարան, Գ. Հովսեփյանի ֆոնդ, թղթ. 95, վավ. 757, 8 դեկտեմբերի 1919 թ.:

ված գրեց Ե. Թաղևոսյանի մասին (1928)³⁴, հաստիկ շեշտեց Վ. Պոլիմովի արվեստի դերը հայ նկարչի ստեղծագործության ձե- վավորման հարցում: Գ. Հովսեփյանն ա- նաջինն էր, որ գնահատեց Թաղևոսյան- նկարչի արվեստի էությունը, նրա գեղա- նկարչական մտածողության ինքնատիպու- թյունը: 1934 թ. մայիսի 12-ին Երևանում բացվեց Ե. Թաղևոսյանի էությունների ցու- ցահանդեսը (որոնցից պաղեստինյան շար- քի ստեղծմանն ականատես էր եղել Գ. Հովսեփյանը), իսկ նույն թվականի հունիսին Գ. Հովսեփյանը գրեց մի նոր հոդված «Ա- նահիտ» ամսագրի համար³⁵, Ա. Չոպանյա- նին հասցեագրված նամակով, որտեղ կան հետևյալ տողերը. «Թեպետ մասնագետ չեմ նոր արվեստի մեջ բայց սերս ու հարգան- քսս դեպի Թաղևոսյանը ստիպեց ինձ գրել այդ փոքր գնահատականը: Կարծում եմ ցուցահանդեսի էությունն ու գնահատա- կանը սխալ չէ հասկացած իմ կողմից»³⁶:

Հայ կերպարվեստի երրորդ քննադատը, որ նույնպես կարևոր տեղ է գրավում Գա- րեգին Հովսեփյանի գիտական ժառանգու- թյան մեջ՝ կիրառական արվեստն է (մանր արվեստը, ինչպես բնորոշում էր ինքը):

Կիրառական արվեստի ուսումնասիրման ավանդներ չունեն հայ իրականությունը: Գ. Հովսեփյանը ստեղծեց այն ուսումնասիրելու իր մեթոդը կուլտուր-կենցաղային, պատկե- րագրական և տեխնիկական հատկանիշնե- րով արվեստի օրինակները ներկայացնելու մեթոդը: Գ. Հովսեփյանն իր ձեռքի տակ ու- ներ մանր արվեստների բազմաթիվ իրեր, բայց նրա գեղագիտական բարձր կուլտու- րան և ճաշակը ստիպում էին խիստ ընտ- րություն կատարել և շեշտը դնել հիրա- վի գեղարվեստորեն բարձրարժեք ստեղ- ծագործությունների վրա: Նա առաջինը հրատարակեց Հայաստանի տարբեր շր- ջաններում հավաքած լամպարները, ճրագ- ներն ու ջահերը³⁷, ընդհանրություններ տեսնելով անտիկ և բյուզանդական ար- վեստների հետ³⁸: Հետագայում կգրի ձեռա- գրերի կազմերի (կաշի, արծաթ, թանկար-

ժեք քարեր), փայտե դռների ու գրակալնե- րի, ասեղնագործ վարագույրների ու զա- նազան իրերի մասին, և այդ ամենի մեջ կարևոր ուսումնասիրությունը կնվիրի 1300 թ. ստեղծված «Խոտակերաց սուրբ Նշանին» (Թիֆլիս, 1912), որտեղ գիտնա- կանը տեսնում էր բյուզանդական և արե- վելա-քրիստոնեական արվեստների ազդե- ցությունը՝ տեղական վառ արտահայտու- թյամբ: Գիտնականի աշխատանքն արժա- նացավ Ն. Մատի բարձր գնահատակա- նին³⁹: Նա առաջինն էր, որ դասակարգեց ու արժեքավորեց գերեզմանական կոթող- ները, բնորոշեց նրանց տեղը հայ արվես- տի պատմության մեջ, անդրադարձավ խաչքարերին՝ արվեստի զուտ տեղական արտահայտությանը, բնորոշելով նրանց առանձնահատկությունները, մոտիվների զարգացման էվոլյուցիան⁴⁰:

Գ. Հովսեփյանն իր բոլոր աշխատություն- ներում մեկնաբանում է իրերի մակագրու- թյունները, ճշտում կատարման ժամանակը, պարզաբանում պատկերագրական հատ- կանիշները, տեխնիկական առանձնահատ- կությունները: Գ. Հովսեփյանի հրատարա- կումների շնորհիվ գիտական շրջանառու- թյան մեջ մտան կիրառական արվեստի բազմաթիվ իրեր, այդ թվում. «Հավուց Թա- ու Ամենափրկիչը»⁴¹, Էջմիածնի մեծ խորա- նի ասեղնագործ վարագույրը⁴², Գրիգոր Լուսավորչի խաչվառը, Աստվածատուր կա- թողիկոսի գահի ծածկոցը, Փիլիպոս կա- թողիկոսի վարագույրը⁴³ № 1759 ՆԺ ձե- նագիր ժողովածուի կազմի մեջ պահպան- ված Սասանյան կտորը⁴⁴, զանազան կազ-

³⁴ Նկարիչ Եղիշե Թաղևոսյան: «Տարե», տարե- գիրք, գրականության և արվեստի, 1930 թ., «Էջ- միածին», 1971, № 3:

³⁵ Եղիշե Թաղևոսյանի էությունների ցուցահանդե- սում: «Անահիտ» Փարիզ, 1935, № 1—2, էջ 23—29:

³⁶ Ե. Չարենցի անվան գրականության և արվես- տի թանգարան, Ա. Չոպանյանի ֆոնդ, № 3719, 22 օգոստոսի, 1934 թ., էջմիածին:

³⁷ Ամբողջը նվիրեց Էջմիածնի թանգարանին:

³⁸ Հնություն նշխարներ: «Տարագ», 1909, № 1, էջ 8—9:

³⁹ Крпига. «Христианский восток», СПб., 1912, т. I, вып. II, стр. 239—240.

⁴⁰ Գերեզմանական հին կոթողները և նրանց հնագիտական արժեքը հայ արվեստի պատմության համար: «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության», Գ. պրակ, Նյու-Յորք, 1944, էջ 46—127:

⁴¹ Հավուց Թաուի Ամենափրկիչը և նույնանուն հուշարձանները հայ արվեստի մեջ: Երուսաղեմ, 1937: Նվիրված է ակադեմիկոս Ն. Մատի հիշա- սանկին:

⁴² Էջմիածնի մեծ խորանի ասեղնագործ վարա- գույրը: «Անահիտ», Փարիզ, 1935, № 3—5:

⁴³ Образчики армянских церковных вышив- вок. «Христианский восток», СПб., 1916, т. V, стр. 14—21.

⁴⁴ Սասանյան կերպարի կտոր Էջմիածնի թիվ 1759 ՆԺ ձեռագրի կազմի մեջ: «Հանդես ամսօր- յա», Վիեննա, 1935, № 5—7, էջ 259—263: Ձեռա- գիրը՝ «Գործք և թուղթք առաքելոց» խորագրով պահպանվում է Երևանի Մատենադարանում: Ձև. № 6263:

մեր⁴⁵, Սևանի Առաքելոց վանքի⁴⁶ և Տարոնի Առաքելոց վանքի գեղարվեստական շքեղ փորագրված դռները⁴⁷ և այլն: Կերպարվեստի այս ճյուղը Գ. Հովսեփյանը դիտում էր որպես ժողովրդական մտածողության յուրատիպ արտահայտություն:

Պատահական չէ հետաքրքրությունների այսօրինակ խորությունն ու բազմակողմանի ընդգրկումը: Գիտնականը հայ ժողովրդի գոյատևման որոշակի ուղիները տեսնում էր նաև նրա մշակույթի պահպանման մեջ: «Ազգի գոյության հիմքը նրա անցյալի գիտակցությունն է, նրա մշակույթը: Պետք է ճանաչենք այդ մշակույթի իսկական արժեքը և պահենք զայն» — գրում էր նա: Ինքն էլ ճանաչում և պահպանում էր այն:

«Որչա՞հի նյութեր կան, — կահ-կարասիքի, անոթների, սանդղագործության, գորգագործության, կտավեղենների և մետաքսեղենների մշակության համար, որ մինչև այժմ կատարյալ անուշադրության են մատնված մեր կողմից: Ապրում ենք պետական նոր կյանքով, որ խրախուսում է ազգային մշակույթների պահպանությունն ու զարգացումը, պետք է որոնենք և գտնենք այն ուղիները, որ նոր արվեստի ծագման և ծաղկման հիմունքներն են կազմում: Իսկ այդ հիմունքներից մեկը, եթե չասենք ամենակարևորը, անցյալ նյութերի հավաքումն է, ցուցադրումը և նրանց ուսումնասիրությունը»⁴⁸:

Գ. Հովսեփյանի համար գոյություն չունեղ մեծ կամ փոքր արվեստ: Յուրաքանչյուր ստեղծագործություն նա վերլուծության էր ենթարկում պատմական ու գեղարվեստական արժեքավորման տեսակետից, հարևան երկրների նույնատիպ գործերի, զարդանախշի զարգացման, մանրանկարչության ու քանդակագործության հետ ունեցած կապի, պատկերագրական նույնությունների կամ տարբերությունների տեսակետից: Մրանք նոր ձևավորվող հայ արվեստաբանության առանձնահատկություններն են, որի ակունքներում կանգնած էին Ն. Ակիմյանը, Ա. Չոպանյանը, Գ. Լևոնյանը, Ա. Սազըզյանը, և ամենանպատակա-

լից ու ամենաբեղմնավոր գործիչը՝ Գարեգին Հովսեփյանը:

Գ. Հովսեփյանի աշխատությունները բնութագրվում են մեկ այլ կարևոր առանձնահատկությամբ. պատկերագրական հարցերին նրա կատարյալ գիտակ լինելը: Նա փայլուն տեղյակ էր ոչ միայն հայկական, այլև բյուզանդական, ռուսական և վրացական պատկերագրական նույնություններին ու տարբերություններին: Նա քաջաժանոթ էր հին հունական դիցաբանությանը, հին Արևելքի պանթեոնին:

Գ. Հովսեփյանը քաջատեղյակ էր ինչպես հին, նույնպես և ժամանակակից պատմաբանասիրական և արվեստաբանական գրականությանը: Մեջքերումների և ծանոթագրությունների մեջ (հայագիտական աշխատություններից զատ), հանդիպում ենք այնպիսի հեղինակների, ինչպիսիք են Ֆ. Բուսանը, Ն. Կոնդակովը, Յա. Սմիրնովը, Վ. Բախմանը, Ի. Բալտորոշայտիսը, Ծ. Դիհլը, Հյուբշմանը, Ֆ. Մակլերը, Ա. Պոպը, Ֆ. Սարրեն, Ի. Ստրոգոլովսկին և շատ ուրիշներ: Եվ բոլորը կարդում էր բնագրում:

Այսօրինակ բազմազան ու բազմակողմանի հետաքրքրությունները Գարեգին Հովսեփյանի անունը դասեցին ժամանակի անվանի հայագետների շարքը: Իրենց հետաքրքրող հարցերով, պարզաբանումներով, հայագիտական նյութերով և հատկապես հայկական մանրանկարչությանն առընչվող խնդիրներով նրան էին դիմում բոլորը:

Գ. Մեյեն նրանից խնդրում էր հիշատակարանների տեքստեր ու «տիրոջ կյանքը պատկերող մանրանկարներ»-ի լուսանկարներ⁴⁹, Գ. Չուբինովը՝ Ի. Ստրոգոլովսկու նոր լույս տեսած գիրքը⁵⁰, Ա. Թամանյանը ուրախ էր, որ նա շարունակում է «Հայպետանի համար թանկ այդ աշխատանքը»⁵¹, Մարկվարտը շնորհակալություն էր հայտնում ցուցաբերած հոգատար վերաբերմունքի համար⁵², Աշխարհբեկը հայտնում է, որ Պոռշի արձանը գտնվում է Այգեշատ գյուղի մոտ⁵³, Աթենքի բյուզանդական ճարտարապետության բաժանմունքի տնօրեն

⁴⁵ Սևանի Առաքելոց վանքին հարավային դուռը: «Անահիտ», Փարիզ, 1932:

⁴⁶ № 5—8, էջ 25—41:

⁴⁷ Տարոնի ս. Ղազարի կամ Առաքելոց վանքին դուռը: «Զվարթնոց», տարեգիրք, Փարիզ, 1937, էջ 148—150:

⁴⁸ Գարեգին արքեպ. Հովսեփյան, Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունից: «Տաթև», Հավեպ, 1930, էջ 248:

⁴⁹ Մատենադարան, ֆ. 44, թղթ. 95, վավ. 810, 19 հունվարի, 1911, Փարիզ:

⁵⁰ Մատենադարան, ֆ. 44, թղթ. 95, վավ. 786, 8 հունիսի, 1920 թ.:

⁵¹ Մատենադարան, ֆ. 44, թղթ. 95, վավ. 795, 20 հունիսի, 1921 թ., Թավրիզ:

⁵² Մատենադարան, ֆ. 44, թղթ. 96, վավ. 879թ, 30 մայիսի, 1928 թ.:

⁵³ Մատենադարան, ֆ. 44, թղթ. 96, վավ. 1000, 12 օգոստոսի, 1925 թ.:

պրոֆ. Մ. Օղյանդուր հայ ճարտարապետության վերաբերյալ նյութեր էր խնդրում⁵¹, Բեռլինի մարդաբանական-նախապատմական-ազգագրական ընկերության անդամներ Բեյլը և Լեմանը հայտնում էին, որ Վանի լճի շրջակայքում 60 քնետագիր արձանագրություն են գտել⁵², Վարդան Հացունին «Հայ տարագի պատմություն» աշխատության համար խնդրում է Սանսոնի եկեղեցու ճակատի բարձրաքանդակների լուսանկարները⁵³, Ս. Տեր-Ներսեսյանը հաշվետու է լինում կատարածի վերաբերյալ և, ավելացնում. «չկա մեկը, որ ունենա Ձեր հայ արվեստի գիտությունը, և Ձեր աշխատությունները մեծ պակաս մը կը լեցնին»⁵⁴, Ն. Ակիկյանը գրելով Մակլերի նոր լույս տեսած գրքի մասին, բացակասչում էր. «Ի՞նչ պիտի ըսե աշխարհը, եթե լույս տեսնեն Ձեր հավաքածոյքները» հարդրում է Ի. Սարժգովսկու ողջույնները⁵⁵, Վ. Ն. Լազարյը տեղեկություններ էր հարդրում հայ մանրանկարչությանը նվիրված նոր աշխատությունների վերաբերյալ⁵⁶, լեհ արվեստաբան Թադեոշ Մանկովսկին խնդրում է 1619 թ. Աստվածաշնչի մանրանկարների լուսանկարները⁵⁷, Հ. Օրբելին տեղեկություններ է ուզում Խաչենի մասին⁵⁸, Յու. Վետուովսկին ցավում է, որ նրա մանրանկարչությանը նվիրված դասախոսությանը չի կարող գալ⁵⁹, «Տարագի» խմբագիր Տ. Նազարյանը հարց էր տալիս «կա՞րողք հայկական ֆայանս»⁶⁰, Մ. Օրմանյանը հրավիրում է ուսումնասիրական աշխատանքներ կատարել Երուսաղեմի վանքի Մատենադարանում⁶¹, Գ. Էդիլյանը Լեոնարդո դա Վինչիի նկարների դիսպոզի-

տիվներն է ուզում⁶² և այսպես տարիներ շարունակ, նամակագրություն Ա. Չոպանյանի⁶³, Ն. Մառի⁶⁴, Թ. Թորամանյանի⁶⁵ և շատ ու շատ ուրիշների հետ:

Գ. Հովսեփյանը պատասխանում էր, օգնում, ուղարկում: Նրա հաղորդած բազմաթիվ տեղեկությունների արձագանքները տեսնում ենք մի շարք գիտնականների աշխատություններում, որտեղ օգտագործվում են Գ. Հովսեփյանի նյութերը կամ հղումներ կատարվում նրա ուսումնասիրությունների վրա (օր. Ի. Սարժգովսկին, Թ. Թորամանյանը, Հ. Օրբելին, Ն. Մառը և այլք): Գ. Հովսեփյանն իր աշխատությունները հիմնականում տպագրում էր ամսագրերում, իսկ հետագայում լույս էր ընծայում առանձին կամ ժողովածու-պրակներով: Նա աշխատակցել է «Արարատ» (Էջմիածին), «Անահիտ» (Փարիզ), «Հանդես ամսօրյա» (Վիեննա), «Գեղարվեստ» (Թիֆլիս), «Христианский восток» և այլ պարբերականների:

Կյանքի վերջին տարիները Գարեգին Հովսեփյանն ապրում էր Լիբանանում՝ հայրենիքից հեռու, բայց ոչ նրանից կտրված: Մեկ փաստ միայն:

1944 թվականին, Հայրենական մեծ պատերազմի նախօրեին, ափսոսքը մեծ շուրջում էր Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 24-ամյակը: Հիվանդ և ծերացած գիտնականը միայն նամակով կարողացավ շնորհավորել իր սրտին այնքան հարազատ իրադարձությունը:

Ահա նրա ողջույնի խոսքը, գրված 1944 թ. դեկտեմբերի 3-ին, Նյու Յորքում:

«Խորհրդային Հայաստանի 24-ամյա տարեդարձի տոնակատարության հարգելի հանձնաժողովին:

Աչքի ծանր հիվանդությամբ բուժված, անկարող ենք անձամբ ուրախակից լինել մեծ տոնակատարության, բայց հոգու բուրդը էությամբ ապրում ենք և գիտակցում աւսօրվա տոնի արժեքը: Նախընթաց պատերազմի ժամանակ մենք ականատես ենք եղել մեր հայրենիքի ավերման և ժողովրդի կործանման. չստեղծվեք թանկագին Խ(որհրդային) Հայաստանը Խ(որհրդային) Միության հզոր պաշտպանության տակ,

⁵¹ Մատենադարան, ֆ. 44, վավ. 96:
⁵² Գարեգին արքեպ. Հովսեփյան, Հայագիտական տեղեկություններ: «Արարատ», 1899, մարտ-ապրիլ, էջ 151—156:
⁵³ Մատենադարան, ֆ. 44, թղթ. 96, վավ. 876, 22 ապրիլի, 1923 թ.:
⁵⁴ Մատենադարան, ֆ. 44, թղթ. 96, վավ. 1219¹, 20 հուլիսի 1929, Փարիզ:
⁵⁵ Մատենադարան, ֆ. 44, թղթ. 96, վավ. 1217, 4 հուլիսի 1929, Վիեննա:
⁵⁶ Մատենադարան, ֆ. 44, թղթ. 96, վավ. 1243, 20 հունվարի, 1930, Մոսկվա:
⁵⁷ Մատենադարան, ֆ. 44, թղթ. 96, վավ. 1375, 18 հոկտեմբերի 1932, Լվով:
⁵⁸ Մատենադարան, ֆ. 44, թղթ. 96, վավ. 1:
⁵⁹ Մատենադարան, ֆ. 44, թղթ. 96, վավ. 3:
⁶⁰ Մատենադարան, ֆ. 44, թղթ. 95, վավ. 207, 24 հունվարի, 1909, Թիֆլիս:
⁶¹ Մատենադարան, ֆ. 44, թղթ. 95, վավ. 417, 18 հունիսի 1914 թ., Երուսաղեմ:

⁶² Մատենադարան, ֆ. 44, թղթ. 95, վավ. 740, 21 հոկտեմբերի, 1919 թ.:
⁶³ Ե. Չոպանյանի անվան գրականության և արվեստի թանգարան, Ա. Չոպանյանի ֆոնդ:
⁶⁴ ՍՍՀՆ գիտությունների ակադեմիայի արխիվ, Լենինգրադի բաժանմունք, Ն. Մառի ֆոնդ, № 800, օպ. 3, վավ. 1419 (116 նամակ):
⁶⁵ Մատենադարան, ֆ. 44, թղթ. 96:

զուցե հայությունը իսպառ ջնջված լինե՞ր հայրենիքում: Բայց այսօր վերազարթնել է մեր ժողովուրդը, կազդուրվել ստացած հարվածներից, նյութապես և բարոյապես, ծաղկել է հայ միտքը, հայ գրականությունն ու: արվեստը, ընդհանուր մշակույթը և պետական կյանքով այնքան աճել և հասակ առել, որ իր բուրրանվեր մասնակցությունը կարող է բերել Խ(որհրդային) Միության մյուս ազգերի հետ բարվո հաղթանակին ներկա մեծ պատերազմի մեջ:

Մեր հույսը մեծ է առավել ևս, թե պատերազմի հաղթական վերջավորությունից հետո մեր երկիրը պիտի զարգանա ավելի մեծ թափով, ստեղծագործական մի՞ նոր շրջան ապրելով:


Թո՛ղ ծի, ծաղկի՛ և պտղաբեր դառնա մեր թանկագին հայրենիքը...»⁶⁰:

⁶⁰ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Գ. Հովսեփյանի ֆոնդ:

Գարեգին Հովսեփյանը մահացավ 1952 թ. հունիսի 21-ին, Անթիլիասում: Դա նրա ֆիզիկական մահն էր: Մնացին նրա աշխատությունները, ուսումնասիրություններ, օրագրեր (այդ թվում՝ 22 էջ 1945 թ. Սովետական Հայաստան կատարած այցելությունից), որոնք պահպանվում են Երևանի, Լեռնագրադի և Անթիլիասի արխիվներում: Մնաց նրա հայագիտական ու արվեստաբանական մեծ ժառանգությունը, որի հիմքում դրված է մի զգացում, սեր դեպի հայրենիքը, դեպի հայ ժողովուրդը: Հավատ դեպի նրա կենսահաստատ, ստեղծարար միտքը:

Այս էր Գարեգին Հովսեփյանի հավատամքը նրա ողջ կյանքի ընթացքում:





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մայիսի 6-ին, կիրակի.—Կարմիր կիրակի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քին. Մարտիրոսյանը, որը «Հայր մեր»-ից առաջ քարոզում է «Եւ եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւնն մեր, ընդունայն են և հասարակն ձեր» (Ա. Կորնթ. ԺԵ 14):

Մայիսի 8-ին, երեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ է այցելում հյուրաբար Սովետական Հայաստանում գտնվող Սովետական Միությունում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր դեսպան Հերբերտ Բեն Քերտիս Բիբլը՝ իր հարգելի տիկնոջ հետ:

Մեծարգո դեսպանին ու նրա տիկնոջը Վեհարանում, հանուն Վեհափառ Հայրապետի, ընդունում է Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, նրանց ծանոթացնում Մայր Աթոռում կատարվող աշխատանքներին և Մայրավանքի շրջափակին:

Մայիսի 10-ին, հինգշաբթի.—Այսօր Մայր Աթոռ է այցելում Մոսկվայում իսպաներեն լեզվով լույս տեսնող «ELPAIS» (ԷԼՓԱԻՍ) թերթի թղթակից Իզմայել Լուիեզ Մունոզը, որը հարցազրույց է ունենում Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերքերյանի հետ՝ «Հայ եկեղեցու ներկա վիճակը թե՛ Հայաստանում և թե՛ սփյուռքում» թեմայի շուրջ:

Մայիսի 13-ին, կիրակի.—Ե կիրակի: Տօն Երևման և Խաչի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Մովսիս վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Մա է զէն յաղթութեան և զօրութիւն հաւատացելոց, որ ի յերկինս երևեալ» (շարական) բնաբանով:

Մայիսի 17-ին, հինգշաբթի.—Այսօր Մայր Աթոռի միաբանները մեկօրյա շրջապտույ-

տի են մեկնում Բյուրական՝ հայրապետական ամառանոց:

*
* *

Մայիսի 20-ին, կիրակի.—Ջ կիրակի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ես իսկ եմ յարութիւն և կեանք, որ հաւատայ յիս, թէպէտ եւ մեռանի, կեցցե՛» (Յովհ. ԺԱ 25) բնաբանով:

*
* *

**Մայիսի 24-ին, հինգշաբթի.—Խ օր Յի-
ճանց: Համբարձումն Քրիստոսի.**

Այսօր Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարությանը և հավարտ ս. պատարագի քարոզում «Եւ ամբարձեալ զձեռս իր՝ օրհնեաց զնոսա: Եւ եղև յօրհնելն նորա զնոսա, մեկնեցաւ ի նոցանէ: և վերանայր յերկինս: Եւ նոցա եր-

կիր պագեալ նմա՝ դարձան յԵրուսաղէմ ուրախութեամբ մեծա» (Ղուկ. ԻԴ 50—52) բնաբանով:

Վերջում կատարվում է մաղթանք՝ Հայոց Հայրապետական Աթոռի Սսից Էջմիածին փոխադրության տունի առթիվ:


*
* *

**Մայիսի 27-ին, կիրակի.—Է կիրակի:
Երկրորդ Ծաղկազարդ.**

Այսօր Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Մանաչել զիմաստութիւն եւ զըխրատ, իմանալ զբանս հանճարոյ» (Առակք Ա. 2) բնաբանով:

*
* *

**Մայիսի 28-ին, երկուշաբթի.—Այսօր հո-
գևոր ճեմարանում սկսվում են 1978-79 ուս.
տարվա ամառային քննությունները, որոնք
շարունակվելու են մինչև հունիսի 8-ը:**





ԿՈՒՍԱԿՐՈՆ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՉԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 13-ին, կիրակի օրը, Ստամբուլի Բեյօղլու թաղի հայոց ս. Երրորդություն եկեղեցում Կ. Պոլսի ամենապատիվ տ. Ընորհք սրբազան պատրիարքը կատարում է Մինաս սարկավագ Մոթաֆյանի կուսակրոն քահանայական ձեռնադրությունը:

Ս. պատարագը մատուցել է տ. Գառնիկ քհն. Գամճյանը, իսկ ձեռնադրության խորտավիակությունը կատարել է տ. Բարթող ավագ քհն. Խրքաճյանը: Եկամյալն մշակումով ս. պատարագի երգեցողությունը կատարվել է Բեյօղլուի Ասողիկ դպրաց դաս-երգչախմբի կողմից՝ Ժիրայր Արսլանյանցի ղեկավարությամբ:

Ս. պատարագին ներկա են եղել, Բեյօղլուի հայ հավատացյալ ժողովրդից բացի, Կ. Պոլսի մյուս թաղերից և անգամ Ամերիկայի Միացյալ Նահանգներից ժամանած հայեր ևս, որոնք ջերմեռանդությամբ հետևել են սրբազան արարողություններին:

Ձեռնադրյալը, որ վերանվանվել է տ. Մեսրոպ արեղա, ծնվել է Ստամբուլում 1956 թվականին: Իր նախնական կրթությունը ստացել է տեղի անգլիկան լիցեյում, սպա 1974 թվականին մեկնել է Արևմտյան Գերմանիայի Վյուրտեմբերգ քաղաք՝ լրացնելու համար իր միջնակարգ կրթությունը տեղի ամերիկյան կոլեջում: Այն ավարտելուց հետո, 1975 թվականին մեկնել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ, ուր, շարու-


նակելով իր բարձրագույն կրթությունը Մեմֆիսի համալսարանում, հետևել է պատմագիտությանը և ընկերաբանությանը:

Իր ուսմանը զուգընթաց տ. Մեսրոպ արեղ. Մոթաֆյանը մասնակցություն է բերել հայ համայնքների հասարակական կյանքին՝ ուր էլ որ գտնվել է նա: Դեռ մանկուց հաճախել է իր թաղի եկեղեցի և իբրև դպիր մասնակցել ժամասացություններին և արարողություններին:

1978 թվականին ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի թեմակալ առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը, գնահատելով ժրջան երիտասարդի եռանդը և նրա կատարած եկեղեցական-հասարակական գործունեությունը Մեմֆիսի հայ համայնքի ծոցում, նրան կարգում է տեղի հայոց հոգևոր մատակարար:

Ձեռնադրվելուց հետո տ. Մեսրոպ արեղան իր քառասունըրդ անցկացնելու է Բեյօղլուի հայոց ս. Երրորդություն եկեղեցում:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նրան և մաղթում պտղաբեր գործունեություն իր ընտրած ասպարեզում՝ դառնալու համար «Մշակ առանց ամօթոյ», հովանավորության ներքո ամենապատիվ տ. Ընորհք սրբազան պատրիարքի, արտեռանդն նվիրվելու համար իր խնամքին հանձնված հայ հավատացյալ ժողովրդի հոգևոր սպասին:



ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼԻՔ-ՕԶԱՆՁԱՆՅԱՆ

ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿՆԵՐ ԻՄ «ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆԻՑ»

Անցյալ տարի, մայիսին, Միլանում, 92 տարեկան հասակում, մահացավ գերմանացի հայտնի հայասեր, ականավոր գրական-հասարակական գործիչ, հայ ժողովրդի անկեղծ բարեկամ Արմին Թեոֆիլ Վեգները:

1968 թվականին Արմին Թ. Վեգները երբ հյուրաբար գտնվում էր Հայաստանում, սեպտեմբերի 18-ին, իր հարգելի տիկնոջ՝ արվեստագիտուհի Իրենե Կովալիսկայի հետ, այցելեց Մայր Աթոռ և Հայոց Հայրապետին՝ ընկերակցությամբ պրոֆ. Կարապետ Մելիք-Օհանջանյանի:

Սեպտեմբերի 24-ին Հայոց Հայրապետը Վեհարանում մեծանուն հայասերին պատվեց պաշտոնական ընդունելությամբ և իր հայրապետական մասնավոր գնահատությանն արժանացնելով Արմին Թ. Վեգների կատարած սրտագին և անմոռանալի ծառայությունները հայ ժողովրդին 1915 թվականի նահատակության օրերից մինչև այսօր, երբ նրա արդար ձայնը բարձրացավ ի լուր աշխարհի՝ ի նպաստ հայ դատի և ի պաշտպանություն հայ մշակույթի, նրա կուրծքը զարդարեց ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի շքանշանով, որպես հայ ժողովրդի երախտագետ սրտի արտահայտություն:

Հանգուցյալի մահվան տարեելիցի առթիվ «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ու-

շադրությանն ենք ներկայացնում նրա քարեկամ պրոֆ. Կարապետ Մելիք-Օհանջանյանի «Հուշաթերթիկներ իմ «Հուշամատյանից»» հետաքրքիր և բովանդակալից սույն ակնարկը՝ որպես հարգանքի սրտագին տուրք մեծանուն հայասերին:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

•
•

Մեծ Եղեռնի անկաշատ վկա, ականատես թրքական բարբարոսության, թուրք մարդասպանների երդվյալ դատախազ, հայ անմեղ զոհերի պաշտպան, մեծ գրող, բանաստեղծ, վիպագիր և հրապարակախոս, հումանիստ, բյուրեղյա մարդ-քաղաքացի Արմին Թեոֆիլ Վեգները ծնվել է 1886 թվին, Վուպպերթալ քաղաքում, Հռենոսի ափին:

1896 թվին տասը տարեկան մանչուկ Արմինը հանդես է գալիս դպրոցում որպես պաշտպան մի հրեա աշակերտի, որին հալածում էին գերմանացի մշուս աշակերտները: Նրա այդ արարքը խիստ դատապարտության է ենթարկվում ուսուցիչների և աշակերտների կողմից. իսկ հայրը տեղեկանալով այդ մասին, նախատում է որդուն: Ընդհանրապես ազատամիտ և ընկերասեր Արմինը չի կարողանում հաշտ

ապրել խտտաբար պրտաացի հոր հետ, և նրանք հաճախ ընդհարվում են:

1901 թվին 15-ամյա Արմինը Հոե-նոսի հորձանքներից փրկում է 11-ամյա մի անձանոք աղջկա, որի համար ստանում է Ֆրեդերիկ Վիլհելմ Գ. մեդալը: Այդ դեպքըն արձանագրվում է լրագրերում: «Սա առաջին դեպքն է, որով իմ անունը տպագրության է արժանանում, բայց ոչ իբրև գրող, այլ սուկ որպես մարդու կյանք փրկող»,—գրում է նա ինքնակենսագրության մեջ:

1906 թվին քսան տարեկան Վեգները, տարվելով Լ. Տոլստոյի և Ժան Ժակ Ռուսոյի ուսմունքով, գնում է գյուղ, բնության գիրկը, վարում է աշխատավոր գյուղացու կյանք՝ «վարուցան, կովկիթ, հունձ և այլն», իսկ կիրակի օրերը գրում է իր երբեք չհրատարակված վեպը՝ «Հայրերի մեղքը» վերնագրով:

Դեռևս դպրոցական նստարանի վրա, գրում և հրատարակում է իր անունով բանաստեղծությունների առաջին տետրը: 1910 թվին նա՝ արդեն իրավագիտության դոկտորը, հաճախում է հոշակավոր ռեժիսոր Մաքս Ռայնհարդի թատերական դրագրոցը, ապա նրա դերասանական խմբում ելույթներ է ունենում որպես դերասան: Նույն տասնական թվականներին նա լույս է ընծայում մեծ աղմուկ հանած և շատ բարձր գնահատված բանաստեղծությունների ժողովածուն՝ «Քաղաքների դիմակը»:

Գրում է նաև արձակ գեղարվեստական պատմվածքներ և գրական-տեսական բազմաթիվ հոդվածներ:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ նա զորակոչի է ենթարկվում և ծառայում է Գերմանիայի արևմտյան և արևելյան ռազմաճակատներում. ապա 1915 թվին անցնում է Մերձավոր Արևելք, և նրան մեկը տեսնում ենք արդեն Բաղդադի ճակատամասում—Միջագետքում: Իրավագիտության դոկտոր, թատերական բարձր դպրոցի սան, ապա դերասան, բանաստեղծ ու լրագրող Արմին Վեգները, թըրքական զինվորական համազգեստի մեջ մտած, ռազմասանհրատարակական պաշտոնյա է ֆոն դեր Գոլց փաշայի բանակում, միաժամանակ գերմանական թերթերի թղթակից:

Հարավային Հայաստանում, Բաղդադի ճանապարհներից, Միջագետքի անապատներում նա ակնատես է լինում տասնյակ հազարավոր հայերի ջարդերին, առևանջության, բռնաբարության, կախաղաններից, գնդակահարություններից...: Տեսնում է հայ ժողովրդի այդ ցիր ու ցան քեկորները,

դեռ դեռ մարմնի այդ ծվեցները, որ տվախար թափառում են անապատներում, արածում են անասունի պես, տեսնում է հազարավոր դիակներ, դիակներ... անվերջ դիակներ... և նա նկարահանում է իր լուսանկարչական ապարատով մոտ երեք հազար լուսանկար, անհարյախ վայելագրեր հայ ժողովրդի Մեծ Եղեռնի... լուսանկարների մեծ մասը նա փոխադրում է Գերմանիա, մոտ մի երրորդը թուրք պաշտոնյաները բռնագրավում են, իսկ ինքը ծպտված փախչում է Գերմանիա:

1918 թվին, գերմանական հեղափոխությունից հետո, Բեռլինի դահլիճում, Էդվարդ Բերնշտայնի հրավիրած Մոքքի ու Ջեռքի Աշխատավորների միասնական համագումարում, Արմին Վեգները նորից հանդես է գալիս, ընթերցելով «Մտավոր Բանվորների Խորհրդի» կոչը, ապա կարդում է իր հոշակավոր «Արդիականության ծրագիրը»:

1918—19 թթ. Վեգները գրում է իր իսկույն տարածված Բաց նամակը Հյուսիսային Ամերիկայի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնին, թուրքերի կազմակերպած հայկական ջարդերի մասին, որը լույս է տեսնում նախ առանձին գրքույկով, ապա «Բերլինյան թագերախոս» օրաթերթում հարյուր հազարավոր տպաքանակով: Այս թերթից արտատպում են Գերմանիայի, Օվեցարիայի ազդեցիկ թերթերը և միլիոնավոր օրինակներով տարածում աշխարհով մեկ: «Բաց նամակ»-ը գերմաներենից թարգմանվում է հայերեն, ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն և այլ լեզուներով: Ծոտով նա Բեռլինի «Ուրանիա» թատրոնում կարդում է ընդարձակ դասախոսություն «Հայ ժողովրդի տարագրումը Անապատ»:

Դասախոսության ժամանակ մոզական լապտերով ցուցադրվում են այն նկարահանումները, որոնք նա անձամբ կատարել էր Միջագետքի անապատներում: Դասախոսությունը ցնցող տպավորություն է թողնում գերման հասարակության վրա: Դասախոսությունն ավելի ընդարձակ ծավալով լույս տեսավ առանձին հրատարակություն: Ծոտով նա հրատարակում է իր հերթական գիրքը՝ «Անդարձ ճանապարհ», որի բովանդակությունն էն կազմում հայերի տարագրումը և թուրքերի սահմոկեցուցիչ վայրագությունները:

1927 թվին Վեգներն իր ամուսին Լոլա Լանդաուի հետ հրավիրվում են Ռուսաստան, որպես առաջադիմական ակնաւոր գրողներ, մասնակցելու Հոկտեմբերյան հեղափոխության 10-ամյակի հանդեսներին:

Տոնակատարությունն ավարտվելուց հետո, նա գալիս է Խորհրդային Հայաստան ու մտնում երկու ամիս մնում է Երևանում:

Այդ ժամանակամիջոցում նա այցելում է Հայաստանի բոլոր տեսարժան վայրերը, նույնիսկ է հավաքում իր վիպական տրիլոգիայի համար: Տրիլոգիան պետք է ներկայացնեք հայ կյանքը 1894 թ. սկսած մինչև խորհրդային առաջին շրջանը, 20-ական թվականները, հայ իրականության մի քաղաքի դարի պատմություն: Այս վեպի առաջին հատորը գրված է... շարունակությունը ընդհատված:

Գերմանիայում նա գրում է մի գիրք՝ տպավորություններ Խորհրդային Հայաստան կատարած այցելության մասին: Տպավորությունները վատ են, զովասանքով լի:

Աշխարհը տեսնելու բուն ցանկությամբ, նա մտոցիկլետով ճանապարհորդում է Պաղեստինում, Սյուրիայում, Միջագետքում, Իրանում և այլն:

1933 թ. ապրիլին նա մի քանի ամսով է հրավարակում Ադոլֆ Հիտլերին հասցեագրված: Այդ ամսակի հետևանքով նա նետվում է ֆաշիստական զննան, ուր ենթարկվում է սարսափելի կոտորածների և ապա ողարկվում է համակենտրոնացման ճամբար, որտեղից նա փախչում է Անգլիա:

Այդ կոտորածները նկարագրելիս, նա ասում է. «Նոր էի ավարտել հայերի մասին գրած վեպիս այն հատվածը, որտեղ նկարագրված էին հայերի տանջանքները թուրք զննաններում: Այնքան սարսափելի էին այդ էջերը, որ ես որոշել էի մի քանի շաբաթ զբաղվել այլ բանով, որպեսզի մղձավանջային տեսարանների տպավորությունը փոքր ինչ թուլանա, ու ես շարունակեի վեպս. սակայն մտքովս չէր անցել այն, որ գրածներս իրականություն կդառնաին Գերմանիայում, այն էլ՝ իմ հանդեպ:

Վեպին այլևս չմտնեցա. նա այդպես էլ անամարտ մնաց... վեպի առաջին մասը պատրաստ է»:

«Խոշտանգում էին ինձ,—գրում է նա,— և անընդհատ կրկնում.—այլևս չես գրի Հիտլերի դեմ»:

Համակենտրոնացման ճամբարից փախուստի դիմելով, նա երկար ժամանակ ծպտված թափառում է Անգլիայում, Ֆրանսիայում ու վերջապես 1935 թվին հաստատվում է Իտալիայում ավստրիացի գրող Փրոսի Էքսթուն անվան տակ, իսկ երկրորդ կինը՝ լեհ նկարչուհի, Իրենե անունով (Իրենե Կովալիսկա), բաժանում է նրա թափառական կյանքը, ինքն էլ ծպտված որպես հարավսլավական ազատության մարտիկ:

Մուսոլինիի տապալումից հետո, երբ Հոուսը վտանգվում է գերմանաֆաշիստական զորամասերի կողմից, նա կնոջ ու երեխայի հետ թափառում է քաղաքից քաղաք միջոցներ ստանալով մի հոլանդոսի մեկենասից: Ապա, վերջինի միջնորդությամբ, նշանակվում է Պաղեստինի համալսարանում գերմաներեն լեզվի և գրականության դասախոս: Թափառական կյանքի շրջանում նա ֆիզիկական աշխատանքով, ինչպես և դոնապանությամբ է հոգացել ընտանիքի կյանքը:

Շուտով Իտալիան էլ դադարում է նրա համար ապահով բնակավայր լինելուց: Ադոլֆ Հիտլերի Իտալիա այցելության ժամանակ, Վեգներին նորից կալանավորում են և նետում ստորերկրյա զննանը, Ամոնֆի տաճարի տակ:

1947 թ. հոկտեմբերին հեղինակը կալանում է գերմանական բոլոր գրողների մի համաժողով: Զարդարված դահլիճներից մեկում պատին ամրացված է պատերազմի ժամանակ խոշտանգված, տարագրության մեջ մահացած, ճամբարներում զոհված գրողների անվանատախտակը, որ ամբողջ պատն է բռնում, ներքևից մինչև առաստաղը: Հանդիսավոր միտինգ այն հեր բանաստեղծուհի Ռիքարտա Հուրը կարդում է դամբանականը... Լսում են ուրիշ ելած, գլուխները խոնարհած, վիշտն ու կսկիծը համակել են բոլորին, բոլորին... Մահացած գրողների ցուցակում վերջին անուններն են՝ Վեգներ Արմին Թ., Վերֆել Ֆրանց, Ցվայգ Ստեֆան...:

Պատերազմի վերջին ամիսների ընթացքում շվեյցարական թերթերում լույս է տեսնում մի հաղորդագրություն, թե Պաղեստին քաղաքի փողոցներից մեկում կախառան է բարձրացվել մի դասախոս, Պաղեստինի համալսարանի գերման գրականության մի պրոֆեսոր: Վեգների բարեկամներն ու համակիրները ողբում են նրա մահը... հաշտվում են այն մտքի հետ, թե նա համիտենականության գիրկն է անցել...:

Քսան և յոթս տարի անց այն օրից, երբ նա Ադոլֆ Հիտլերին գրել էր, պահանջելով դադարեցնել հրեաների հալածանքը, նա ծպտյալ գնում է նորից Գերմանիա, անցնում է հեռին...: Նրա հասակակիցները, բարեկամներն ու ընկերները այլևս չեն, մահաճել են, մահապատժի ենթարկվել, մոռացվել կամ ցրվել աշխարհով մեկ...: Այն քաղաքը, որտեղ նա մի մարդկահին հասակ է անգնացրել, ահ ու սարսափով է համակում նրան, թվում է խորթ և ահարկու, ասես մի օտար աշխարհ լինի...: Օտարությունից հայրենի տուն է վե-

քաղաքները, բայց հայրենի տան ջերմությունը չի զգում, և նա հեռանում է և ընդմիջտ հաստատվում Հոռմում...: Յոթանասունամյա բանաստեղծ ու փիլագիր Արմին Վեգները մի հին ու ավեր հողմադաց է դնում Սթրասբուրի կղզում, վերանորոգում է սեփական և իր որդու աշխատանքով և հաստատվում այդտեղ, որպեսզի թղթին ավանդի, գրի այն ամենը, ինչ դեռ գրելու է, հրապարակի, ինչ դեռ հրատարակված չէ:


Այդտեղ նրան չեն խանգարում ոչ անիվների դրոշոցը, ոչ զանգակների դողանքը, ոչ մտորների աղմուկը: Այդտեղ չկան բանուկ փողոցներ, չեն շարժվում նաև կառքեր: Այդտեղ միայն ծովի ծփանքն է լսվում, ալիքների գմալելի համերգը, կամ որոտը լեռան, որ մերթ ընդ մերթ կրակի խորձեր է նետում դեպի երկնքի խորքերը, մենակյացի ականջն են հասնում հավիտենականության ձայները...: Լսում է, աչքերը փակում ու մտածում.—«Հայրենիք իմ, քո ազատության համար քեզ կորցրի, բայց քեզ կրում եմ իմ սրտի խորքում: Երկինք ու գետին, ինչ մեծ շնորհ եք արել, որ ինձ ստեղծել եք: Ես միշտ մտածում եմ ձեր մասին, ի՛մ երկիր, ի՛մ ժողովուրդ, ի՛մ լեզու, թե ես կարող եմ, իրավունք ունեմ սիրելու ձեզ: Ինձ համար հար և հավետ երջանիկ լինեք դուք, միշտ ազատ, միշտ խաղաղ»:


Մեծ է Արմին Թ. Վեգների գրական ժա-

ռանգությունը: Մինչև օրս նա գրել է մոտ քսան վեպ-նոման, բանաստեղծությունների ժողովածուներ, ճամփորդական նոթեր, հրապարակախոսական բազմաթիվ սուր քաղաքական տեսություններ, ինչպես հայրենի մասին գրածներից շատերը, մի քանի հարյուր պատմվածքներ, նովելներ, հողմածներ և այլն: Բայց որքա՛ն շատ են այնպիսի գրվածքները, որոնք դեռ լույս աշխարհ չեն տեսած. օրինակ, հայերի մասին գրած տրիլոգիայի առաջին մասը, կամ Գերմանիայի արդի գոյավիճակին նվիրված վեպը և այլն և այլն:

Արհավիրայից կյանք է ունեցել Արմին Վեգները, ահ ու մահ տեսել, մշակութային կոթողների ավերածություններ, մարդկային ցեղի քնաջնջում արյան ծովերի և անենակեզ բոցերի մեջ: Հողմերի և բոցերի միջից հրաշքով դուրս է եկել նա, պահպանելով իր հոգու ազնվությունը, սրտի մաքրությունը, անապատ սերը տատապող մարդկության հանդեպ, անվեհեր, անձնագոհ մարդը, հանուն մարդկության ազատության, հանուն արդարության ու խաղաղության ի սիրտու աշխարհի, ընդդեմ քոնակալության և աշխարհավեր պատերազմների:

Արմին Թ. Վեգները մեծ հումանիստ է ու հայ ժողովրդի ամենից անկեղծ քարեկամը:





ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ*

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ

[Քրիստոսի մարդկության անհրաժեշտությունը աշխարհի փրկության համար]

591. Եվ քանզի մարդկությունը չէր կարող տանել արդարության պատվիրանների լուծը, այդ պատճառով ընկավ մեղքերի համար մահվան կարիքի տակ: Քանզի ոչ ոք մարդկանցից կարող էր կամրջել խրամատը, քանի որ ծառայատոհմ ազգերը չէին կարող այն անել և նրանց վրա Ադամի հանցավորության պատճառով զորացավ մահը և կոլ տվեց, ինչպես ասված է, թե «Ադամի պատճառով ամենքը մեռան»⁵⁹⁷. Իսկ Աստուծո Որդին Ադամի կերպարանքն առավ ծառայի նմանությամբ, ինքը դարձավ մարդկանցից մեկը և եկավ կամրջել խրամատը, որ շինի ավերվածը: Ինչպես ասում է մարգարեն, թե «ավերակները շինվելու են ընդմիջտ»⁵⁹⁸: Քանզի [եկավ] առնելու իր արդարների կերպարանքով մարմինը և նույն մարմնի միջոցով կատարելու էր ամեն արդարություն: Ինչպես խոսեց Հովհաննեսին, թե «այժմ այսպես վայել է մեզ, որ ամենայն արդարությունները կատարենք»⁵⁹⁹:

592. Վանզի ինքը Տերը ծառայի մարմնով ամենայն արդարությունները կատարեց, որպեսզի հաղթություն պարգևի մարմնին, որը խառնեց ու միացրեց Աստվածությանը: Եվ ինչպես աղամական մեկ մարմնի միջոցով [մարդիկ] պարտավոր մնացին, նույնպես և տերունական մեկ մարմնի միջոցով կազատվեց մեղքերի ծառայությունից, այն ազատության միջոցով, որը վեր է ամենայն ազատություններից:

593. Նրանց ազատության համար իջավ ծառայության, որ իր մարմնով լրացնի և կատարի արդարության գործերի կարգերի ամենայն չափերը: Որպեսզի միանգամից վերացնի մեղավոր մարմնի տկարության կարիքը և միանգամից ինքն իրեն քահանայաբար [մատուցի] իր Հորը և միանգամից իր անձը հաճելի կերպով մատուցի, որպես հաշտության զոհաբերություն իր Հոր հանդեպ և նույն զոհաբերությամբ դրա հետ մատուցի մեր խոստովանության հավատքը: Քանզի ինքն էր, որ հաղթեց ու կատարեց և ջարդեց ջնջեց մահու դատակնիքը, որպեսզի կենաց ավետիքը լինի անտարակույս, անսուտ, անվրեպ, քանի որ մենք ամենքս կենդանի ենք ի Հիսուս Քրիստոս:

594. Ի՞նչ է, որ ասվում է, թե «կատարեց իր Հոր կամքը», եթե ոչ այն, որ իր մարմնով բարձրացնելու է արդարության կատարման հաղթանակի անունը: Նա հաղթության նպատակ ձեռք բերեց ամենայն մեղավորների համար, որպեսզի վերացնի

* Ծարուհանված «Էջմիածին» ամսագրի 1978 թվականի № 7, 2-է-ից և 1979 թվականի № 8-ից:

⁵⁹⁷ Ա. Կորնթ. ԺԾ, 22:

⁵⁹⁸ Եզեկ. ԼԶ, 38:

⁵⁹⁹ Մատթ. Գ, 15:

Աղամի որդիների նախատիկը, թափի մահու թույլը և ջնջի դժոխքի խայթոցները, որպեսզի համարձակ լինենք ասելու ժամանակ, թե «ո՛ր է քո հայությունը, մահ, կամ ո՛ր են քո խայթոցները, դժոխք»⁴⁰⁰: Քանզի նա միանգամայն կկտրի բոլոր երեսներից ամեն արտոսը, կվերացնի տխուր սուգը և կտա անտրտում զվարթություն:

595. Եվ ինչպես ինքը խոնարհվեց բարձրությունից, այնպես էլ իր Աստվածությունը բարձրացրեց նրանց, որոնց արժանի գտավ և դարձրեց իր կամքի սիրո զանձանակներ ու սուրբ Հոգու բնակության տաճարներ, որպեսզի նրանք ընկղմվեն Աստվածության մեջ: Քանզի իր սեփական մարմնով ձգեց նրանց նախ իրեն և նրանցով ձգելու է ամենքին դեպի ուրախություն: Ինչպես առաջխառն գիտուն մարգարեն այս բանին հիանալով ասում էր, թե «ուրախ կլինենք քո ազգի ուրախությանը և մենք գովելու ենք քո ծառանգությունը»⁴⁰¹: Քանզի Հոր ծառանգությունը միաժին Որդին է, իսկ ազգերը, որոնք ուրախակից են, տերունական մարմնի արդար մասնակիցներն են: Քանզի ինքը արդարության գովությունը բարձրացրեց ամենայն մարդկանց մարմինների հետ, նա, որ Հոր ծառանգորդն էր և ամեն արարածների ծառանգիչը: Իսկ ովքեր նրան վկայեցին, դարձրեց իր ուրախակիցները: Քանզի նրա մարմնի տոհմակիցներն էին, իսկ ամենայն ազգակից մարդիկ ուրախակից են լինելու [հավատի] վկաներին, որոնք իրենց տոհմակիցներն են:

596. Տերը նախ նրանց զատեց այս երկրային կարգից և հրեշտակակրոն ու աստվածախառն կարգերով բարձրացրեց երկրից, որպեսզի նրանք վերանալով դեպի Աստվածություն իրենց ամեն տոհմակիցներին բարձրացնեն Աստվածության նույն սիրուն, որին իրենք հասել են: Նախ նրանք արժանի եղան գիտենալու Աստվածության խորհուրդները և նրանց միջոցով ամենայն արարածները գիտեցան, որ աշխարհը «չի տեսնում և չի ճանաչում»⁴⁰²: Քանզի նրանք նախ զատվեցին, մեկնեցին այս աշխարհից և ապա իրենց Տիրոջ սիրով հասան նրա Հոգու գորությանը. «Դուք, ասում է, ճանաչեցեք, որ նա ձեր մեջ բնակվելու է մինչև հավիտյան»⁴⁰³:

[Աստուծո Հոգու բնակվելը սուրբ վկաների ոսկորներում, որոնք հանձն առին տանջանքը և մահը նրա անվան համար]

597. Տեսնում եք դատավճիռը, որ ասաց, թե «մինչև հավիտյան բնակվելու է ձեր մեջ»: Քանզի ինչպես սրանց կենդանության ժամանակ, նույնպես և այժմ ու հավիտյան բարեխոս Հոգին բնակվում է սրանց (վկաների) ոսկորների մեջ, որոնք որդեգրության արժանի եղան: Նրանցով դուք հաշտվելու եք Աստուծո հետ, նրա Որդու մահվան միջոցով: Այս սուրբ վկաները, նույն Հոգով, որին արժանի եղան, նույնով ձեզ բարեխոս են լինելու, որպեսզի ձեզ՝ անօգետներիդ և մեղքի տանողներիդ թողություն լինի: Քանզի Աստուծո Որդին, որն իրմով կենդանության օրինակ ցույց տվեց իր սիրելի վկաներին, ասում է նրանց, թե «ես կենդանի եմ և դուք իմ մեջ կենդանանալու եք, քանզի ես Հոր հետ եմ և դուք ինձ հետ եք և ես ձեզ հետ: Ով ընդունի իմ պատվիրանները և պահի, նա է, որ սիրում է ինձ և սիրվելու է իմ Հորից, ես սիրելու եմ նրան և ինձ հայտնելու եմ նրան»⁴⁰⁴:

598. Արդարև Տիրոջը ստավել սիրեցին, քան իրենց [անձնակյան] կարողությունը, քանզի տեսան, որ Տերն ու Արարիչը իր անձը զոհեց նրանց համար, իսկ սրանք իրենց անձերը մահվան տվեցին նրա մահվան փոխարեն: Նրանք խառնվեցին նրա Աստվածության սիրուն և նրա մեծության օթևաններ դարձան: Տեսան, որ Տերն իր անձը մատուցեց որպես զոհ իր Հորը: Այդ պատճառով նրանք էլ զատների նման մահվան մատնվեցին, որ Աստվածորդու համար ողջակեղ դառնան: Քանզի Որդին Աստուծո կատարեց իր Հոր կամքը, իսկ արյանք կատարեցին Աստվածորդու կամքը: Աստվածորդին նրանց իրեն ձգեց և նրանց միջոցով ամենայն տիեզերքը:

599. Նրանք Տիրոջից հրաման ստացան արհամարհելու աշխարհը և ամեն ինչ, որ աշխարհինն է, որ արհամարհեն աշխարհիկ կյանքը, որ անցավոր է: Նրանք պետք է արհամարհեին նաև նեղությունները, որ նրա մեջ են, հանուն արդարության, որ գալու է: Նրանք երանությունն են և մշտնջենավոր արքայության սերմերը: Նրանք պետք է խոտեին և անարգեին, լքեին ու թողնեին ունայնության կարգի յուրաքանչյուր գործ, որպեսզի փրկվեն հավիտեական տանջանքներից:

400 Ա. Կորնթ. ԺԵ, 55:
 401 Սաղմ. ԸԵ, 5:
 402 Յովն. ԺԳ, 17:
 403 Յովն. ԺԳ, 16, 17:

404 Յովն. ԺԳ, 19-21:

600. Ասում է «Վի վախեցեք Երանցից, որ մարմինն են սպանում և հոգին չեն կարող սպանել, այլ վախեցեք դուք Երանցից, որ հոգին ու մարմինը գեհեների հրի մեջ են գցելու»⁴⁰⁵, որպեսզի թողնեն չարը և ընտրեն բարին, փախազեն, ընթանան դեպի սրբություն և երկնավոր լույս, հավիտենական փառքը ժառանգեն և աստվածային հավիտենական փառքի անմահության ժառանգորդ դառնան:

601. Ասաց Աստուծո Որդին «մտեք նեղ դռնով, քանզի նեղ է, ասում է, այն դուրը, որ դեպի բարին է հանում և անձուկ է ճանապարհը, որ տանում է հավիտենական կյանք»⁴⁰⁶: Քանզի նեղությամբ ու վշտերով են հասնելու անսպառ արքայությանը, որ Երանց է վերապահված, երբ Քրիստոս, հարության ժամանակ, կրկին հայտնվի հավիտենական պարգևներով, բերելով անմահություն և ըստ գործերի հատուցելով, ինչպես իր տեղում ձեզ պատմելու եմ:

[Մեր Տիրոջ խոսքերի մեկնությունը՝ լինել խորագետ, ինչպես օձը, և միամիտ, ինչպես աղավաղի]

602. «Եղեք, ասում է, խորագետ օձի նման»⁴⁰⁷: Իսկ ինչ է օձի խորագիտությունը, եթե ոչ այն, որ երբ ծերանում է և տեսնում, որ իր մարմինն սպակալել է՝ իր խորագիտության խորհուրդները ի հայտ է բերում: Իմում է այնպիսի տեղ, որ նեղածերպ վայրեր կան և ըստ իր սովորության ծերացյալ մարմնի սպակալելով մորթը կեղևում է և ազատվելով Երանցից կրկին մանկության է դառնում ու նորոգվելով զարդարում իր ծերությունը: Սույնպես և արդարները անցավոր մարմնի կրքերը իրենց հոգիներից հեռացնում են, որ մտնեն նեղ դռնից և ստանան անմահ թագավորությունը: Քանզի ովքեր սիրեցին Տիրոջը՝ կենդանի են հավիտյան, քանի որ այսպես ասաց «ով հավատա ինձ թեպետ և մեռնի, կենդանի է»⁴⁰⁸, քանզի «ես իսկ եմ հարությունն ու կյանքը» ասաց Աստուծո Որդին, ինչպես վերևում ասացինք՝ ճաշակեց մահը մեզ համար, որ ամենայն ազգերին փրկի սպակալությունից: Իսկ այժմ քանի որ նստում է Հոր աջ կողմը, ամեն ինչ պատրաստում ու շնորհում է իրեն հուսացողներին:

⁴⁰⁵ Մատթ. Ժ, 28:

⁴⁰⁶ Մատթ. Է, 13—14:

⁴⁰⁷ Մատթ. Ժ, 16:

⁴⁰⁸ Յովհ. ԺԱ, 25:

603. «Եղեք միամիտ, ասում է, աղավաղների նման»⁴⁰⁹: Նախ որովհետև աղավաղի մարդասեր է ընտանի և կամենում է միայն սպրել մարդու մոտ, քանզի և Աստված մարդասեր է ու կամենում է միշտ իր սրբերի մեջ բնակվել: Երկրորդ, եթե մեկը բազում անգամներ վերցնի աղավաղի ձվերը կամ ձագերը, սա երբեք երկմտելով իր բույնի տեղը չի թողնի: Սույն օրինակով թեպետ և բազում ու անսպառ են մարդկանց չարիքները արարչության հանդեպ, որը Երանց սնունդի խնամքն է մատակարարում, իսկ Երանց չեն ճանաչում Երան, ասկայն նա չի թողնի ու հեռանա իր արածներից, այլ միշտ այցի է ելնում, փրկություն է կորուսյալներին, որ գտնի. և ասում է, թե «այսօր իմ ձայնը լսեցեք»⁴¹⁰ և կամենում է, այն քանի համար, որ իր Որդուն առաքեց, ամենքին իր շնորհների ժառանգորդ դարձնել, որպեսզի սովորեն օձի խորագիտությունը՝ դեն նետել իրենց հոգիներից մարդկային տգիտության, ամբարշտության հնոտին և զգեճույ աղավաղի անվնաս և սուրբ միամտությունը, որն Աստվածության բարիքներն իր հետ է բերում: Քանզի Աստուծո Հոգին երբ հայտնվեց աշխարհին, որի մասին վերևում պատմեցինք, աղավաղի մարմնավոր կերպարանով երկնաց, որպեսզի ցույց տա բարեսիրտ և հավատարիմ սիրո առավելությունը:

604. Քանզի ովքեր կամենում են Աստվածության, Հոգուն՝ անպնջակալություն՝ տալ, այդ տեսիլքից առնելու են աղավաղի անվնաս և զվարթ բնությունը: Որպես և Տերն ասել էր աշակերտներին, թե «եղեք դուք բարերարներ չարերին և թշնամիներից, թեև դուք ամենքից հայածված լինեք վասն արդարության, քանզի ձեր Հայրը բարերար է՝ ծագում է իր արեգակը բարիների ու չարերի վրա և անձրև է տեղում թե արդարների, թե մեղավորների վրա, որպեսզի լինեք ձեր բարերար Հոր բարերար որդիները»⁴¹¹:

[Արդարների աղավաղերպ երկինք վերանալը և առաքյալների դատողական իշխանությունը կատարածի օրը]

605. Արդ, ովքեր այս արդարության պատվիրանին հավատարիմ մնան, արագաթև աղավաղի կերպարանքը կառնեն և սուրբ Հոգու թևերով կթռչեն հասնելու երկրների արքայությունը, որին ցանկացել էին սրբերը երկրի վրա: Որին և մարգարեն

⁴⁰⁹ Մատթ. Ժ, 16:

⁴¹⁰ Յովհ. Ժ, 16:

⁴¹¹ Մատթ. Ե, 44—45:

կաթոգին տեճացել, սպասել էր ստելով թե «Ո՛վ ինձ կտար թեև աղավնու պես, որ թռչնի վերանայի»⁴¹²: Այս բանը երանելի Պողոսը՝ ձեր առաքյալների առաքելակիցը, միխթարական թղթի մեջ մեկնեց, որով թե-սաղոնիկեցիներին պիտիում էր, թե «մենք որ կենդանի ենք և մնացել ենք, հանգուց-յալներով հանդերձ հափշտակված ենք ամ-պերի մեջ, օդում ընդստաց լինելու Տիրոջը և այսպես հավիտյան Տիրոջ հետ կի-նենք»⁴¹³: Նրանք խառնվելու են Քրիստոսի գնդին, թռչելով լուսավետությամբ, սպիտակե-րամ աղավնիների արագ թռիչքը, որոնք իրենց անձի վրա վերցրին Աստուծո Որդու կերպարանքը, որ նրանց երևաց: Նույն [կերպարանքը] պատվիրեց նրանց իրենց անձի վրա ցույց տալ, որպեսզի նրանց մտտ հոգևոր թեև բուցնի և նրանք խառնվեն աստվածային գնդին:

606. Արդ, զարմացած կհարցնեն վերին լուսեղեն գործերը, երբ տեսնեն մարդկային սրբերի ներքին գնդերը, որոնք գալու են առ Տերը ի ներքուստ վերանալով, թե «ով-քե՛ր են սրանք, որ թռչում են իբրև ամպեր և իբրև աղավնիներ ձագախառն երամով գալիս են առ ինձ»⁴¹⁴: Ապա այնտեղ լսելու են Տիրոջ պատասխանը, թե «սրանք ինձ են հուսացել, տանեմ նրանց իմ սրբության լեռը և ուրախացնեմ նրանց իմ տաճա-րում»⁴¹⁵ և ամենքը, որ տեսնելու են նրանց, ճանաչելու են, թե «սրանք են Աստուծով օրհնյալ զավակները»⁴¹⁶, և ուրախությամբ ցնծալու են ի Տեր: Այնտեղ ստելու է Տերը, թե «եղեք ինձ որդիներ և դուստրեր»⁴¹⁷, անդ սպա արարչական սիրո խնամքի գու-թը պիտի հուզվի, ըստ մարգարեի խոսքի «ինչպես հայրը գթում է որդիներին, Տերն էլ գթալու է իրենից երկյուղածներին»⁴¹⁸:

607. Բանգի «այժմ հուսով նայելով, այս ամենը կարծես հայելու մեջ տեսնում ենք, բայց ապա՝ դեմ հանդիման»⁴¹⁹ և նույն նո-րոգությամբ նորոգվում ենք փառաց ի փա-ռքս, ինչպես Տիրոջ Հոգին, որ փորձում և գտնում է ամենքին ու նորոգում, որին որ արժանի է համարում: Արդ, փորձության բովերի մեջ, ընտրության հրահալոցում, նա դնում է առաքյալների լեզուները, որպեսզի

նրանցով ամենայն տիեզերքին ընտրություն կատարի. քանզի և Աստվածության տա-ճարը և երկրի բովերը Արարչության օթե-վաններ են դարձել:

608. Այս մասին առաջավաստակ մշակ-ները՝ մարգարեները, դավանելով ամեն ազգերին գալիք դեպքերը, նախ իրենց հրեական ազգին ծանուցեցին և սպա տիե-զերքի ամեն ազգերին ազդարարեցին «ի մի ժողովել ժողովուրդներին ու թագավոր-ներին, ծառայելու Տիրոջը»⁴²⁰:

609. Դարձյալ իրենց անձերին անդրա-դառնալով, առաքյալներին նկատեցին ի-րենց ապագա որդիները և Տիրոջը գոչելով, իբրև թե խոսելով իրենց անձերի և որդի-ների մասին, որոնք պիտվելու էին երկրի վրա, թե «Բո հայրերի փոխարեն քո որդի-ներն են լինելու և նրանց իշխաններ կկար-գես ամբողջ երկրում»⁴²¹: Դարձել են երկրի իշխաններ, ամենքին դարձնելու մեկ իշխա-նության հնազանդության, իրենց կամքով ազատության ծառայության, որ ամենքը լինեն արքայության ծառանգորդներ, իրենց գործերի լավությամբ, իրենց իշխաններով հանդերձ:

610. Ինչպես և ինքը Տերը խոսում է հանդերձյալի մասին, մարգարեների բեր-նով, թե «խաղաղության մեջ եմ դնելու քո իշխաններին և քո այցելուներին արդարու-թյան մեջ»⁴²²: Նրանով առաքյալները խմե-ցին այցելության բաժակը և խմեցրին աշ-խարհին խաղաղության բաժակը: Դրա հա-մար էլ մարգարեները առաջվանից իսկ կանխատեսեցին գալիքը, թե «այսպես է ա-ստմ ինձ Տերը՝ նետիր քո արծաթը բովի մեջ և քննիր, թե մաքուր է, ինչպես և ես քննվեցի նրանց համար և առա երեսուն արծաթը ու նետեցի Տիրոջ տունը բովի մեջ»⁴²³:

611. Բանի որ գալու իջնելու էր Աստ-վածորդին և ամեն ազգերը վերացնելու դե-պի Աստվածությունը, դրա համար բոլոր մարդկանց քննություն կատարվեց, պատ-վիրանի ձևով՝ ծառից պտուղը չճաշակելու, որպեսզի արժանի լինեն շնորհապարզի անմահությունն առնելու: Նույնպես և Տերը մարմնի խոնարհությամբ և անարգ երևա-լով, փորձով քննելու է քաջախավատների, որոնք գծուծ կերպարանքով տեսան, սա-կայն իմացան, թե նա Աստված է, թե ինչ-պես և ինչու հավատալու են նրա բնության

⁴¹² Սաղմ. ԾԴ, 7:
⁴¹³ Ա. Թեառ. Դ, 16:
⁴¹⁴ Ես. 4, 8:
⁴¹⁵ Ես. ԾԶ, 7:
⁴¹⁶ Ես. ԿԵ, 23:
⁴¹⁷ Է. Եսթեթ. 2, 15:
⁴¹⁸ Սաղմ. ԾԲ, 18:
⁴¹⁹ Ա. Կորնթ. ԺԳ, 13:

⁴²⁰ Սաղմ. ԾԱ, 23:
⁴²¹ Սաղմ. ԽԴ, 17:
⁴²² Ես. 4, 17:
⁴²³ 2աք. ԺԱ, 13:

բարձրացմանը: Դրա համար առաջ բերելով սասց, թե «ինչպես ես ևս բնավեցի նրանց համար»: Արդ նրանց դարձրեց միաբան, միասնական, իբրև մեկ տուն հանդես բերելով միայն, միահավատ զմարտությանը, միաբարոզ, հողակապ անդամներով, Աստվածության մի տաճար, որով նա բնակելու է ամենայն տիեզերքը իր գալըստյանը հավատալու հարցում:

[Խորհրդածությունն սուրբ Հոգու պենտեկոստեի օրը հրեղեն լեզուներով առաքյալների դասի վրա իջնելու մասին]

612. Արդ, բանգի մեղքերի հուրը կերավ և առհասարակ քայքայեց մարդկային բնությունը և բորբոքյալ մեղքերը հրի նման տոչորվեցին, ապա Աստուծո դառն բարկությունը զարթոցեց վրեժ խնդրելու: Արդարև, քչերը մնացին, ինչպես ասված է, թե «ովքեր մնացին, հազիվ են հաշվվելու»⁴²⁴: Արդ, նախ հաշվեց ու հայտնաբերեց տասներկու հաստատյալներին, որոնց մշակներ կարգեց, ըստ իսրայելական տոհմի ցեղերին: Նա, ըստ բոլոր ազգերի առաջին լեզվական բաժանման, ի հայտ բերեց յոթանասուններկուսին, ինչպես նախքան այս ասել ենք, որպեսզի նրանց միջոցով միաբանության բերի ազգերի և լեզուների նախկին պառակտումը:

613. Իսկ սրանք սկզբում փոքրաթիվ էին: Դրա համար ինքը Աստուծո Որդին եկավ ուսուցանել միաբանական հավատքով ընտրելու միևնույն ամբողջությունը: Դրա համար եկավ և առաջ «հունձքը բազում է, իսկ մշակները սակավ, արդ աղաչեցեք հնձի տիրոջը, որ մշակներ գործի դնի իր բերքի համար»⁴²⁵: Եվ նույն ինքն սրանով պահանջեց նրանցից սեր միմյանց նկատմամբ և միացնելով նրանց, երկրում իր տաճարը հաստատեց և նրանցով փորձության ենթարկեց ամբողջ տիեզերքը:

614. Այս էր հուր Հոգին, որ երևաց պենտեկոստեի օրերին, եկավ կանգնեց առաքյալների լեզուների վրա, եկավ ժողովեց ցրվածներին և սկսեցին խոսել լեզուներով, նախկին ցրված լեզուներով: Վասնզի անօրեկության սերմն ընկավ նախկին անմիտ մարդկանց մտքի արգանդը, դրա համար և ամբարշտության սաղմն ընդունելով, ձեռքը կշտին դնելով, հղացան կոապաշտության ծնունդը մեջտեղ բերել: Իսկ սրա պտուղը

քայքայումն էր և այլափոխ, այլաձայն միմյանցից հեռանալով, այրն եղորից բաժանվելով ցրվեցին:

615. Իսկ սրանք միմյանցից խնդրեցին միասիրտ, միասեր համախմբում: Դրա համար հրամայեց, որ իրենք իրենց մտքով հավաքվեն իրար մոտ, սովորեն ամեն ազգերը հավաքել մեկ միասնության մեջ: Որպեսզի նախ նրանց պատրաստ օթևաններ դարձնի և ապա նրանց առաքի Աստվածության Հոգին, որն առնելով Հոր և Որդու սերը աճապարեց եկավ նրանց մոտ, որ նախ նրանց մեջ բնակվի և ապա նրանց միջոցով ամենայն արարածների մեջ: «Ես և իմ Հայրը, ասում է, գալու և օթևանելու ենք նրա մոտ»⁴²⁶ և միմյանց նկատմամբ ունենալիք սիրով, որն ուսուցանել էր նրանց, առաջ «աղաչեցեք հնձի Տիրոջը, որ մշակներ գործի դնի իր բերքի համար»⁴²⁷:

616. Մի՞թե ինքը չէր կարող առանց նրանց աղոթքների կատարել այն, Նա, որ մեկ ակնարկով ստեղծել էր ամեն արարածներին, այլ վասնզի ընկերասիրությունը ըստ ամենայնի պատվական է Աստվածության մոտ և Աստվածությունը մարդասեր է, ապա նա կամենում է, որ սիրելով միմյանց արժանի լինեն Աստվածությանը, անվրնաս լինելով իրար նկատմամբ:

617. Քանզի մեկ երկրից են հողը, հողմը և հողի բույսը, [այսուհանդերձ] միմյանցից տարբեր են ծագումով, թեև մեկ Արարչի ստեղծածներն են, ուստի պետք է նախ սիրեն արարչությունը և սիրվեն նրանից: Նրան հաճելի ձևով ապրելով նրանք պիտի կարողանան երկնից արքայությունն ստանալ: Քանզի անձնասիրությամբ ընկերասիրություն չի լինի, այլ եասիրություն, որը հաճելի չէ Արարչի կամքին: Սրա համար և մեղքը ի սկզբանե մտավ աշխարհ: Իսկ որովհետև Աստվածությունը մարդասեր է, այդ պատճառով նրանց իր գործերի խորհրդակիցը դարձրեց, որ նրանք սիրեն միմյանց, ելնեն իբրև տիեզերքի հրավիրակ և աղոթեն ու մշակներ հանեն Տիրոջ հնձի գործերի համար:

[Լեզուների բաժանումը հարելուում, մարդկանց ամբարշտության պատճառով: Ամենատարբերորդության խորհրդավոր երևումը հնում և հայտնապես՝ նորում]

618, Քանզի անձնական մարդկանց առաջին հղացած [գործը] ծնեց լեզուների

⁴²⁴ Ես. Ժ, 19:

⁴²⁵ Մատթ. Թ, 87—88:

⁴²⁶ Յովհ. ԺԴ, 23:

⁴²⁷ Մատթ. Թ, 88:

խառնակության անդրվածքը: Նույնը և տեսնում ենք հրեական ժողովրդի մոտ, ըստ մարգարեների պատմածի, թե «լավ հարցրեք և տեսեք՝ լավե՞լ է երթևիցե, թե արուները հղանան ու ծնեն, ձեռքը որովայնին դնելով դարձան խնդրեն: Ահավասիկ տեսնում եմ ամեն այր ձեռքն իր մեջքին: Նայում եմ մարդուն և ահա բոլորի երեսները դավազույն դեղնացյալ են դարձել»⁴²⁹:

619. Արդարև իսկ հղացել էին բազմասեր բարքերի կուսպաշտ ամբարշտությանը և ձեռքերը մեջքին դնելով ակնկալում էին անահավատ գործերով շահավոր պտուղ գտնել իրենց համար: Ուստի գտան վրձբախտություն, ծննդյան ախտի գույնը, որպես հատուցում իրենց մեղադրանքի և գերություն ծնեցին: Որովայնի պտղի փոխարեն ծնեցին ցրման, ավերածի քայքայումը և այն իբրև մանուկ գիրկն առնելով տարան: Օտար ազգերի մոտ պանդխտելով սիրտ ամուսնության սեղանակների փոխարեն թափառական եղան: Իրենց ապստամբության վիճակի փոխարեն կործանումն ընդունեցին իրենց Արարչից, մերձավոր Տիրոջից:

620. Նույն ձևով և առաջին ազգերը, այն բանի համար, որ համարձակվեցին թիկունք դարձնել իրենց Տիրոջը, որ նրանց ոչնչից ստեղծել էր, և ապաստանեցին խեցեկույտ, խեցիով շարված և կարաշաղախ աշտարակը, նույն անօրեն պաշտամունքի ախտով հղանալով, ցրվեցին, ցիր ու ցան եղան, քայքայվեցին, իրարից բաժանվեցին: Նրանք ծնեցին երկրի վրա, ամեն մեկն առանձին, չկեցության մեկությունն իրենց անձերի մեջ, իբրև որովայնի պտուղն իրենց գրկում և մանկամոր նման հղացան ու ծնեցին:

621. Վերհիշելով նախկինում պատահած ջրհեղեղի պատուհասը, սկսեցին շինել աշտարակը, ակնկալելով, որ նույն շինվածով կփրկվեն, երբ [նորից] գա: Չնայեցին Արարչին, որ կարճեն իրենց անօրենությունները նրա համար ու հաճելի գործերով փրկվեն: Ոչ էլ նրա կամքին ու լինելությանը, ոչ առաջ ոչ հետո, ուշադրություն չըդարձրին նրան, որն ի սկզբանե Արարիչն էր: Եվ ամենքն ի ՚ի հավաքվելով դարձյալ չզգացին միմյանց հղությունը, որով և ծանրացած էին:

622. Դրա համար ամենատեսը, երբ նրանց մոտ տեսավ այն, ինչ իրեն անհաճո էր՝ նրանց խակությունը, տհասությունը, ապա Աստվածությունը խորհուրդ արեց ի հայտ բերել նրանց հղությունը, ծնունդը: Ասաց

Աստված «եկեք իջնենք ու պղտորենք նրանց լեզուները»⁴³⁰ և չասաց, թե «զնացեք իջեք ու պղտորեցեք նրանց լեզուները» ինչպես և հրամանի կարգը պատշաճում էր Աստվածությանը, այլ «եկեք, ասաց, իջնենք ու պղտորենք»: Նա գործի մեջ հավատարություն դրեց «պղտորենք» ասելով և հիրավի, այս օրինակով, թե՛ ստեղծեց մարդուն թե՛ բաժանեց լեզուները:

623. Քանզի Աստվածությունը մեր փրկության համար հաճեց ասով մարդկային կերպարանքը, նա սուսքյալների սովորեցրեց Երրորդության անձնավորությունների թիվը, որպեսզի, ըստ այս օրինակի ուսուցանեն ամենքին, ուր որ տիեզերքում մարդիկ լինեն, հայտնելով, որ երեքանձնական միասնական գործության, միապաշտոն տերության առջև ծունկի իջնեն: Իսկ նրանց հղությունը ծնեց միմյանց անհասկանալի ձայների շփոթություն:

624. Իսկ ինչ առաջին այն առաջին ազգերը աշտարակը շինելու ժամանակ «եկեք այնպիսի աշտարակ շինենք, որ նրա գլուխը վեր լինի մինչև երկինք»⁴³⁰: Նրանք չկարողացան հասցնել այն բարձրությանը, որ իրենց հպարտությունը խոստացել էր, որով պարծեցել էին, այլ ավերեցին, փլուզեցին, քանդեցին իրենց լեզուների միասնությունը և համախոհ համերաշխության շինությունը: Աշտարակը չհասցրեցին, ըստ իրենց ասածի, մինչև երկինք, քանզի երկրի վրա էր և այստեղ էլ մնաց շինվածքը: Այլ այնտեղից իջան մինչև կործանում, բաժանում և ցրում: Անօրենություն հղացան, ծնունդ տվեցին քազմահնչյուն լեզուների բաժանմանը, այնպես որ այրն իր ընկերոջ լեզուն չէր հասկանում և միմյանցից հեռավալով ցրվեցին:

625. Իսկ Աստվածությունն այն ժամանակ խորհրդավոր էր երևացել, իսկ այս ժամանակներում հայտնապես ներկայացավ: Իրավամբ հայտնվեց, որպեսզի ամենքը ճանաչեն, տեսնեն ու հավատան: Արդ, մարգարեների մեջ սերմանեց սուրբ Հոգու կանխագիտության շնորհը, որպեսզի հղանան Աստվածության զայստյան ճշմարիտ ավետիսը արարածներին և նրանք սերմանեն ամբողջ տիեզերքին, որպեսզի հղանան կենդանության ակնկալության խորհուրդը, անմահության ծնունդ տան, հղանան հույսը և սերը նախ առ Արարիչ Աստվածը և ընկերասիրության հակում ցույց տան միմյանց նկատմամբ, համերաշխության անձենզ և անկեղծ սիրով:

⁴²⁹ Երեմ. 1, 6:

⁴²⁹ Երեմ. ԺԱ, 17:

⁴³⁰ Երեմ. ԺԱ, 4:

626. Այս բանն ինքը գալով մեկնեց, թե «այս երկու պատվիրաններից են կախված բոլոր օրենքներն ու մարգարեները»⁴³¹: Նախ սիրել Աստծուն ամենայն արտով, ամենայն հոգով և ամենայն զորությամբ հանդերձ, որն առաջինն է: Եվ երկրորդը՝ սիրել ընկերոջն իբրև իր անձը: Իսկ երրորդը՝ լսել Աստվածության խոսքի ավետիսը, առանց երկմտության և հավատալ նրան: Սրանով հղացան պանալու արագությունը, որով թոնչքի են գնալու սուրբ Հոգու թևերի վրա, խառնվելու Քրիստոսի գրեհին, հղանալու հավատքի լույսը և մի անգամ բռնվածներին բերեն ծնելու արքայության մեջ: Ինչպես և ամենայն արարածների համար մարգարեան գոչում է Հորը, իբրև բոլորի կողմից ասված, ամենքի համար, տեսնելով շնորհի որդեգրությունը, որը պատրաստված է մեզ համար, ասում է «իբրև հողության երկուների մեջ եղող, որի ծննդյան ժամանակը հասնելով, ցավից ճշում է»⁴³²:

627. Բայց ինչ է հասած երկունքը, որի ցավերը ստիպում են ճշալ, եթե ոչ ապաշխարությամբ հղացած զոջում և խոստովանություն, ինչպես ասված է, թե «մենք էլ աչնպես եղանք քո սիրելիի համար»⁴³³: Ո՞ր սիրելիի մասին արդյոք խոսում է մարգարեն, եթե ոչ նրա Որդու մասին, որը գալոց էր որիև էր ուղղված ամենայն արարածների ակնկալությունը, որն եկավ ինքն իրմով ամեն ինչ կատարեց, ինչպես ասացին նրան բողոքելով, թե «Տեր, ահի ու երկյուղի մեջ երկնեցինք և ծնեցինք քո փրկության հոգին»⁴³⁴:

[Քաբեղոնի աշտարակի համեմատությունը Քրիստոսի կենսաբար խաչին]

628. Սրդ աշտարակի փոխարեն ինքը Տերը խաչափայտը կանգնեցրեց, ըստ կանխագուշակ մարգարեությանը, որ ասում է, թե «ահավասիկ նշան եմ կանգնեցնում հեթանոսների վրա»⁴³⁵, այսինքն փրկարար խաչը, որի վրա ինքը Տերն է և որից կյանք է տալիս աշխարհին:

629. Բայց «եկեք, ասացին, աշտարակ շինենք, որպեսզի նրա գլուխը մինչև երկինք հասնի»⁴³⁶ և այս, ըստ նրանց ծրագրի կատարվեց, բայց մյուսն այդպես չեղավ:

Իսկ աշտարակը խաչն է, որի վրա Աստվածորդին բազմեց, խաչը երկրի վրա և մարմինը նրա վրա: Աստվածությունը, որը հասնում է ավելի վեր, քան երկինքը, քան անորոշ կետը, քան նյութական արարածների անսահման բնությունը, մնաց պարփակված ու բևեռված փայտե խաչի վրա, լցված ու տարածված նյութականների և աննյութականների վրա: Նա էր, որ առաքյալների և ամենայն սրբերի արտերում բնակված էր Հորով և իր սուրբ Հոգով հանդերձ: Նա լեզուներ ներշնչեց խաչանված լեզուների փոխարեն: Քանզի առաջին աշտարակից ցրում առաջացավ, իսկ խաչից՝ հավաքում: Դրանից՝ հեռացում դեպի տանջանքները, սրանից՝ մերձեցում դեպի արքայություն:

[Առաքյալների համբերելը տանջանքներին ու մահվան, որպեսզի փրկեն մարդկանց հավիտենական տանջանքներից]

630. Առաքյալները սեր հղացան իրենց մարմնակիցների հանդեպ և ծնեցին ամենայն արարածներին ու խառնեցին Աստվածությանը: Մտանեցին իրենց անձերը ընկերների բողոքների պատճառով, քանզի Աստուծո հետ խոսել էին: Այս պատճառով իբրև թշնամիներ չարամահ եղան նրանց բարիքի համար: Բարիքի փոխարեն չարիք էին ընդունում հրավիրակները (առաքյալները), որոնք եկել էին ամենքին կոչ անելու Աստվածության սիրո հարսանիքին: Փոխանակ նրանցից դրվատանք ու պատիվ գտնելու, տանջանքով մահ ստացան, որպես և դուք իսկ արեցիք ձերոց: Քանզի տգիտությամբ արեցիք և հիրավի չէիք հասել լավության [գիտակցության]:

631. Արդ, առաջին աշտարակի պատճառով եղավ լեզուների ցրումը և այժմ ինքը Տերը ցրված ազգերը ժողովեց ու բևեռեց իր մարմնի վրա, որը մեզանից էր առել և դրանով փայտից կախվեց, որպեսզի միասնական պաշտամունքի մի հավատի մեջ անքակտելի դարձնի: Իսկ նրանք հրաման ստացան սիրել Տիրոջը և նրա կամքը կատարել, որպեսզի իրենց տոհմակիցների, այսինքն ամենայն մարդկանց հոգիները փրկեն հավիտենական մահվանից: Քանզի Տերն ինքը եկավ և մեռավ բոլոր նրանց համար, որոնց ամենքին անմահության է բարձրացնելու: Իսկ սրանք առաքվեցին որպես նրա կամքի քարոզիչներ, որպեսզի ամենքին տեղյակ դարձնեն Աստվածության փրկությանն ու երախտիքին, որը եղել էր նրանց մեջ:

⁴³¹ Մատթ. ԻԲ, 40:
⁴³² Եւ. ԻԶ, 17:
⁴³³ Անդ:
⁴³⁴ Եւ. ԻԶ, 17—18:
⁴³⁵ Եւ. ԺԱ, 12:
⁴³⁶ Ծննդ. ԺԱ, 4:

632. Այս պատճառով առաքյալները սուրբ Հոգուց հղացան և ծնեցին լեզուներ, որոնք անմահության մասին էին խոսում ամենքին: Քանզի ինքը Աստվածության Հոգին եկավ փորձելու և քննելու ամենքին առաքյալների լեզուներով, ինչպես արծաթը բովի մեջ: Ինչպես ամենքին ասված, իբրև աշխարհին ուղղված, մարգարեան իբրև փող խոսելով նույն գործությամբ գոչում է, թե «փորձեցիր մեզ, ով Աստված, ու քննեցիր, ինչպես արծաթն է քննվում»⁴³⁷:

633. Արդարև իսկ արդարները փորձվեցին, ինչպես բովի մեջ, սուրբ Հոգու միջոցով: Նախ նրանց փորձեց փշելով Հոգու գործությունը: «Փչեց նրանց և ասաց՝ առեք սուրբ Հոգին»⁴³⁸, որպեսզի նախ զոտի նրանց որպես արծաթ և աղտը մաքրի: Քանզի Տիրոջ տունը նրա աստվածային մարմինն էր: Նրանք նաև տիեզերքի համար զտելու բով էին: Ընկան առաքինի առաքյալները բովի մեջ նախ տասներկու թվով, այրվեց հավեց, կորավ նրանցից մեկը՝ կորստյան որդի Հուդան, անագի նման հրի մեջ քայքայվեց, սպառվեց:

634. Սրբվեցին տասներկու և զուվեցին ինչպես արծաթը բովի մեջ ու եղան Արարչի կարիքների ճարտար ընտիր անոթներ: Փորձվեցին պես-պես նեղություններով ու տանջանքներով, որ նրանց պատճառեցին մարդիկ, այնպիսիները, որոնց օգտի համար են խոսել: Հաստատ լինելով սիրո մեջ վկայություն տվեցին մարմնակիցներին, որոնցից տանջանքներ էին ընդունել, որպեսզի կատարվեն առաքիչ Տիրոջ հրամանները: Նրանք օգուտի սեր բերեցին ընկերներին, համբերելով նեղություններին, որ անցավոր լինելու պատճառով արհամարհեցին: Քանզի աշխարհի Արարիչը երբ մուս անգամ հայտնվի, նրանք նրա հետ թագավորելու են հավիտենական թագավորությամբ, ինչպես հիրավի նրանց կողմից ասում է նույն երգողի մարգարեությունը, թե «փորձեցիր մեզ Աստված և քննեցիր ինչպես քննվում է արծաթը, մեզ որոգայթի մեջ նետեցիր և մեր թիկունքին բեռ դրեցիր ու մարդկանց նստեցրիր մեր գլուխների վրա»⁴³⁹:

635. Քանզի նրանց քննեց Հոգու հրով և մարդկանց ձեռքով, որպեսզի փորձության հանդեպի ժամանակ նրանց քաջությունը երևա արդարության համար կրած նեղությունների միջոցով: Ինչպես և դուք գիտեք

նրանց փորձը, ովքեր ձեր երկրում, ձեր առջև Աստվածության վկաներ եղան: Նրանք սիրեցին Աստվածորդու կրկին զալատյան խոստացված հույսը: Կենդանի Հոգու հուրը իրենց վրա վերցրին և արծանի եղան ընդունելու անմահության բխման վտակները: Այս բանի համար նրանք կարողացան դիմագրավել, անցնել, արհամարհել հրով տանջանքները և սառնամանիքով պաղած մեղքերը: Արդարև արհամարհելով արհամարհեցին մեղքերը և նրա հետ նաև զալիք նեղությունները ու գոհացան շնորհներ տվողից, թե «մեկը անցանք հրի ու սրի միջով և դու մեզ հանգստի հասցրիր»⁴⁴⁰:

636. Քանզի նախ անցան հրի, ջրի և մեղքի սրի միջով և արհամարհեցին մեղքերի հուրը, անօրենության ջուրը և փորձության տանջանքի սուրը. նրանք ընդունեցին կենդանության լուսավորիչ հուրը, նորոգության ջուրը, և սուրը, այսինքն «Աստուծո խոսքը, որն ավելի սուր է քան ամենայն երկաթի սուր ու պողպատ և կարող է հասնել կտրել, ճեղքել մինչև անջատումը հոգու, մարմնի ու շնչի»⁴⁴¹:

637. Սրա համար էլ մարգարեան նախապես այս էր առաջարկել, թե «երկաթի սրերը նրանց ձեռքում են»⁴⁴², որով և կրտրելու, հատանելու են և միանգամայն վերացնելու երկրից անբարձրությունների անօրենությունները: Իսկ ի՞նչ են անելու հնձված ու կտրվածի հետ: Ասում է, թե «հողմերը տանելու են, ամպերը բաժանելու և փոթորիկն իբրև խոփ կուտելու է նրանց»⁴⁴³: Իսկ կուտակվածները անշեջ հրի են մատնվելու: Քանզի արդարև իսկ ճշմարիտ մշակների գործն այն է, որ պիտանի արդյունքը, շահեկանը շտեմարանների մեջ ժողովեն, իսկ փուշն ու եղջերափուշը հրո ճարակ դարձնեն:

[Առաքյալների նմանվելը կոածո փողերի, կենաց խոսքը տիեզերքին քարոզելու մեջ]

638. Արդ, սրանք նախ իրենք իրենց փորձեցին և ապա աշխարհի բովեր դարձան: Կենդանության հուրն ընդունեցին, կրկին մտան բովերի մեջ իբրև արծաթ զտված ու մաքրված և ձուլված Արարչի սիրո մեջ: Նրանք հնոցի հալոցից հանվեցին և եղան կոածո փողեր ի սպաս դրված

⁴³⁷ Սաղմ. ԿԵ, 10:

⁴³⁸ Յովն. Ի, 22:

⁴³⁹ Սաղմ. ԿԵ, 10—12:

⁴⁴⁰ Սաղմ. ԿԵ, 12:

⁴⁴¹ Հմմտ. Եբր. Դ, 12:

⁴⁴² Սաղմ. ՇԽԹ, 7:

⁴⁴³ Ես. ԽԱ, 16, ԽԲ, 24:

Տիրոջ հրամաններին: Նրանք գոչեցին ու լցրին տիեզերքը: Փողերը փողերին գոչեցին և ընկերն ընկերոջ ասաց, թե «ավետարանեցեք օրըստօրե նրա փրկությունը, պատմեցեք հեթանոսներին նրա փառքը և ամենայն ժողովուրդներին նրա հրաշքները, քանզի մեծ է Տերը և հույժ օրհնյալ, ահարկու է նա ամեն կուռքերի նկատմամբ»⁴⁴, և թե «հեթանոսների ամենայն կուռքերը ոչինչ են, սակայն Տերը երկինքն է ստեղծել»⁴⁵: Իսկ կոած պատկերների փոխարեն առաքյալները կոած շեփորներ կոչվեցին, որ ամենայն աշխարհը ընդհանրապես լըցնեն, ինչպես ասված է, թե «ամբողջ երկրով մեկ հնչեց նրանց ձայնը և մինչև տիեզերքի ծագերն են հասնում նրանց խոսքերը»⁴⁶:

639. Արդ, նրանք տիեզերքի հնոցներ են և Հոգու կենդանության հուրը նրանց լեզուների վրա է, որպեսզի փորձեն ամենայն աշխարհը և կոչեն Տիրոջ անունից Աստվածության ճշմարիտ բնության հայտնությունը, թե «տեսեք, տեսեք, որ ես եմ և չկա Աստված բացի ինձանից» թե «ես եմ սպանում և ես կենդանացնում, ես եմ հարվածում և ես բժշկում և չկա մեկը, որ ձեզ փրկի իմ ձեռքից» և թե «փայլակի նման սրելու եմ իմ սուսերը և հանուն վրեժի արձակելու եմ իմ աջը, հատուցելու եմ իմ թշնամիների հատուցումը»⁴⁷:

640. Առաքյալների լեզուները հղացան իրենց հավատի անչափությունը և ծնեցին լեզուներ, որ չգիտեին: Փողի նման գոչեցին [ազդարարելով] միահեծան տերության իշխանությունը և մարդկանց անթիվ բազմությունը տարան հրեշտակների կարգը՝ սպասավորելու Աստվածորդուն, քանզի ընկած հրեշտակների փոխարեն, որոնք գլորվեցին աստվածային լուսեղեն սպասավորությունից, մարդու որդիները կարող են դառնալ հրեշտակներ, բարձրանալ ու գրավել նրանց տեղերը: Այսպիսով փառավորյալների կարգավորված թիվը կմնա անխախտ, լիությամբ անպակաս, որպեսզի փառավորյալների հասարակությունից գովեստները բազմանալով աճեն հետևյալ համեմատությամբ «փառք բարձունքներում Աստծուն, երկրում խաղաղություն և մարդկանց հաճություն»:

⁴⁴⁻⁴⁶ Մադմ. ՂԵ, 2—5:

⁴⁶ Մադմ. ԺԸ, 5:

⁴⁷ Բ. Օր. ԼԲ, 89—41:

[Մաների և բույսերի բողբոջելը գաբան եղանակին իբրև օրհնակ մարմինների ընդհանուր հարության աշխարհի վախճանին]

641. Առաքյալները եղան տիեզերքին [ազդարարող] ժամատու փողեր, որ ամբողջ երկրի սրտերի մեջ դնեն նշանակված ժամկետի ակնկալությունը սպասելու տյառնագալուստ փողին: Քանզի նույն ձայներով գալու են և այդ ժամանակ ծանուցելու փողի նույն ձայնը: Մահահանգիստ քնից ելնելով դեպի գարուն, ցույց են տալու յուրաքանչյուրի բույսի ծաղկելը: Այնուհետև երբ հասնեն այս գարնանը, յուրաքանչյուրն իր սերմի արմատից հատուկ կերպարանքն է ի հայտ բերելու:

642. Մեկն իբրև քաղցրահամ ու գեղեցկատես արմավենի, ինչպես ասում է կանխագուշակ մարգարեությունը, թե «արդարները արմավենիների նման ծաղկելու և Լիբանանի մայրիների պես բազմանալու են: Տնկվելու են Տիրոջ տանը և մեր Աստուծո բակերում ծաղկելու են»⁴⁸: Դարձյալ ինքը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոս, իր ավետարեք ու կենսաբեր Ավետարանում ամենքին հայտնապես գիտություն է տալիս, թե «թզենու ծառից սովորեցեք առակը, քանզի երբ ուտերը կակղեն ու տերևակալեն, գիտեցեք, թե մերձ է գարունը»⁴⁹:

643. Քանզի ամեն տեսակ ծառատունկերը լավ նմուշներ և օրինակներ են, յուրաքանչյուրն ի հայտ բերելով իր կերպարանքի տեսքը: Երբեք չեն փոխում ծաղիկների գունագեղությունը, համը, հոտը և տերևները: Քանզի արմավենին պիտի ունենա իր տեսքը, գույնը, համը և բերքը, ինչպես նաև արմատի բնական վիճակն ու բույսի աճը: Նույնպես և թզենին ունի իր տերևներն ու կեղևի կառուցվածքը, նրա միջուկը ալ տեսակ է և ուրիշները նրանից տարբեր են: Կարմրախնձորն ունի իր ձևը, կարմրատանձն իրը և կարմրադեղձն իրը: Նրանք նույն բնությունից են, սակայն աւազույն են, քանզի յուրաքանչյուրը նրանցից նույնիսկ իր առանձին հոտն է արձակում:

644. Այսպես և կիտրոնը, քաղսամոնը (սպաքաղսամոն), դափնին, գեղեցիկ ձիթենին, սերկևիլը, մուրտն, ընկուզը, նուշը, քնարուկը, հաճարուկը, թուրթ, նուշը, և հոնը (հոն): Եվ ամենայն մրգաբեր, ծաղկաբեր, տերևաբեր և հասկաբեր ծառերը, բարձր են և հսկա, ինչպես մարին, նոճի, սոճի (շոճն), թեղոշը (կարմիր կաղնի),

⁴⁸ Մադմ. ՂԱ, 13—14:

⁴⁹ Մառք. ԻԴ, 32:

սարդը (սարդենի), սարոն (կիպարիս), սուր (չինարի), հակրին (արքայամորի), գին (գիճի), կաղամխը, ուռին և տուսխը:

645. Սույնպես և գույնզգույն ու երփնեքանգ ծաղիկները, ինչպես մանրագորը (մարդախոտ), վարդը, շուշանը, սուպագանը (տիպատատուկ), հասմիկը, անխարը (տուսա), ամակը (տերեփուկ), ներգիսը (նարկիս), շամպլիտակը (քարխոտ), մեղրուկը (թոքախոտ), հորտուն ու մորտը, մանուշակը և ամենայն համասարամ (ամուշահոտ) ծաղիկների ու ծառերի բողբոջը երևալու է գարնանը, ձմեռվանից հետո:

646. Նույնօրինակ է և մեռելների հարությունը: Քանզի այն բանից հետո, երբ ստեղծվեց աշխարհը, ոչ ոք աշնան կամ գարնան չի փոխարինել իր ընկերոջը և կամ տվել իր կերպարանքը որևէ բույսի, որը նույն ծնունդն ունի: Այլ սկսած իրենց ստեղծումից, արարչագործության ժամանակից մինչև վախճանի ժամանակը, թեպետ ստեպ-ստեպ աշնանը աճող բույսերի մեջը դատարկվում է, չորացած տերևներն ընկնում են և պարարտացածները ձմեռահար են լինում, սառնապատ, ձյունաթաղ, եղյամահար [ձմեռվա] խստությունից զարնված քայքայվում են ծաղիկների արմատները, ծառաստանների բազմակույտ ճառերը, անտառները բարձրաբերձ մայրիկներով, առատ աճած տնիներով՝ սուվարապատ ուռճացած, ճյուղերով հանդերձ, սակայն երբ հասնում է գարնան ժամանակը ամպերից շող ստանալով, որոտից ցնցված, անձրևով հղիացած, ցողահար, առատաբուխ աճելով ամռանը, նրանցից յուրաքանչյուրը իրեն հատուկ ծաղկուն տերևներ է ընծայում: Ըստ ամեն մեկի բնությանն նրա տեսքը մնում է իր կերպարանքով և չի փոխվում մի այլ ձևի և կամ ընկերը չի նմանվում նրան, այլ ըստ կարգողի հաստատած ձևի նույնությամբ մնում է իր բնության մեջ: Անխախտ, անխափան, պարարատված ըստ Արարչի կարգադրության բուսնում և փթթում են:

647. Դալար մանրախոտերը տեսակ-տեսակ և այլևայլ ձևերով են տարբերվում միմյանցից, ինչպես լողը (ջրիմուռ), վարսակը և կնուկը (վաղմեռուկ) և նրանց նմանները: Նաև մարդկանց օգտակար սերմերը, ինչպես ցորենը, հաճարը, գարին, կորեկը, գալարսը (դեղին կորեկ), ոսպը, սլոնը, որիզը (բրինձ), կուղը (բակլա), սխտը և բազում այլ սերմեր, որ կարելի չէ թվարկել: Սրանցից յուրաքանչյուրը զարնանը, իր ժամանակին ցույց է տալիս իր հարությունը՝ բույսով, համով, հոտով, բողբոջով, ծաղկով և պտղով: Տերևագգեստ

բույսերն իրենց մերկությունը ծածկում են յուրաքանչյուրն ըստ իր ձևի:

648. Այսպես և մարդկային մտքերն ու մարմինները, աստվածային ցողով պարարած գերեզմաններից բուսնելու են մեծ Գարնանը: Քանզի չորացած ոսկորների շուրջը անմիջապես կազմվելու են մեղրը, ջղերը, աճատները և նյարդները, մորթեր զգեցած և մազերով զարդարված: Նրանց հոգիները և նմանությունն իրենց են դառնալու, քանզի նրանցից ամեն մեկը կրելու է իր գործերի պատկերը իր գլխի վրա, ինչպես քաղցր մրգեր և անուշահամ պրտուղներ, համեմունքներով, յուղերով, ծաղիկներով և բուրմունքով, առատ ճյուղերի և ջրերի վրա աճած տերևների վայելչությամբ: Այս բանը սաղմոսներգուն մարգարեության մեջ նվազեց «նա լինելու է ծառի նման, որ տնկված է ջրերի հոսանքի մեջ, իր պտուղը ժամանակին է տալու և նրանց տերևը չի թափվելու և ամեն ինչում հաջողություն է ունենալու»⁴⁵⁰: Եվ դարձյալ «ծաղկելու են Տիրոջ քաղաքում իբրև երկրի խոտ»⁴⁵¹ և թե «օրհնյալ են լինելու հավիտյան»⁴⁵²:

[Ծաղիկների ու փշերի բուսնելը յուրաքանչյուրն իր բնությամբ որպես օրինակ արդարների ու մեղավորների հագրության յուրաքանչյուրն իր գործերով]

649. Արդարև բուսաբեր զարուն օրինակ է տալիս մարդկանց հարությանը մեռելներից: Քանզի ծաղիկներն ու ծառաստանները զարդարված են և փշերն էլ են բուսնում, ինչպես դժմիկն (եղջերափուշ) ու տառասկը, եղիճն ու պատեղիճը, խայթահարը, ժանտափուշը, տափափուշը, սրափուշը, որոմը, կայծուկը (ուղտափուշ), վնասակար գաղձը (գալլախոտ) և ինչ որ սրանց նման է և ապա այս ամենը յուրաքանչյուրն իր բնության համեմատ բուսնում է: Իսկ օգտակար ծաղիկները և կամ անտառների ծառերի մատղաշները զարնան հասնում են իրենց բնական վիճակին:

650. Իսկ մարդկանց մտքերը, որոնք Աստվածության բուրաստանների տուններն են կամ ծաղկանոցների ծաղիկները, ի վիճակի են իրենց կամքով կրելու իրենց մեջ տերևների, ծաղիկների, անուշահոտությունների ու մրգերի նմանություններ և օրինակներ: Քանզի մի քանիսը դառնաբեր են,

⁴⁵⁰ Սաղմ. Ա, 3:

⁴⁵¹ Սաղմ. ՀԱ, 16:

⁴⁵² Սաղմ. ՀԱ, 17:

մյուսները քաղցրաբեր, մի քանիսը մրգաբեր են, մյուսները փշաբեր, մի քանիսը արդարությունաբեր են, մյուսները մեղսաբեր, իսկ մյուսները ծաղիկներ են դառնում, որպեսզի թագավորի պատվական սկուտեղների մեջ երևան և պատրաստվեն որպես արծաճավորների ուրախության զարդեր, պասկներ, ըստ սուրբ Հոգու գուշակությանը, ասված Եսայի մարգարեի բերնով, թե «այն ժամանակ վայելչության պրսակ կլինես Տիրոջ ձեռքին և արքայության թագ Աստուծո՞ւ ձեռքին և քեզ կոչելու են իմ կամքը, իսկ քո երկիրը՝ բնակչության շինություն»⁴⁵³:

651. Այնտեղ շինությունը լինելու է աստվածային, անասվեր, անխավար, անկարոտ, և անփոփոխ քաղաքում: Քանզի այժմ այժեմ բույսերը մնում են կապված իրենց բնությանը, բայց միայն մարդ կոչված տունկերը կարող են յուրաքանչյուրը իրենց բնությունը տեսակ-տեսակ կերպարանքների շրջըշրջել: Արդ, ինչպես կամեան, կթաղեն բույսն իրենց հոգիների մեջ և նույնով թաղվում են գերեզմանում, որը մահն է: Սա աշունն է ոչ խոտերի, այլ մարդկանց, որը հավաքում է նրանց շտեմարաններում: Իսկ գարունը ոչ թե խոտերի կամ փայտերինն է, այլ մարդկանց, արտադրում է այս կերպարանքը, որ դու քեզ հետ թաղեցիր գերեզմանում: Քանզի էթե ծաղկաձև կամ անուշահոտ, անուշարար, անուշահամ արդարությամբ անջես գերեզմանում, քեզ հետ շուտով կանի արդարությունը, քո հարության ժամանակ: Ապա էթե մեղքերով թաղվես քո անվան գերեզմանում, քո գարնանը, քեզ հետ փշեր կբուսեն և քո շուրջը կաճեն:

[Անպտուղ թզենու գոսանալը Քրիստոսի անձեքից, որպես օրինակ մեղավորների դատասպարտության, դատաստանի օրը]

652. Հապա լսիր մեծ Հովհաննեսին, ինչպես է բողոքում հրեաների Աբրահամյան ազգի դեմ. «սրանից հետո ձեզ համար բերեք ապաշխարության արծանի պտուղներ և մի ծեծեք ձեզ ասելով, թե ունենք հայր Աբրահամին, ասում եմ ձեզ, որ Աստված կարող է այս քարերից Աբրահամի որդիներ հանել»⁴⁵⁴: Նա ոչ թե Աբրահամին զրրկում է հայրապետությունից, այլ [պահանջում է], որ լինեն նրան արծանի որդիներ և ոչ թե անարծան: Արդ, օգտակարներին

հոգ է տանում, իսկ անշահեկան խոտերն ու փշերը արդյոք ի՞նչ կկամենա անել: Անմիջապես ցամաքեցնելու և գոսացնելու է այնպիսիներին, որոնց մեջ պտուղ չի գրտնելու:

653. Հապա նայիր թզենու առակին և տես. եկավ Տերը թզենու մոտ, որ նրա վրա պտուղ գտնի ու չգտավ, քանզի պտուղ բերելու ժամանակը չէր, և անիծեց նրան, թե «սրանից հետո ոչ ոք քեզանից պտուղ թող չուտի»⁴⁵⁵: Քանզի ամենայն բուսաբերները, տերևաբերներն ու ծաղկաբերները իրենց ժամանակին են պտուղ բերում, իսկ սա ինչո՞ւ անիծվեց, քանզի պտուղի ժամանակը չէր: Արդյոք էթե կարիք լիներ Նա, որ միայն իր խոսքով հրամայեց երկրին ի հայտ բերել ծառերը և երևան բերել երկրի վրա մայրիների քազմությունը, յուրաքանչյուրն իր պտուղներով և ամենայն բույսերը, յուրաքանչյուրն իր տեսակի սերմով, չէ՞ր կարող այդ ժամանակ ևս պատրաստել կարիքավորների համար ծառի պտուղը:

654. Արդ, անտեղի չէր, որ առաջ բերեց ծառի գոսության [օրինակը], այլ ինքն անմիջապես ավելացրեց, թե «թզենից սովորեցեք առակը»⁴⁵⁶: Թզենին ներկայացնում էր անպտուղ մարդը, քանզի Նա ցամաքեցնելու է անպտուղ արդարության փշերը: Հապա լսիր մեծ մարգարեին, առաջընթաց Հովհաննես կարապետին, ինչպես ասում է, թե «այսուհետև տապարը ծառի արմատի մոտ է, ամեն ծառ որ պտուղ չի տա, կրկտրվի և հրո նյութ կդառնա»⁴⁵⁷: Եսայի մարգարեն ասում է, թե «մեղավորները կլինեն փշի նման այրված ու նետված»⁴⁵⁸: Իսկ արքայության կենդանի ջրով խնամված դաւար խոտը, այն գարնանը նա նորոգելու, պարարելու է: Դրանք պտուղ են տալու մեկի դիմաց հարյուրապատիկ, մեկին՝ երկհարյուրապատիկ և մեկին՝ երեքհարյուրապատիկ, այսինքն ըստ վաստակի յուրաքանչյուրը տալիս է լուսավոր հավատի հատուցման պարգևները:

[Թռչունների աղաղակը գարնան գալուն իբրև հարության փողի կոչման ազդարարություն]

655. Արդ, բուսաբեր ու ծաղկաբեր գարունների ժամանակ, որոնք ձմեռվա հնությունից հետո գարնանային գեղեցկության

⁴⁵³ Ես. 49, 8-4:
⁴⁵⁴ Մատթ., 9, 8-9:

⁴⁵⁵ Հմմտ. Մատթ. ԻՍ, 19:
⁴⁵⁶ Մատթ. ԻԳ, 32:
⁴⁵⁷ Մատթ. 9, 10:
⁴⁵⁸ Ես. 19, 12:

վերածնունդն են բերում, թոչուններն էլ գիտեն իրենց գալստյան ժամանակը: Ինչպես այս մասին էրեմիա մարգարեն, մեջբերելով իր ժամանակի դեպքերը, որպես հանդիմանության օրինակ և ակնարկելով հանդերձյալին ասում է, թե «արդարև ծիծեռնակն ու տատրակը և խորդը (կոունկ), որոնք դաշտի թոչուններ են, գիտեն իրենց գալստյան ժամանակը»⁴⁵⁹: Հանգի գարնան ժամանակով և իրենց գալստյամբ ցույց են տալիս մարդկանց ուրախ կյանքի ժամանակը, երգելով, ճշարով, ճովողելով և բույն շինելով:

656. Ծիծեռնակը մարդասեր է, երբ մարդիկ նրան տեսնում են, նրանով ճանաչում են գարնան աճի կանաչագգեստ հասկը: Իսկ տատրակը ամուսնասեր է, նա մարդկանց լսելիքը լցնում է ջերմ քաղցր ձայնով: Գործելով թեթև շյուղերով շինված, չնչին փաղտակերտիկ [բույնը] ապավեն է պատրաստում իր երկթևյան ձագերի ձվերին:

657. Նույնպես և դասադաս կոունկ թռչունները, գալով գարնանային ժամանակներում, երամներով տարածվում են: Ելնելով, թռչելով ամենաբարձունքները բարձրանալով, օդի վրա թևերով ու մագիլներով

կոխում են անհաստատ [տարածությունը] և իրենց ճանապարհն ընթանում: Փողեր դառնալով գոչաձայն աղաղակ են բարձրացնում, քնից զարթնեցնում են մշակներին մարդկանց օգտակար գործի արթնության և կանուխ [զարթնողներին] փութացնում են եզների մոտ:


658. Թոչունները երկրագործության, հողագործության փողեր են՝ առաքինության հորդորող, ինչպես մեղուն կամ մրջյունը վատերի ուսուցիչ ու նախատող են, այնպես էլ նույն ձևով թոչունները մեծաձայն, մեծագոչ փողով Տիրոջ գալուստն են ազդարարում ամենքին՝ մեռելների հարության միջոցով: Ինչպես անվում է Սողոմոնի Երգի աստվածապատում իմաստության նվագում, թե «բանտարկյալները զարթնելու են թոչունի ձայնով»⁴⁶⁰: Իսկ ովքե՞ր են քանտարկյալները, եթե ոչ հավաքված հոգիները, պահված հրամանի տակ, որոնք ամեն մեկն իրենց մարմիններով են զգեստավորվում, ամեն մեկն ըստ իր գործերի հատուցում է աստնալու, իր սերմանած աշխատանքի պտուղը, ինչպես վերևում պատմեցինք և կամ հետագայում պատմելու ենք ձեզ:

(Շարունակելի)

⁴⁵⁹ Երեմ. Ը, 7:

⁴⁶⁰ Ժողով. ԺԲ, 4:





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|----|
| Ծանուցում | 8 |
| Հաղորդագրություն | 4 |
| ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՆՈՒՍՏՅԱՆ—Աստվածաշնչական սուրբեր | 7 |
| ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ—Սուրբ Ռեթեոս Աթենացի, սուրբ Դիոնիսիոս Արիտպագացի և սուրբ Մեղրեստրոս հայրապետ Հոռմի | 15 |
| Ն. ԹԱՀՄԻՉՅԱՆ—Մովսես Խորենացին և հայ հին ու վաղ միջնադարյան երգար- վեստը | 25 |
| ՄԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ—Հայ արվեստի երախտավորը. Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան | 34 |
| ՄԱՅՐ ԱԹՈՂՈՒՄ—Եկեղեցական քեմ. լուրեր | 46 |
| Կուսակրոն քառամսյական ձեռնադրություն | 48 |
| ԿԱՐԱՊԵՏ ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՉԱՆՅԱՆ—Հուշադերթիկներ իմ «Հուշամատյանից» | 49 |
| Ազգաթանգեղոսի Պատմություն հայոց. Վարդապետություն սուրբ Գրիգորի | 58 |

**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՉՄԻԱԾԻՆ
«ԷՉՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտատրության 28.05.1979 թ.: Ստորագրված է տպագրության 27.06.1979 թ.:
Տպագրական 4 մամուլ, թուղթ 60x84¹/₈, պատվեր 469

Մայր Աթոռ և Էջմիածնի տպարան, 1979 թ.